

ԷԶՄԻԱԾԻՆ



1964





ՌՆԺԴ
ԻԱՏԱՐԻ
Յոպիս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Է

1964



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Պայծառակերպություն	էջ	3
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ		6
Սաւր էջմիածնի Հոգեւոր ձեռնարանի 1982—1983 ուսումնական տարեշրջանի տարեկերչի հանգիստությունը		8
Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա և Տանէ Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսներու պատմական ճաչադատումը		10
Խորհրդածություններ հաշտութենէն վերջ		13
ԱՄՆ-ի հայոց տեսչական և տեսչական թեմերի խորհրդակցական միացյալ ժողովը		16
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաքնորդական վիճակի 82-րդ տարեկան թեմական պատգամավարական ժողովը		17
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաքնորդական վիճակի նոգեւորակներու պատգամական համագումարը		19
ԱՐԱՄԱՅԻՍ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԱՍԱՅԱՆ— Հովվական այցելություն		20
Հայրապետական բարձր գնահատություն		26
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Պրոֆեսոր Վլադ Բընդեւեու		28
Խ. ԿԱՆԱՅԱՆ— Իմ հուշերը Գևորգյան հիմարտենից		36
ՎԱՐԱԳ ԱՌԱՋԵԼՅԱՆ— Գրիգոր Նարեկացու լեզուն և սեր		45
Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Ղազար Փարպեցու կենսագրութան մի հանի հարցերի շարքը		52
ԼՈՒՐԵՐ ՄԱՍՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ		60



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մար Արթուր Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Տ Ի Ր Ա Կ Ա Ն

Պ Ա Յ Ծ Ա Ռ Ա Կ Ե Ր Պ ՈՒԹ Յ ՈՒՆ

Տնօրինական տոների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Զրիստոսի Պայծառակերպության տոնը, որը ժողովրդական պատկերավոր արտահայտությամբ կոչվում է նաև Վարդավառ, Վարդևոր, որպես հայ հին հեթանոսական կրոնի վեցջամնացություն:

Զրիստոսի մանկության, երիտասարդական կյանքի ավետարանական հիշատակները մտնում են աստվածաճայանության նվիրված տոների մեջ, մինչ Փրկչի երկրավոր կյանքի տնօրինական դեպքերը՝ հանդիսավոր մուտք Երուսաղեմ, վերջին ընթրիք, մատնություն, չարչարանք, խաչելություն, թաղում, հարություն և համբարձում մտնում են հարության հիշատակին նվիրված տոների շարքի մեջ:

Այս տոների մեջ «բացառություն կկապմե միմիայն Այլակերպությունը, որ Պայծառակերպություն կոչվումով կտոնվի հատկապես» (Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, «Սուրբք և տօնք», Երուսաղեմ, 1929, էջ 289):

Հուլյն և Կաթոլիկ եկեղեցիները Պայծառակերպության տոնը (Մատթ. Ժ 1, Մարկ. Թ 1, Ղուկ. Թ 28) կատարում են օգոստոսի 6-ին, ի հիշատակ Թադոր լեռան վրա Զրիստոսի այլակերպության դեպքին:

Մեր Եկեղեցին, Հուսավորչին վերագրված կարգադրությամբ, Պայծառակերպության տոնը կատարում է օգոստոսի 11-ին, Հայոց տոմարի

աարեգլիսին, այսինքն Նավասարդ ամսի առաջին օրը:

Հեթանոս հայերը օգոստոսի 11-ը տոնում էին Աշտիշատում, հայկական հեթանոսության գլխավոր ուխտավայրում, իբրև նոր տարվա կամ ամանորի աշխարհախումբ հանդիսություն: Տոնը կատարվում էր համաժողովրդական ուրախությամբ: Մեր պապերը Անահիտ դիցուհուն վարդեր էին նվիրում, կարդարվում էին վարդերով և ծաղիկներով, աղավիններ էին թօցնում, միմյանց վրա ջուր էին սրսկում և օլիմպիական խաղեր կազմակերպում:

Վարդավառը և Նավասարդը հին հեթանոս հայերի ամենասիրելի և համաժողովրդական տոներն էին:

ԺԱ դարում, մեծ մտածող և հայրենասեր Գրիգոր Մագիստրոսը դեռևս ջերմ կարոտով, սիրով ոգեկոչում էր Վարդավառյան և Նավասարդյան տոների հի՛ն-հի՛ն հիշատակը, երբ գրի էր առնում Գողթան երգերի վերջին փջրանքները ժողովրդի բերնից. «Ո՛ տայր ինձ զծուխն ծխանի և զառաւօտն Նաւասարդի...»:

Պայծառակերպության տոնը մեր Եկեղեցում 551 թվականից ի վեր, Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի կարգադրությամբ, կատարվում է, Ջատկից շուրջ 100 օր հետո և նշվում է երեք օրերի հանդիսությամբ և մեր հինգ գլխավոր տոներից կամ տաղավարներից երրորդն է:

Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ «մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուն»-ն էր, որ հայկական հին Վարդավառի տոնը, իմաստուն շրջահայեցողութեամբ, փոխակերպում է Զրիստոսի Պայծառակերպութեան տոնին, չխափանելով միաժամանակ տոնի հին և սիրելի անունը՝ Վարդավառ, ինչպես նաև Վարդավառյան, Նավասարդական հին տոների հետ կապված ինչ-ինչ հայկական ժողովրդական սովորությունների, հանդիսությունների պահպանումը. ավելի գեղեցիկ և խոր իմաստավորում տալով տոնի քրիստոնեական նշանակությունը:

Պայծառակերպության տոնը լույսի հանդեսն է և հաղթությունը, հռչակված Թաքոր լեռան բարձունքի վրա:

«Թաքոր և Հերմոն լանուն քո . ցնծասցեն» (Ասղմ. 2Ը 13):

Տիրական է լեռների խորհուրդը կրոնների և ժողովուրդների պատմության մեջ:

Լեռները, բարձունքները խորհրդանշում են լույսը, տեսիլքը, ուժը, խոյանքը, վեհությունը: Այդպիսի լեռներ էին Ուիմպուսը, Պառնասը, Սինան, Հիմալայան, Արարատը:

Սրբազան լեռները միաժամանակ հանդիսացել են նաև պաշտամունքի առաջին սեղաններ: Հին ժողովուրդները լեռների բարձունքների վրա են ընդունել աստվածների առաջին օրհնությունները:

Բարձունքների վրա աստվածներն են խոսել, պատգամել. «Աստուած խօսեցաւ ի բարձանց, լուարուք բնակիչք երկրի»:

Արարատը, Արագածը, Սիփանը սրբազան, սեզ լեռները հայրենի, իրենց խոյանքով և մեր ժողովրդի պատմության հավերժության խորհրդով նստել են հայ զգայնությունների կենտրոնում:

«Որնելալ ըլլաք, ո՛վ լեռներ, օրորոցներ աղամանդ,

Ուր մեր պապերն առջի հեղ իրենց աչքերը

բացին,

Եվ վազրի մորթ մ'ուսերնուն իջան դաշտերն

արգազանդ,

Կրթեցին ելը լուծին»:

(Վ ա ր ա ժ ա ն)

Զրիստոսի երկրավոր կյանքն էլ անցավ լեռների բարձունքների վրա, առանձնության, խոկմունքների, տեսիլքների ծոցում, վեհության և խոյանքների մեջ:

Ավետարանի ճարտվարությունը բացվում է երանության լեռան անկրկնելի, հովակապ ճարտվով:

Այնհամեմատ փորձության լեռ, լեռ պայծառակերպություն, լեռ խաչելության, լեռ հաճախման:

Թաքոր լեռան վրա Զրիստոսի պայծառակերպությունը աղոթքի և ինքնամոխիման ժամերին, հանդիսանում է շատ կարևոր քալ Փրկչի հետագա գործունեության ճանապարհի վրա:

Թաքոր լեռան բարձունքին, երեք աշակերտների՝ Պետրոսի և Որոտման որդիների մտերմության մեջ, Փրկչին աղոթում է միայնակ, մեկուսի, անձնատուր իր կոչման, իր մեծ գործի խոկումներին. «Լուսավորվելու համար իր պարտականության պզգցումով: Ինքնամտածով այս րոպեն հոգիին պայծառակերպության պահն է» (Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, «Սիրոն», 1933 օգոստոս):

Զրիստոսի պայծառակերպությունը, ըստ Ավետարանի վկայության, կատարվում է Թաքոր լեռան վրա: Աղոթքի թևերի վրա, հանկարծ Փրկչի դեմքը փայլում է ինչպես արեգակը, Նրա զգեստները պայծառանում են ինչպես ծլուկը, որ փայլում է արևի տակ, ջինջ, ինչպես ոչ մեկ նկարիչ կկարողանար նկարել կամ երևակայել:

Լեռան բարձունքին, ծլան սպիտակության, պայծառության մեջ, հոգեկան, ավելի հզոր աստվածային մի պայծառակերպություն:

Հիսուսի աղոթող հոգին, լույս դեմքը, աղոթքի այդ վերացման րոպեն, կրակ է, արև, սեր է և նվիրում: Նրա կողքին՝ կրակի և լույսի երկու մարգարեներ՝ օրենսդիր Մովսեսը և Նախանձախնդիր Եղիան, որոնք վկաներն են Թաքորի և Հերմոնի բարձունքին վրա փայլատակող Լույսին, հավերժացող կյանքին և ճշմարտության:

Վերջին անգամ է, որ պատմության բնմի վրա երևում են Մովսեսն ու Եղիան և անցնում հավիտենականության գիրկը: Աշխարհն այլևս կա՝ փոխանականության գիրկը: Աշխարհն այլևս կա՝ առաջնորդի Թաքոր լեռան վրա հայտնվող սիրո, արդարության գաղափարներով և լույսով: Թաքորի բարձունքին՝ լույսի հեղեղ, լույսի հանդես, և լուսավոր ամպի միջից, աստվածային ծայնը բերում է աշխարհին Նոր վկայություն՝ «Դա է Որդի իմ սիրելի, դմա լուարուք»:

Թաքոր լեռան բարձունքին՝ լույս, արև և կյանք: Թաքոր լեռան վրա, ինչպես շարականագիրն է գրում, «Էջք Աստուծոյ և դուռն երկնից ի նմա»: Իսկ սրբազան լեռան ստորոտում՝ մարդկային անհուն վիշտ, տառապանք, հիվան-

դություններ, կարիք և ցավ: Փրկիչը, կրկին լուսավորված աստվածային լույսով և Իր առաքելության գիտակցությամբ, իջնում է երկրորդ անգամ մարդկանց մեջ՝ եղբայրանալու նրանց վշտին և տառապանքին, և Իր փրկագործությամբ մարդկանց բարձրացնելու դեպի պայծառության լեռը, Աստուծո որդիության գաղափարը:

Թաքոր լեռան բարձունքի վրա, առաջին անգամ Զրիստոս մարդու համար բաց է անում երկնքի փակված դռները և մարդկանց դարձնում է որդի և ժառանգ Աստուծո:

Թաքոր լեռան պայծառ լույսերի մեջ, դժգուխում է Հին Կտակարանը, փակվում է մարդկության պատմության հին էջը, վերջ է գտնում մարդու անկումը և լույսերի մեջ հայտարարվում է Նոր Կտակը՝ «Սիրեցէ՛ք Վիժնանս»:

Թաքոր լեռան բարձունքների վրա փայլատակող լույսն իջնում է կյանքի մեջ՝ լուսավորելու և փրկելու համար մարդկության:

«Համբարձի պաշս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»:

Աստուծո, ընկերոջ և անձի սիրո մեջ է որ պայծառակերպվում են մարդու հոգին, միտքը և խորհուրդները:

Մարդկային հոգու պայծառակերպություն, ահա՛ էականը:

Մարդու հոգին պայծառանում է Աստուծո, ընկերոջ ծառայությամբ և սվիրումով: Ծառայության, սվիրման խորհուրդներով լուսավորված գիտակցությունն է մարդու Թաքոր լեռը, նրա հոգու պայծառակերպության փրկարար պահը:

Պարտականության սերը, կոչման գիտակցությունն է, որ կատարելագործում են, պայծառակերպում մարդուն, որպես անհատ, որպես համայնքի անդամ, որպես Աստուծո պատկերով ստեղծված արարած:

Ահա՛ Պայծառակերպության տոնի դասը և պատգամը:





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 4-ին, ճինգզաբբի, Հոգևոր ձեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմի գլխավորությամբ, ուխտի գնաց Ս. Գեղարդի վանքը:

Հունիսի 4-ին, ճինգզաբբի, Մայր Տաճար այցելեցին Մոսկվայում սովորող օտարերկրացի մի խումբ ուսանողներ, Բուլղարիայից Հինգ արվեստագետներ, Ճապոնիայից մամուլի մի խումբ աշխատողներ, Պրագայի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի աշխատակիցներ:

Հունիսի 4-ին, ճինգզաբբի, ութամսյա երկար, ժանր հիվանդությունից և վիրաբուժական գործողությունից հետո ապաքինված, վեհափառ Հայրապետին այցելեց Գերագույն Հոգևոր երկրորդի հնազանդն անդամ պրոֆ. Պոկտ. Առաքել Առաքելյանը:

Քեջմիածինն ամսագրի խմբագրությունը, ինչպես վեհափառ Հայրապետի, իր խնդակցությամբ հայտնելով հարգելի պրոֆեսորի ազգաբնիման ուրախ առիթով, նրան քաջաժողովություն է քարեմաղթում:

Հունիսի 7-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Ս. Մուշեղ վարդապետ Պետիկյանը:

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին ներկա էին նաև մի խումբ «ուսման հայ ուխտավորներ»:

Հունիսի 7-ին, կիրակի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին մի խումբ հույն ժուռնալիստներ, բժիշկներ և ինժեներներ, որոնք ընդունվեցին նաև վեհափառ Հայրապետի կողմից:

Ավելի ուշ Մայր Տաճար այցելեցին նաև ՅՈՒՆԵՍԿՈՒ-ի քարտուղար պր. Իոժե Կեյվանը և իր հարգելի տիկինը:

Հունիսի 13-ին, շաբաթ, «Գիւտ Նշխարաց Սրբույն Գրիգորի Լուսաւորչին մերոյ» Մայր Տաճարում, իշման Ս. Սեղանի առաջ, պատարագեց արժանապատիվ Ս. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

Հունիսի 13-ին, շաբաթ, Մայր Տաճար այցելեցին մի խումբ լեհ ճարտարապետներ, պրոֆեսիոնալ ղեկավարներ Հարավսլավիայից և Մակեդոնիայից, ինչպես նաև ժուռնալիստների մի խումբ ԳԳՌ-ից:

Հունիսի 14-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝ «Հովութին հակողի» ճշմարիտ և քաջ հովնի պատկերին՝ հովութն եղեն հետևողք, զոր ամփոփեցին ղմարմինս մեր ի յայն Մանեայ շարականի խոսքերի քնարանով:

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին ներկա էին նաև րազմաթիվ ուխտավորներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Հունաստանից:

Հավարտ սուրբ պատարագի, ուխտավորները ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից Վեհադատում:

• •

Հունիսի 14-ին, կիրակի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին մի խումբ չնիս և դերմանացի (ԳԳՌ-ից) արվեստագետներ և այլ հյուրեր:

• •

Հունիսի 17-ին, չորեքշաբթի, Մայր Աթոռի միաբանությունը միօրյա պտույտի մեկնեց դեպի Արագածի լանջերը:

• •

Հունիսի 17-ին, չորեքշաբթի, կեսօրից հետո Վեհափառ Հայրապետին այցելեց ուխտավորարար Մայր Հայրենիքում գտնվող Երիտասարդ կինոռեժիսյոր Հայկ Մարտիրոսյանը, Պրադայից:

• •

Հունիսի 18-ին, հինգշաբթի, «Տան սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպ-րայ»:

Առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ժեմարանի ուսանողությունը ուխտի դնացին Օշական՝ Ս. Մեսրոպի շիրմին, որտեղ ժամը 11-ին, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում, սուրբ պատարագ մատուցեց և քարուղեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը՝ «Նմանեալ Մովսեսիս շարականի բառերի ընթացում»:

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Վահան Ամատունի հայ իշխանի, հայ մշակութի և դպրության բոլոր վաստակավորների և Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու վերանորոգության բարերարներ Ղազարոսյան գերդաստանի նշանցյալների հիշատակին:

• •

Հունիսի 21-ին, կիրակի, «Գիւտ տփոյ Ս. Աստուածածեհո՛ւ Մայր Տաճարում պատարագեց և քարուղեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերքերյանը՝ «Արդ, ո՞վ մեկնեացէ դմեզի սիրոյն Քրիստոսիս ընթանով»:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

• •

Հունիսի 23-ին, երեքշաբթի, Մոսկվա մեկնեց Պրադայում գումարվելիք Սկեդեցիների Դամաշխարհային համաքրիստոնեական խաղաղության համաժողովին մասնակցող Հայ Սկեդեցու պատվիրակությունը, որի կազմումն են գերաշնորհ Տ. Պարզ եպիսկոպոս Գեորգյանը (պատգամավորության ղեկավար), Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանը, Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պայլանը, Մայր Աթոռի գիմնական Հայկ Առաքելյանը և ռեժիսոր ժին» ամսադրի խմբագիր Արթուր Հատիրոսյանը:

• •

Հունիսի 28-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը և քարուղեց ժեթէ որ ծառայի իցէ, եկեցէ առ իս» ընթանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
1962—1963 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐԶԱՂ
ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 4-ին, հինգշաբթի, հետմիջօրեի ժամը 2-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսարանում, վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Ճեմարանի 1963—1964 ուսումնական տարվա ամառվերջի հանդիսությունը:

Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր հորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՏ պետական հիմնի նվագով և Հոգևոր Ճեմարանի քայլերգով:

Հոգևոր Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանի բացման խոսքից հետո, Ա լսարանի ուսանող Հակոբ Տուռնոյանը արտասանում է վարուժանի ճեմանքը, Բ լսարանի ուսանող Եղիշ Բաղրամյանը՝ Ա. Իսահակյանի «Հայրենիքիս»-ը, Ա լսարանի ուսանող Գրիգոր Բունիաթյանը՝ Միլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն»-ը և Բ դասարանից Հովսեփ Հակոբյանը՝ Ա. Իսահակյանի «Էն» ջան հայրենիք»-ը ուսանորդներին:

Հոգևոր Ճեմարանի երգախումբը կատարում է «Խաղաղության քայլերգ», «Ջան հայրենիք» և Կոմիտասի «Գարուն առ, խմբերգեր»:

Հանդիսության երկրորդ մասում երգախմբի «Որք դարդարեցին» Թարգմանչաց շարականի կատարումից հետո, Բ լսարանի ու-

սանող բարեշնորհ Ժիրայր սարկավազ Գալփաթյանը, հանուն ուսանողության, ընթերցում է հետևյալ ուղերձը.

«Օգնականությամբ Աստուծո և Ձերդ Ս. Օծություն աղոթքներով, բոլորեցինք Հոգևոր Ճեմարանի 1963—1964 ուսումնական տարեշրջանը»:

Ուրախ ենք մենք՝ ուսանողներս, որ կարողացանք անցած ուսումնական տարեշրջանում հարստացնել մեր միտքը ուսմամբ և գիտությամբ և ազնվացնել մեր հոգին բարոյական և հայրենասիրական զգացումներով:

Սրտաբուխ և անկեղծ է մեր որդեակներախոսագիտության խոսքը՝ ուղղված Ձերդ վեհափառության, Դուք, որպես Հայր և մեծ Ուսուցիչ, այս տարի էլ Ձեր օրհնությունների հետ մեկտեղ, Ձեր դասախոսությունների միջոցով, հաճախ մեզ խրատեցիք, ցույց տալով ճշմարիտ, առաքինի մարդու ուղին: Մենք ուսանողներս, մեր սրտերում վառ ենք պահել և պահելու ենք ազնվության, առաքինության և հավատի ու նվիրման բոցը, որի կայծը, որպես անշեղ կրակ, տակավ առ տակավ ստացել ենք Ձերդ վեհափառությունից:

Այս առթիվ մեր շնորհակալական խոսքն ուղղվում է նաև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Հայկազուն արքեպիսկոպոսին, որ այժմ հեռու է մեզանից հայրենանվեր և ազգաշեն առաքելությամբ, բայց նրա հոգին միշտ ներկա է մեր մեջ:

Ձեռք կարող մեր երախտագիտական զգացումները չհայտնել նաև մեր անմիջական

դաստիարակներին՝ վերակացու Տ. Հովհան-
նես քահանա հոր և ողջ ուսուցչական կազ-
մին, որոնք ամբողջ ուսումնական տարն-
ընթացում հանդիսացան ժիր մշակներ, բարի
սերմեր ցանկնով մեր մտքի ու սրտի անդաս-
տաններին վրա:

Մեր ջերմ շնորհակալական խոսքը նաև
Մայր Աթոռի միաբանության անդամներին,
որոնց հետ միասին ապրում ենք նույն հարկի
տակ, աղոթում նույն սեղանների առաջ,
միշտ ձգտելով նմանվել նրանց առաքինի և
աթոռանվեր կյանքին ու գործունեությանը:

Հանուն ուսանողության, համբուրում եմ
Ձեր Ս. Ալքը, հայտնելով ամենաանկեղծ
երախտագիտություն և շնորհակալություն,
որպես տրիտուր Ձեր անսահման հոգատա-
րության և ուշադրության համար, որոնցով
շրջապատել եք Հոգևոր Ճեմարանը:

Հոգևոր Ճեմարանի 1963—1964 ուսումնա-
կան տարվա տեղեկագիրն ընթերցում է Գե-
րազույն Հոգևոր հոգհրդի անդամ և Ճեմա-
րանի դասախոս գերաշնորհ Տ. Ասողիկ եպիս-
կոպոս Ղաղարյանը, ի բացակայության
տեսիլ:

«Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ, մեր բո-
լորին սիրելի գերաշնորհ Տ. Հայկազուն արք-
եպիսկոպոս Արաբազյանի կարևոր առա-
քելությամբ Հնդկաստան և Հնդկավոր Արևելք
մեկնելով, ինձի կվիճակվի այսօր տալ այս
հակիրճ զեկուցագիրը:

Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանը այսօր
կրուրդն իր նոր շրջանի 19-րդ տարին:

Հոգևոր Ճեմարանը, իր վերաբացումն
ասդին, իր վրա կհրավիրե մեր ամբողջ աղ-
գին ուշադրությունը, աստ և ի սփյուռն աշ-
խարհի: Դարավոր այս պատկառելի հաստա-
տությունը էղած է լուսի մեծագույն վառա-
րանը, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի օրերին
մինչև մեր օրերը, որ լույս ու ջերմություն
սփռած է մեր ազգին վրա բոլոր անցնող դա-
րերուն մեջ ու դեպի իրեն բեռնած է բոլո-
րին ուշադրությունը, իրեն ամայր ամենեցուն
և շտեմարան անշիջանելի լուսոյա: 1500
տարվան ժառանգություն մըն է, սրբազան
ավանդ, որ դարերու խորքերն, իրեն լուսի
սյուն, կերկարի մինչև մեր օրերը, մինչև Ձերդ
Վեհափառության լուսավոր ժամանակը:

Ճեմարանը կարևոր պարտականություններ
ունի կատարելիք, հոգևոր մշակների պատրաս-
տելու համար ամբողջ աշխարհի վրա ցրված
մեր ժողովուրդին ու եկեղեցիներուն, իրեն
գլուխը և սիրտը մեր եկեղեցիին:

Վերջին երկու տարիները ապրելով Ձերդ
Վեհափառության մոտ և հաղորդվելով Ձերդ
Վեհափառության բարձր ձգտումներուն այդ

ուղղությամբ, վստահ եմ, որ Ձեր բարի նպա-
տակները պիտի պսակվին հաջողությամբ, և
հառաջիկա տարին մեր Ճեմարանին համար
պիտի ըլլա նոր ծրագիրներու և նոր հաջողու-
թյուններու ոգևորիչ շրջան մը, որպեսզի այս
Ճեմարանը դառնա իդեալական հոգևոր հա-
մալսարան մը, իր տեսակին մեջ ըլլա առա-
ջինը և բարձրագույնը և դեպի իրեն հրապու-
րե աշխարհի ամեն կողմերեն ընդունակ ու
մտացի երիտասարդներ, որոնք կոչում ունե-
նան ծառայելու մեր եկեղեցիին, հայրենի-
քին ու ժողովուրդին:

Այնուհետև սրբազանը, համառոտակի ներ-
կայացնելով Ճեմարանի ներքին, հոգևոր, ե-
կեղեցական, կրթական, դաստիարակչական
կյանքը և շեշտելով ուսուցչական կազմի
նվիրված աշխատանքը, եզրակացնում է.

«Մեր հուսկ շնորհակալությունները և ե-
րախտագիտությունը կհայտնենք Ձերդ Վեհա-
փառության այն անխոնջ ջանքերուն և զոհո-
ղությանը համար, զորս կտածեք այս Հոգևոր
Ճեմարանին հանդեպ, նյութապես ու բարո-
յապես սատարելով անոր շարունակական
բարձրացման և տեսականացման համար:
Շատ մոտեն կհետաքրքրվիք անոր ներքին
բոլոր խնդիրներով, ուսանողներուն ոգեշնչե-
լով տեսիլք դեպի իրենց գործն ու կոչումը:
Շնորհակալություն նաև մեր հայրենի կա-
ռավարության, որ գյուրություն կընծայն
Հոգևոր Ճեմարանի կարիքներուն:

Շնորհակալություն Մայր Աթոռի միաբա-
նության մեր հոգևոր եղբայրներուն, որոնք
իրենց բաժին մասնակցությունը կերեն Ճե-
մարանի ուսումնական, վարչական և հոգևոր-
բարոյական դաստիարակության գործին:

Շնորհակալություն նաև Ճեմարանի այն
ազնիվ բարերարներուն, բոլորն ալ հավա-
տավոր և տեսիլք ունեցող հոգիներ, որոնք
հեղին կամ մոտեն կհետաքրքրվին արդա-
րօքն այս հաստատության գոյությամբ և
գործունեությամբ ու սիրով կերեն իրենց
բարոյական քաջալերությունը և նյութական
օգնությունը, որպեսզի լուսի և գոյության
այս կաճառի դռները միշտ բաց մնան:

Իր զեկուցագրի վերջում Ասողիկ սրբազանը
հրավարակում է ընթացիկ ուսումնական
տարվա շրջանում ուսման մեջ առաջին և
երկրորդ հանդիսացողների անունները. առա-
ջիններն արժանանում են մրցանակի:

Հանդիսության վերջում օրհնության խոսք
է ասում Վեհափառ Հայրապետը:

«Էջ Միածինն ի Հօրէ շարականի երգեցո-
ղությունից հետո, Հոգևոր Ճեմարանի ամա-
վերջի հանդեսը վերջանում է «Պահպա-
նիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԵՎ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄԸ

Առանձին հանույթով և մեծ կարեւորությամբ տրտառապում ենք Երեսնյանի հայոց Պատ-
րիարքարանի պաշտոնաթերթը «Սիոն» ամսագրի 1983 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր
միացյալ համարի խմբագրականից հաղվածաբար ընդարձակ հատվածներ, ստորագրված ամե-
նապատիվ Տ. Եղիշի սրբազան պատրիարք հոր օսկեղիներից գրչով, ինչպես նաև Հարավային Ամե-
րիկայի Հայաստանյայց եկեղեցու կենտրոնական վարչության պաշտոնաթերթը «Հայ կեդրոն»
ամսագրի 1984 թվականի հունվարի-համարի խմբագրականից հատվածներ, ստորագրված հայ-
րապետական պատվիրակի գերաշնորհ Տ. Քարգեն Եղիսկյանից Ապառանի շնորհալի գրչով:

Երկու արձանագրություն և կուս խմբագրականներն էլ գրի են առնվել սրտագին մտածումներով,
դացառիկ ջերմությամբ, ուղիւս արտահայտելով բովանդակ հայ մարդկային խոհերի, մտած-
մունքների և իդերի, 1983 թվականի հոկտեմբերի 28-ին Երեսնյանի կառավարված պատմա-
կան ողջագուսման նշմարիտ, Եկեղեցաշին լույսի տակ, որը կաղված էր խաղաղություն և միու-
թյուն հաստատելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ծոցում և հայ մարդկային մեջ:

Խմբագրության «Էջմիածին» ամսագրի

Ուրախ է երեսնյանի Սրբոց Հակոբյանց
Աթոռը և իր պաշտոնաթերթը «Սիոն», հայ-
տարարել կարենալու, իր կարգին, այն
սրտառուղ դնալը, որ տեղի ունեցավ երկու
ամիսներ առաջ քրիստոնեական այս վեհա-
վայրին մեջ, Ուրախ է մանավանդ Հայ եկե-
ղեցին և ժողովուրդը ի Հայաստան և ի
սփյուռուս աշխարհի, ի տես և ի յուր պատմա-
կան այս ողջագուստման, ուր մեր դարերու և
հայրապետներու հոգիին ավայն ու տրո-
ւիտեն էր որ լավեցավ, անգամ մը ևս, քաղցր
և անպղտոր, Ս. Էջմիածնի և Կիլիկիո կաթո-
ղիկոսներու գրկախառն այս նոր ուխտով:

Ոգի և հրաշք է ամբողջապես Հայ եկեղե-
ցին, և հրաշագործներ զինքը ներկայացնելու
կանչված հայրապետները, ինչպես երեկ այն-
պես ու այսօր, Այդ հրաշքին ու ոգիին լույսն

ու շունչն էր, որ Թրթռաց հոկտեմբեր 26-ին,
մեր զույգ կաթողիկոսներու սրտերուն խորը
և շրթներուն վրա, Երեսնյանի Սրբոց Հա-
կոբյանց մենաստանի կամարներուն ներքև
և ներկա հայ ժողովուրդի հոգիներուն մեջ,
Արժևորել կարենալու համար այդ հոգեսար-
սուտ ձայնը, անհրաժեշտ է զգալ զայն, լռեց-
նելով մեր մեջ այն բոլոր խեղ և օտարոտի
զգացումները, որոնք տարիներ ի վեր Կառ-
նացնեն մեր եկեղեցական ու ազգային կյան-
քը, անիմաստ պայքարի կրկես դարձնելով
արտասահմանի մեր գոյությունը:

Վերջ՝ ամեն տեսակի հոռետեսությանց և
մեր պատմության սրտառուղ խորհուրդը հեր-
ցող մոլար ձգտումներուն, իրագործումը
պետք չէ նկատվի կողմնակի շահերու ահ-
պարար ցուցադրություն մը լուկ, տեսակ մը

քաղաքական ձեռնածույթյուն, որոնց հանդիսատես կրկնաքանակ էր: Կուլանք հավատալի, թե տեղի ունեցածը սրբազան դաշինք մըն էր, հավատքով ու սիրով լեցուն, նման երանյալ մեր մեծ հայրապետներու դարավոր փորձին, որոնք դիտցած են միշտ ներկայի մշուշներեն և տրամաթյուններեն անդին՝ տեսնել մեղի հատուկ ճշմարտությունը, և ունակութիւնով ամեն կարգի արգելքներ, նախած են հասարակաց բարիքի այդ լուսաստղին, բոլորապիւնդ ու վճռական:

Հայ եկեղեցին միշտ ձգտած է միասնականութեան, հակառակ մեր պատմութեան ծանոթ ցավին, անմիաբան ըլլալու հիմնական, որ մայրն է եղած բոլոր շարիքներուն: Միութեան մեջ միայն մենք կրցած ենք, թեթևի և սիրտ-սրտի, ստեղծել քաղաքի դրախտը հոգիներուն, օրհնելով հիշատակը մեռելներուն և շինելով հպարտութիւնը ողջներուն:

Շնորհիւ այդ ոգիին և սկզբունքին է, որ Հայ եկեղեցին կրցած է գոյատևել և դիմադրել անցյալի շարադուս փոթորիկներուն և ներքին ու արտաքին պառակտիչ ուժերուն: Ժիշտ է, թե մեր պատմական դարավոր կյանքի մեջ եղած են շրջաններ, ուր փառասեր և ներհակ մտայնութեան տեր անձեր՝ ճիշդ ու եսական հաշիվներն տարված, դաված են այս սկզբունքին ու զաղափարին, սակայն հանրային շահը և մեր ժողովուրդի խղճմտանքը ըրած են միշտ իրենց գերագույնը, վերցնելու հասարակաց բարիքին դեմ եղած շեղումները՝ ի նպաստ միութեան:

Մեր եկեղեցւոյ բազմաբախտ գործիչները ոսկի օղակը եղած են նույնպէս մեր պետական ու հանրային կյանքին մեջ տեղի ունեցող պառակտումներուն, և իրավախոհութեամբ հարգարել փորձած են ամեն տեսակի շեղում և անհասկացողութիւն, որոնք մեր երկրի աշխարհագրական դիրքի և քաղաքական պարտադրումներու պատճառով, հաճախ անջատած են մեզ իրարմէ, ի հեճուկս մեր ազգային ամբողջական շահերուն:

Մասնավորելով մեր խոսքը Հայ եկեղեցիի և իր այժմու Կաթողիկոսական զույգ Աթոռներու փոխհարաբերութեան նկատմամբ, այն օրեն ի վեր, երբ մեր հոգևոր իշխանութիւնը Սիսն Ս. Էջմիածին վերադարձավ, միասնականութեան գաղափարը ոչ միայն ընդլայնվ, այլ ավելի շնչուկեցավ: Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին զուգահեռ գոյութիւնը շնկատվեցավ իբրև հակաթոռ Ամենայն Հայոց Հայրապետութեան, այլ անոր անբաժանելի մասը և ռմանդակը, Կիլիկիոյ մեր ժողովուրդի հովիւութեան և առաջնորդութեան մեջ:

Ժիշտ է, որ թե՛ Կիլիկիո և թե՛ Ս. Էջմիածնի գահակալներու մեջ եղած են անհատներ,

որոնք, առաջնորդված իրենց տրամափառութիւններէն, հակառակ շարժած են մեր եկեղեցիի և ժողովուրդի հոգին առողջ պահող ուժին և միութեան: Ասոնք սակայն ընդհանուր զգացումն և հասկացողութենէն շեղած անհատներ եղած են միայն, և իրենց տխուր արարքը պայմանավոր մնացած է լոկ իրենց շրջանով: Առանց խախտել կարենալու Հայ եկեղեցւոյ համերաշխութեան ոգին և համագործակցութեան բնական ընթացքը:

Մեր մեծ աղետն հետո, Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց և Կիլիկիո տարադիր Կաթողիկոսական Աթոռներու միջև սանդղակեցավ անկեղծ և սերտ գործակցութիւն մը, նախ իբրև շարունակութիւն իրիմյան և Սահակ եկեղեցանւմեր և լուսամիտ կաթողիկոսներու սկսած սիրալիր հարաբերութեան, ապա իբրև արդյունք համազգային աղետին, որ զրկելով արևմտահայութիւնը իր պատմական հայրենիքէն և մեկ միլիոն դավակներէն, կզրկեր նաև մեր եկեղեցին իր գոյութեան կուսնէներէն: Այս տխուր պարագան իր անգրագարձը կունենար նաև մտքերու վրա, և ժառանգական ու ավանդական կարծեցյալ հավանութիւնները, ինչպէս նաև անպարագիծ երազները կթանդարանվէին պահ մը, և հայ ժողովուրդի վտիտ մարմին մասերը իրենց ֆիզիկական և հոգեկան գոյութեան ի խնդիր կմիավորվէին, զգալով համերաշխութեան և միութեան կարիքը: Հայ եկեղեցին անգամ մը ևս պիտի յիշէր իր պատմական գերին, պիտի հավաքեր, պիտի սփոփեր, պիտի հուսադրեր և ժողովուրդի ծառայութեան հույ մը անձնադրհներ ի սպաս պիտի դնէր մեր եկեղեցւոյ դարավոր այդ դերի իրագործման, պատրաստելու իր փրկութեան տապանը հարուցված և դալիք մորիկներուն դեմ:

Ս. Էջմիածնի և Կիլիկիոյ Աթոռներու միջև գոյութիւն ունեցող հարաբերութիւնները ավելի անկեղծ և սերտ բնույթ ստացան Բարգեն Աթոռակից և խորեն կաթողիկոսներու որով: Իսկ այդ հարաբերութիւնները իրենց բարձրագոյն աստիճանին պիտի հասնէին Գևորգ Զ Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Կաթողիկոսի շրջանին: Երկու Աթոռներու միջև գոյութիւն ունեցող կապը զոգված է ազգային և եկեղեցական միասնականութեան բարձր գաղափարներով, և ամրացված դարերու ողջամիտ ձգտումներով:

... Սակայն Ս. Էջմիածինը ուրիշ խորհուրդով և ձգտողութեամբ կներկայանա մեր հոգիներուն: Մայր Աթոռը կրօնական նվիրապետութեան մը կեդրոնը չէ միայն, անկապ հայտն հոգեկան հայրենիքն է, իմանալի այն պարունակը, զոր յուրաքանչյուր ժողովուրդ ունի և կստեղծէ իբրև գերագույն ամբողջ ոչ միայն իր անցյալին, այլ մանավանդ ուսպա-



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՏՈՒԹԵՆԵՆ ՎԵՐՁ

«Սիրեցեք զսիրմանս լինչպէս և ես սիրեցի զծնեցաւ»:

ՀԻՍՈՒՍ

Պատմական դեպք մը արդարեւ հաշտութիւնը, որ անցյալ տարւոյն հոկտեմբեր ամսու 26-ին կնքվեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհադարձ Կաթողիկոսին միջև, հաստատելով խաղաղութիւնն ու միութիւնը Հայաստանայայց Ս. Եկեղեցւոյ մէջ, որ կապկսեին անոր վերջին ավելի քան յոթ տարիներու շրջանին:

Սրտապնդիլ իրողութիւն մը նաեւ, բոլոր անոնց համար, որոնք իրապես և խորապես տառապեցան Եկեղեցւոյ մէջ ստեղծված քաժանութիւն պատճառով, որովհետեւ դայն արդարորեն նկատեցին, իրավ մտաւախութեամբ, մեր ազգային կյանքին համար, վտանգավոր կացութիւն մը: Յոթ տարիներու տարակարծութեանց, վեճի, երկպառակութեան հետևանքներդ ամենին ավելի կրեց հայ դանդաղած Բեյրութի մէջ, որ ամենին մոտեցէր Կիլիկիան պատմական ու գարեփուր Աթոռի պանդխտական նոր կայքին, Անթիլիասին:

Չենք կրնար պնդել, որ եղբայրասպան և եղբայրադավ տրամադրութիւններ ծնունդ առին այն օրին, երբ վեճը սկսավ Եկեղեցիին մէջ: Նվազագույն միամտութիւն պիտի ըլլար այդպէս մտածել: Ավելի ճիշտ պիտի ըլլար ասել, որ հայ ոգիին, մտածումներուն և նպատակներուն և զանոնք հասկնալու և իրականացնելու կերպին տարբերութեանց բախումին արդիւնքն էր նույնիսկ տխուր կացութիւնը, որ ստեղծվեցաւ Եկեղեցիին ներս: Այդ դայրութիւն էր հակառակութեանց, որ իր գագաթնակետին հասավ այն օր, երբ ցցվեցաւ եղբայր եղբոր դէմ, ու հոսեցաւ արյունը հում պետս:

Մեր հանցողութեամբ մեր ժողովուրդը իր բացառիկ, եղանկի կացութեան հարմար ճամբա մը պետք է ընտրեն աշխարհի ներկա քառ-

սային դրութեան մէջ: Միշտ է, որ զժպար էրեն յայդ: Առանձնապէս քաղաքականութիւն մը ունենալ, երբ այլապէս մեր ժողովուրդի բեկորները կապրին այլազան և այլաձև երկիրներու մէջ, բնականորեն ենթակա յուրարանչութիւն քաղաքական ուղղութեան և գաղափարաբանական դավանութեան: Այդ բոլորն զուրս, առանձնահատուկ հայկական քաղաքականութիւն մը վարելու հարցը կմնա զժպարին իրադրութեամբ մը, բայց չի գաղբիր ըլլալն հրամայական պահանջք մը, մեր ժողովուրդի ներկան և ապագան կարենալ հասակորեն ճշտելու և ամրացնելու համար:

Այս տեսակետին հոկտեմբեր 26-ի դեպքը, երջանիկ ողջագործումը Հայաստանայայց Առաքելական Ս. Եկեղեցիի նվիրապետական բարձրագույն Աթոռներուն Պետերուն, կստանա բացառիկ և կարևոր նշանակութիւն: Կար վստահութեան պակաս մը անշուշտ, որ կծագեր հոգեկան այն վիճակին, որ աշխարհի ներկա կացութիւնը կարարագործ բոլոր ժողովուրդներու: Ու մանաւանդ մեզի պէս ժողովուրդի մը, որ հաստատուն կովան մը չունի իր դրութիւնը ապահովելու և տեական տառապանքին մեջն է խարված, անիրավված, մոռցված ըլլալու գառն հոգեկան ապրումներուն: Բայց ո՞չ մեկ ժամանակ զժպարութեանց մեջն ելլելու կերպն է վիճիլ և հակառակիլ իրարու հետ, երբ տրամաբանական պահանջքն է ուժերու միացում, հաղթահարելու համար խոչընդոտները փրկութեան ճամբուն վրա: Բաժանումը տկարութիւն կստեղծեն անտարակույս, շրջելով բանաձևված ճշմարտութիւնը—միութիւնը գործութիւն է: Ու քաժանումը, որ կստանա խորանալ Եկեղեցիին մէջ, մեկ անդամն շրջաւ Հայրապետներու ողջագործմամբ: Ահապատիկ թն ինչու շատ իրավունքով ուրախութեան խո-

րունկ ալիք մը անցավ բոլոր հայ սրտերեն, երբ արձագանքեց Հայրապետներու հանդիպման լուրը ծագե ծագ Հայ միությունը:

Այս կնշանակելու, որ ամեն ոք կսպասեր այն բարեգեպ օրվան: Ոչ մեկ հոգի ե ոչ մեկ կողմ կհամարաւորէր, որ զոհ էր իրաց վիճակին: Անոր ապացույց յոթ տարիներու ընթացքին թափված ճիգերն ու ջանքերը այդ մեծանցումը իրականացնելու համար սրտցավ ազգայիններու և հասարակական ամեն կարողություններու և հասարակական ամեն շէ, զի գործիչներու կողմին: Առաջին անգամ չէ, որ վեճ կծագեր մեր եկեղեցւո մեջ պատմութեան ընթացքին: Ունեինք դասերը նախորդ տխուր իրադարձութեանց, որոնց անդրադարձը մեր եկեղեցական ազգային կյանքին վրա հիմա գոհունակութեամբ չէ որ կհիշվի: Այդ կացութիւնները ստեղծողներն այն ենթարկված են պատմութեան դատաւարտութեան: Այդ այդպիսի ըլլալով հանգերձ, ամբողջ ժողովուրդով գիտակցելով իսկ ներքին վեճերու հառաջացուցած վտանգներուն, կզրնենք տակալին նույն սխալը ազգովին: Թերութիւն մը, որ շատ սուղ է արժած մեզի: Այդ թերութիւնը սրբազնիւ աշխատանքը կվերաբերի ազգին կրօնական, հասարակական, քաղաքական կյանքը առաջնորդելու կռիված մարդերու: Զույգ կաթողիկոսներու հայտնաբերած ողին այս տեսակետով այլ լավագույն օրինակը պիտի ծառայէ մեզի: Միութիւն ստեղծելու, համագործակցութիւն հաստատելու, ազգային մարդաբանութեան և բարոյական ծագեցալ, կխորհինք, հաշտութեան բարերար և պայծառ խորհուրդը Ամենայն Հայոց մեծագործ և վեհոգի Կաթողիկոսին՝ նորին Ս. Օծութիւն Տ. Ս. Վաղգնէ Ա-ի մտքին մեջ, որ նախաքայլը առավ հանդիպելու Մեծի Տանն Եփրեմի Կահնապետ Հայրապետին՝ նորին Ս. Օծութիւն Տ. Ս. Խորեն Ա-ի, երեսօղեմի մեջ, ուր գացած էր հուլիս և հերկապագութիւն սրբավայրերու և առաջնորդելու աշխատանքները Ս. Հարութեան մեծագույն քրիստոնեական Տաճարին նորոգութեան, նախադահելով համազգային կեդրոնական հանձնախումբի ժողովներուն: Եթե աղգին և եկեղեցիին սերը լըլլար գլխավոր դրդապատճառ այդ արարքին, դժվար պիտի ըլլար ըմբռնել Ամենայն Հայոց Հայրապետին հանկարծաբար որոշումը եղբայրութեան ձեռք կարկառուն Եփրեմի Աթոռի նորընտիր Հայրապետին: Զէին վերցած պատճառները, որ ստեղծեցին բաժանումը ու գոյութիւն այլ ունին անոնք հաշտութեան վերջ տակալին: Զույգ Հայրապետներու ողջագործումը իրականացալ առանց նախադրյալ պայմաններու՝ ժանշկեցալ կաթողիկոսական հանգա-

մանքը Մեծի Տանն Եփրեմի Կահնապետին, գոնե առերեսով ալ զգան դուրին ձեռք մը: Ինչպէս էր, որ մտածեին շատեր, որ ինչո՞ւ պատահեց այս դեպքը տարիներ առաջ, որ Եփրեմի Աթոռի տարաբախտ Հայրապետ մըն ալ լմեռներ կոտորած սրտով, երբ այնքան ալ լմեռներ կոտորած սրտով, երբ այնքա՞ն պարզ էր խնդիրը: Այդքան ալ պարզ չէ, ըստ երևույթին շատ սովորական արարքը ողջագործման: Պետք էր մոռցվեր շատ բան, և կամ ավելի գերազանց, գերակշիռ դատողութիւն մը գար նվաղեցնելու արժեքումը հարցերու, որոնք հուզեցին կյանքը Հայաստանյայց եկեղեցիին վերջին յոթ տարիներուն: Անկարելի էր այս մեծանցումը, եթէ շտիբապետեր քրիստոնեական սերը, իբրեւ անփոխարինելի յաղախ ներգաշնակութեան, սրտին մեջ Ամենայն Հայոց մեծ Հայրապետին: Այսպիսի որեւէ հաշտութիւն բնականորեն, իբրեւ անմիջական պայման, կենթադրեց զիջողութիւն երջական պայման, կենթադրեց այն: Սերը սակու կողմին ալ հավասարապէս: Սերը սակու պայման չի ճանշար. եղբայրներու մեջ պետք է վերնային բոլոր արգելքները, որովհետեւ հոգիներու մեջ գոյացած սառը կհալի միայն սիրո արեւն, ինչպէս կը քանան անոր լուսնի շուքն ու մութը անկութեան, վեճի, եղբայրադավ զգացումներու և կործանարար տրամադրութեանց: Եկեղեցիին և Ազգին հանդեպ տածված անհուն սիրո և նվիրումի զգացումով միայն կարելի է բացատրել երջանիկ այս իրողութիւնը, որ կռիված է իրեն լուսավոր էջ արձանագրվելու հայ ժողովուրդի պատմութեան մեջ: Անգամ մըն ալ ապացուցվեցալ, որ ինչ որ անկարելի է օրենքներուն և բանականութեան միջոցալ իրագործել, կարելի է սիրով հաղթահարել: Սերն է, որ անկարելի կարելի կընեն: Ուրեմն այս հաշտութիւնը մեր ժողովուրդին համար դարերով հեղհեղված միշտ այժմեական պատգամ մ'ալ ունի: Միւրեքն' զիրար. ու ահավասիկ կարելի պիտի դառնան բոլոր երազները, պիտի հաջողութեամբ պսակվին աշխատանքները ու պիտի հասնին նպատակներու յիսկատար պսակումին:

Ու նոր տարվան հետ ունինք այս նոր հուսադրումը մեր ազգային-եկեղեցական կյանքի մեջ հառաքիկա հաջողութիւններու համար: Պիտի բավէ միայն, որ մասնաւոր հետապնդումներ և անցողական և կողմնակի շահերն վեր դասվին ազգը ու անոր հոգեկան և բարոյական կենսունակութիւն և ուժ ջամբողջ անստղուտ և փրկագործող հաստատութիւնը՝ Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին:

(Խմբագրական ՀՀ, Երևան-Փ.)

1964 հունվար, № 1):

ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՑԱԿԱՆ ՄԻԱՑՑԱԼ ԺՈՂՈՎԸ

1964 թվականի փետրվարի 20-ին, Լոս-ան-ժելոսում (Կալիֆոռնիա), տեղի է ունենում ԱՄՆ-ի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու արևելյան և արևմտյան թեմերի թեմական խորհուրդների միացյալ խորհրդակցական ժողովը:

Ժողովին մասնակցում են արևելյան թեմից առաջնորդ գերաշնորհ Տ. Աիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, 3 հոգևորական և 2 աշխարհական պատգամավորներ:

Արևմտյան թեմից ժողովին ներկա են լինում առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը, 3 հոգևորական և 5 աշխարհական պատգամավորներ:

Երկու թեմերի միացյալ խորհրդակցական ժողովը բացվում է արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Միոն արքեպիսկոպոսի աղոթքով:

Արևմտյան թեմի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը ողջունում և բարի գալուստ է մաղթում բոլոր ներկաներին, յացված հայտարարելով ժողովը:

Այնուհետև ընտրվում է ժողովի գիվանքը ստ հետևյալի.

Գերաշնորհ Տ. Միոն արքեպիսկոպոս Մանուկյան՝ նախագահ:

Արժանապատիվ Տ. Առնակ քահանա Գասպարյան՝ ատենապետ:

Արժանապատիվ Տ. Թորգոմ քահանա Սարգսյան՝ ատենադպիր:

Երկու թեմերի միացյալ խորհրդակցական ժողովի օրակարգում դրվում են հետևյալ հարցերը.

1. Երկու թեմերի գործակցության հարց.

2. Կիրակնօրյա դպրոցների ծրագրի և դասագրքերի պատրաստության հարց.

3. Հայ դպրոցների դասագրքերի պատրաստության հարց.

4. Հայաստանյայց Եկեղեցու երիտասարդների կազմակերպության գործակցության հարց.

5. Պաշտոնաթերթերի հարց.

6. Դպրաց զասերի միօրինակ երգեցողության, դրքերի պատրաստության և հրատարակության հարց.

7. Երկու թեմերում հոգևոր կյանքի մշակման հարց.

8. Հովիվների պատրաստության և փոխանակության հարց.

9. Կիլիկյան թեմի հետ փոխհարաբերության հարց.

10. Քրիստոնյա եկեղեցիների հետ հարաբերության հարց.

11. Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցու մեկ առաջնորդական վիճակի հարց.

12. Թեմական կանոնադրությունների միակերպության հարց.

13. Թեմերի անվան և սահմանների ճշգրտում.

14. Հոգևորականների ապահովագրության հարց:

Խորհրդակցական ժողովը, փետրվարի 20-ին և 21-ին, գումարում է երկու նիստ, որտեղ օրակարգի բոլոր հարցերի շուրջ մտքերի աշխույժ փոխանակությունից հետո, ընդունվում են համապատասխան որոշումներ:

Ժողովի երկրորդ նիստում միաձայնությամբ ընդունվում է դիվանի կողմից ներկայացված հետևյալ րանաձևը.

«Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո արևելյան և արևմտյան թեմերում առաջնորդներս և թեմական խորհուրդներս, փետրվար 20, 1964-ին, Լոս-Անժելոսի մեջ գումարված նիստին մեջ, դարձյալ կհաստատենք մեր հավատարմությունը Հայաստանյայց Եկեղեցվո կանոններուն հանդեպ, որոնց համաձայն Հայաստանյայց Եկեղեցին մեկ հոգևոր մարմին է, մեկ Հոգևոր Գլուխի մը իշխանության ներքև: Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը Գլուխն է աշխարհի մեջ դոյություն ունեցող բոլոր Հայաստանյայց

եկեղեցիներում, Հայաստանյայց Եկեղեցվո Աթոռները ունին իրենց իրավասության որոշ սահմանները, ամենայն հնչյուն անոնք ընդունված են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Քեմբրը կհաստատվի Համաձայն աշխարհագրական սահմաններու և աշխարհագրական որևէ շրջանակի մէջ մեջ միայն Համա կրնա գոյութիւն ունենալ մինչ քեմակալ եպիսկոպոսով՝ իբրեւ զուգոր քեմին: Անդրադառնալով Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո ներկա կացութեան, կարելի չէ ուրանալ այն իրողութիւնը, թէ Հայաստանյայց Եկեղեցվո մեջ այսօր երկփեղկում մը գոյութիւն ունի: Եվ ամեն երկփեղկում բաժանում կհառաջացնեն:

Այսուհանդերձ մենք՝ Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո արևելյան և արևմտյան թեմերու առաջնորդներ և թեմական խորհուրդներ, գոհունակութիւնով հետևեցանք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ նորին Ս. Օծութիւնը Ս. Ս. Վազգեն Ա Կաթողիկոսի աստվածաճաճ որոշման, որով առաջին և անհրաժեշտ քայլը առնվեցաւ Հայաստանյայց Եկեղեցվո մարմինին մեջ հառաջ եկած բեկումը բուժելու, հոկտեմբեր 26, 1963-ին, Երուսաղեմ հրավիրելով Կիլիկիոյ միտրապետական Աթոռին Գահակալ Ս. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը, և շնորհավորելով անոր ընտրութիւնը:

Մենք կգիտակցինք այն իրողութեան, որ երկար տարիներու բաժանումը խորացուցած է խրամատը մեր այս թեմին երկու հատվածներուն միջև և հետևաբար անմիջական լուծում մը չենք ակնկալեր ստեղծված հակօրինական կացութեան:

Այնուամենայնիվ, հուսով ենք, որ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի բացած ուղին պիտի առաջնորդեն Ամերիկահայ թեմը բոլորին բաղձաքոված Հայաստանյայց Եկեղեցվո օրգանիկ միութեան, որ կարելի պիտի ըլլա մեր Եկեղեցվո հիմնական ու նվիրական կանոններու պահպանումով միայն:

Ուստի, հետևողաբար Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջադրած ոգին, մեր առջև կգտնենք երկու հատվածներու միջև փոխա-

դարձ հարաբերութեանց երկու շրջանակներ, մին ազգային և մշակութային ձեռնարկներու կապակցութեամբ և մյուսը՝ կրոնական և կանոնական կարգապահութեան կալվածին մեջ: Ազգային և մշակութային ձեռնարկներու կապակցութեամբ հարմար կդատենք համազգային նկարագիր մը տալ հետևյալ տոնախմբութիւններուն, ուր որ կարելի է նկատի առնելով տեղական պայմանները:

1. Վարդանանց.
2. Ապրիլ 24-ին.
3. Մշակութային օրվան:

Իսկ կրոնական ու կանոնական կարգապահութեան կալվածին մեջ, կհաստատենք, թե որեւէ հոգևոր պաշտոնյա սուրբ խորհուրդներ կմատակարարեն թեմի մը կամ համայնքի մը մեջ, թեմի առաջնորդին հրահանգով և իբրեւ անոր ներկայացուցիչը: Ուստի, ներկա կացութեան մեջ, ցնոր տնօրինութիւն, կանոնական պիտի ըլլա առաջնորդին համար իրեն եկեղեցի հոգևորականի մը հրահանգել ծիսակատարութեանց մասնակցիլ այն համայնքին մեջ, որ եկեղեցի չէ իր հոգևոր իշխանութեան:

Փետրվարի 21-ին, խորհրդակցական միացյալ ժողովը փակվում է գերաշնորհ Ս. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյանի ազդեցով:

ԱՄՆ-ի Հայոց արևելյան և արևմտյան թեմերի թեմական խորհրդակցական ժողովի անունից հրապարակվում է հետևյալ պաշտոնական հաղորդագրութիւնը:

«Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո արևելյան և արևմտյան թեմերու սրբազան առաջնորդները և թեմական խորհուրդի անդամները խորհրդակցական ժողով մը ունեցան Լոս-Անժելոսի մեջ փետրվար 20—21 օրերուն և նկատի առին երկու թեմերը հետաքրքրող հարցեր:

Նախապես ալ կայացած են նման հանդիպումներ զուգոր թեմերու միջև, որոնք ունեցած են իրենց օգտակարութիւնը թեմական գործերու բարձր մատակարարման, ինչպես նաև մեր Եկեղեցվո զարգացումներուն հոգևոր դաստիարակութեան գործին մեջ»:



**ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
62-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏՏԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ**

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաջնորդական վիճակի 62-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվում է 1964 թվականի մայիսի 1-ին և 2-ին, ուրբաթ և շաբաթ օրերին, Սաութ Միլուոկիի հայոց Ս. Հարություն եկեղեցում, նախագահությամբ առաջնորդ գերաշնորհ Ս. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյանի, ժողովի հրավիրված 144 եկեղեցական և աշխարհական պատգամավորներից 90 հոգու ներկայությամբ:

Թեմական պատգամավորական ժողովը բացվում է ուրբաթ երեկոյան, առաջնորդ սրբազան հոր աղոթքով, որից հետո կատարվում են պատգամավորների ստուգում, դիմանքի և հանձնաժողովների ընտրություններ:

Հատենի ժողովո, հոտեկայս, ընթերցվում է նորին Ս. Օծուխյան Ս. Ս. Վաղդան Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլ 8 թվակիր ողջույնի և օրհնության հետևյալ գիրը:

«Ողջույն և օրհնություն թեմական պատգամավորական ժողովիդ:

Ս. Էջմիածնի կամարներուն ներքև շողացող Ս. Լուսավորչի կանթեղի լույսը թող շողա ձեր հոգիներին ներս և պայծառացնե ձեր մտածումներն ու սրտերը, որպեսզի հստակությամբ տեսնեք այն ուղիղ ճանապարհը, որ Հայ եկեղեցվո պատմական առաքելության ուղին է, նվիրագործված մեր հավատավոր ժողովուրդի դարերու իղծերով, երազներով ու հերոսական իրագործումներով:

Փա՛ռք Լուսավորչի անմահ կանթեղին, փա՛ռք Հայ եկեղեցիին, փա՛ռք հայ հավատացյալ ժողովուրդին:

Դուք, սիրելյալ զավակներ Մեր, Առլան-տյանի ճեղքվող այդ հյուրընկալ ափերուն, ամերիկյան բարեհոգի ժողովուրդի ծոցին մեզ, աղբյուրից եղբայրական սիրով ու միաբան, ամուր ու անշարժ ձեր նախյաց լույս

հավառնով, ձեր հայկական հոգիով, ձեր հայրենակառոտ տնույ ապրումներով:

Շեն ու պայծառ, լույսի և փառքի մեջ պահեցե՛ք միշտ ձեր եկեղեցիները, համախմբվե՛ցե՛ք անոնց շուրջ, բացե՛ք ձեր սրտերը սուրբ սեղաններու առաջ, որպեսզի առաջուհես ընդունիք օրհնությունը Աստուծո և զհորհները կենարար Ս. Հոգիին: Նվ՛ ձեզի հետ եկեղեցի բերե՛ք ձեր զավակները, ձեր թոռիկները, որպեսզի անոնք ևս անմասն չմնան երկնային շնորհներեն, որպեսզի անոնք ևս ըլլան, ինչպես դուք տաքցներդ, առաքիլիք քրիստոնյաներ, հարազատ զավակները հայ ժողովուրդին և բարի ու հավատարիմ բաղաժանցիները ձեր տիրախնամ մեծ երկրին:

Փրկչի Իշման սուրբ տեղեն, Մենք Թիվ և գրչի հղոթող ենք ձեր եկեղեցյաց պայծառության, ձեր սուրբ գործոց հաջողության և ձեր ու համայն հավատացյալ մեր ժողովուրդի արեղատության ու բարօրության համար:

«Նու Աստուած խաղաղութիւն, որ եհան ի մեռելոց գշովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յիսուս, հաստատեսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա, և արասցէ ի ձեզ զհանոյսն առաջի Իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որով փառք յաւիտեանս» (Եբր. ԺԳ 20—21):

«Շնորհք բնդ ամենեսին ձեզ: Ամէն»:

Թեմական պատգամավորական ժողովը, առաջնորդ սրբազան հոր անունից, որդիական սիրո, հրախտագիտության և հավատարմության հետևյալ հեռագիրն է հղում Վեհափառ Հայրապետին:

«Ամերիկայի հայոց առաջնորդական վիճակի 62-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը, որ կգումարվի մայիս 1 և 2-ին, Սաութ Միլուոկիի Ս. Հարություն եկեղեցվո մեջ, կուզա խոնարհաբար իր որդիական սերը, հարգանքն ու հավատարմությունը հայանել Ձերդ Ս. Օծուխյան, ուղղորդվել



Ձերդ վեհափառության արևշատ տարիներ, ի փառս Աստուծո, ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվոց:

Անցնելու, թեմական պատգամավորական ժողովի առաջին նիստում, առաջնորդ սրբազան ընթերցում է իր տարեկան զեկույցը, թեմում կատարված եկեղեցաշին ձեռնարկներ, կրոնական, կրթական և համայնքային գործունեության մասին:

«Անցնող տարին, մեր թեմին մեջ, եղավ ժրջան աշխատանքի և բեղմնավոր գործունեության արդյունավետ տարի մը: Մեր բոլոր եկեղեցիներն ու ծխական խորհուրդները և եռանդուն աշխատանք կատարեցին հոգևոր և ազգային կյանքը ծաղկալու և վառ պահելու մեր ժողովուրդին մեջ: Հոգևոր հովիվներ անխափան կատարեցին եկեղեցական արարողություններն ու ծխակատարությունները, և Աստուծո խոսքին մխիթարությունը բաշխեցին հավատացյալ ժողովուրդին, ինչպես նաև ուսուցանելով և դաստիարակելով նոր սերունդը մեր հայրերու առաքելական հավատքով ու ազգային ոգիով: Միակն խորհուրդներ, եկեղեցասեր տիկնանց միություններ, հայ և կիրակնօրյա դպրոցներու պաշտոնեություն, Հայ Եկեղեցվո ծերտասարդաց կազմակերպության վարչություն, ինչպես նաև պատգամավորներ և թեմական խորհուրդն ու առաջնորդարանի օժանդակ կազմակերպությունները ոգի ի բոլին աշխատեցան, կատարելով իրենց պարտականությունը Հայ Եկեղեցվո պայծառության և մեր թեմի կրոնական ու կրթական հառաչդիմության ի նպաստ, որուն համար այսու կհայտնենք մեր սրտագին գնահատանքն ու օրհնությունը մեր բոլոր հոգևորական և աշխարհական պաշտոնակիցներուն, մաղթելով ամենուն

աստվածային վարձատրություն և հոգեկան երջանկություն...»:

Ապա ժողովում ընթերցվում են թեմական խորհրդի վարչական և տնտեսական տեղեկագրերը:

Ժողովի երկրորդ նիստում, շաբաթ առավոտ, լսվում են զեկույցներ Մայր Տաճարի կենտրոնական հանձնաժողովի, Ս. Ներսես Շնորհալի աստվածաբանական վարժարանի, թեմի դպրոցների տեսչի, Հայ Եկեղեցու երիտասարդաց կազմակերպությունների, առաջնորդարանի հարաբերությանց դիվանի վարիչի, օժանդակ միության և այլ թեմական հարցերի շուրջ:

Երրորդ նիստում, շաբաթ հետմիջօրին, թեմական պատգամավորական ժողովը հիմնականում քննության է առնում թեմական խորհրդի ներկայացրած թեմական կանոնադրության բարեփոխությունը:

Վերջին նիստում թեմական պատգամավորական ժողովը, ընկատի ունենալով, որ հառաջիկա 1965 տարին ապրիլյան եղբունի հիսնամյակն է, կազմեց հիշատակահանդեսի կեդրոնական հանձնաժողով: Մըք երեք հոգևորականներից և տասներեք հանրածանոթ ազգային ղեմքերից և մտավորականներից բաղկացած, և որոշեց թեմին մեջ 'կազմակերպել հիշատակի հանդեսներ' նվիրված ապրիլյան եղբունի մեր բյուրավոր նահա-տակներուն, ազգային, եկեղեցական և կրոնական գիովա, ինչպես նշվում է առաջնորդարանի դիվանի հաղորդագրության մեջ:

Ամերիկայի հայոց առաջնորդական վիճակի 62-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը իր գահունակությունն է հայտնում հոտնկայս՝ ճառաչնորդ սրբազանին և թեմական խորհուրդի տարեկան գործունեության համար:



ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1964 թվականի ապրիլի 30-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Սաութ Միչիգոնի հայոց Ս. Հարություն եկեղեցում, բացվում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց թեմի հոգևորականության տարեկան համագումարը:

Համագումարը բացվում է առաջնորդ գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյանի աղոթքով:

Համագումարի առաջին նիստում կատարվում է դիվանի ընտրություն և կազմվում ժողովի օրակարգը:

Հատենի ժողովո, հոտենկայս, ընթերցվում է նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլ 8 թվակիր ողջույնի և օրհնության հետևյալ գիրքը:

«Հայրական սիրով կողջունենք ձեր տարեկան համագումարը: Մենք գոհունակությամբ և գնահատանքով ծանոթացանք ձեր ծրագրին և օրակարգին: Ի սրտե կմաղթենք, որ բոլորդ սուրբ հավատով առավել լուսավորված և առավել գոտեպնդված, ի գործ դնեք ձեր առաջադրանքները ի խնդիր Ամերիկայի հայ հավատացյալ ժողովուրդի հոգևոր կյանքի շինության և ի խնդիր աստվածաճանաչության շինության: Հայ եկեղեցիին ու ազգին ծառայելու ձեր նվիրական աշխատանքին մեջ:

Աղոթող եմք նաև, որ ձեր թեմակալ առաջնորդի կողմից բոլորդ մեկ սիրտ մեկ հոգի, եղբայրական սիրով, իրարու աջակից ու

լծակից, առավել շենցենք հայոց Ս. եկեղեցին և տնոր նվիրական հովանիին ներքև, ամբողջ ու անխռով պանպանք Մեր հավատացյալ զավակները, հատկապես նոր հասակ աճող հայ երիտասարդությունը, բոլորի մեջին ու սրտին մեջ վառ ու պայծառ պանքով մեր նախնաց հավատին լույսը, մեր մայրենի լեզուն և մեր ազգային հոգևոր մշակույթի մեծ ժառանգությունը:

Ս. էջմիածենն ձեզի բոլորիդ ողջույն և օրհնություն:

Սիրելիներ՝ և հարազատներ՝ Մեր, «Էսկեցե՛ք, հաստատուն կացե՛ք ի հաւատս, ժրացարո՛ւք, զօրացարո՛ւք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14):

Համագումարի երկրորդ նիստում կարգացվում են զեկուցադրեր և դասախոսություններ:

Հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Արղունյանը դասախոսում է «Հայոց եկեղեցվոր միասնականությունը» թեմայի շուրջ, իսկ արժանապատիվ Տ. Արտեն քահանա Աշճյանը՝ «Եկեղեցական կազմակերպություններ» նյութի շուրջ:

Համագումարը ուրբաթ օր, մայիսի 1-ին, իր երրորդ նիստում, սպասում է օրակարգի բոլոր հարցերը, քննության առնելով թեմի ծխական, ծխական և հոգևոր կյանքի շինության վերաբերյալ խնդիրները:

Հոգևորականության համագումարի ժամանակ, առավոտյան և երեկոյան ժամերին, տեղի են ունենում եկեղեցական պաշտամունք և արարողություններ:





ՀՈՎԿԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ*

ՋԱԿԱՐՑԱ

Մայիս 5-ի առավոտյան կանուխ, մեր ինքնաթիռը սլանում է դեպի Ինդոնեզիա: Շուրջ կապույտ ծով ու մով և անծայրածիր երկնակամար: Մի պահ մտքով թռչում ես դեպի տուն, դեպի թո սիրելիներն ու հարազատները, որոնք վստահ ես, թե այդ փակ ռուպինքը հետ են հոգեին և ի սրտե աղոթում են քո ապահովության և այն կարևոր առաքելության համար, որ դնում ես դեպի Հեռավոր Արևելքի մեր քույր գաղութները:

Դեռ երեկ էր, որ մի փուռ հայեր ի մի հավաքվելով Սիդնիի մեջ, սկիզբն էին դնում Ավստրալիայի հայ գաղութի, սակայն այդ օրերին ոչ ոք չէր կարող երևակայել, թե հազիվ մի քանի տարի անց, փարթամ գաղութներ պիտի անշքանային, իսկ Սիդնին ի վիճակի պիտի լիներ եղբայրական ձեռք երկարելու Ինդոնեզիայի մնացած փոքրաթիվ հայություն, ի մխիթարություն մեր եղբայրներին ու քույրերին, որոնք զրկված են եղել հոգևոր սփռփանքից:

Ինդոնեզիայի երբեմնի փառավոր ու խանդավառ գաղութից ոչինչ չի մնացել, երկրորդ պատերազմը շատ սուղ նստեց մեր ազգակիցներին. շուրջ յոթնասուռն անձինք զոհ տվին իրենց կյանքը, ուրիշներ բարոյապես և նյութապես տուժեցին և հիմա էլ, ի լրումն ամենայնի, կառավարությունը մտադիր է քանդել Զակարտայի հայոց Ս. Հովհաննես

եկեղեցին, այդ հողամասը հասարակաց այգու վերածելու համար, խոստանալով միաժամանակ նոր տեղ հատկացնել հայ եկեղեցու համար և այն կառուցել պետության հաշվին:

Զոթուկես ժամվա երկար թուլքից հետո, հետմիջօրեի ժամը 2-ին հասնում ենք Զակարտա և ողջագուրվում Պետրոս և Նահապետ Նահապետյան եղբայրներին, պր. Հարություն Մելքոնի և նրա ընտանիքի, պր. Գարեգին Ոսկանի և ուրիշների հետ: Պր. Մելքոնը և պր. Պետրոս Նահապետյանը Ինդոնեզիայի հայ գաղութի կենտրոնական մարմնի ներկայացուցիչներն են Զակարտայում:

Շտապում ենք եկեղեցի:

Երբեք եք եկել, Տեր հայր,— ուրախ տրամադրությամբ արտահայտվում է տիկին Մարիամ էլյազյանը, միակ հսկիչն ու քնակիչը Զակարտայի մեր մենավոր ու հեռավոր եկեղեցու:

Հայ վաճառականները հաստատվում են Զավայում (այժմ Ինդոնեզիա) հուլիսի 1601 թվականից անմիջապես հետո, ձիշտ մեկ դար հետո սկսվում է Հարավային Հնդկաստանի հայոց, մասնավորաբար Մադրասի նշանավոր հայ վաճառականների գաղթը դեպի այդ կղզիները:

Նշանավոր հայերից էր աղա Գևորգ Մանուկ Մանուկյանը, որ շուրջ չորս միլիոն ֆրանկի պատկանելի գումարով Մադրասից փոխադրվեց Զավա: Նա մտածեց նույնիսկ Լոնդոնում քանալ հայկական բարձրագույն կրթական հաստատություն, սակայն վաղաժամ մահը արգելք հանդիսացավ նա մա-

* Քաղվածքն արար հրատարակում ենք Սիդնիի (Ավստրալիա) հոգևոր հովիվ արժանապատիվ Ս. Արտաշիս քահանա Միրզայանի ինդոնեզիա կատարած հովհաննեսյան այցելության մասին վեհապատ Հայրապետի գրած զեկուցագրից որոշ մասեր:—ԽԱՐ:

Հասցավ Ջակարտայում 1827 թվականին և իր անբավ հարստությունը թողնելով իր քույրերին՝ օրիորդ Թագուհի Մանուկյանին և տիկին Մարիամ Հարությունյանին, Բարեպաշտ քույրերի առատաձեռնությամբ, 1854 թվականին, կառուցվում է մի գեղեցիկ եկեղեցի Ս. Հովհաննես անունով:

Ջակարտայում հայոց եկեղեցի հաստատելու օրից մինչև հիմա, հաջորդաբար այնտեղ պաշտոնավարել են երեսուն և հինգ քահանաներ: Չնայած գաղութի հարստության և եկամտաբեր կալվածների, ներկայումս գաղութը դուրի է հոգևոր պաշտոնյայից և մատնված է անորոշության: Հայոց եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնում, արքայական դաշտում, որը ներկայումս կոչվում է Ազատության հրապարակ: Ազգային կյանք գրեթե գոյություն չունի: Մնացել են հինգ ընտանիքներ, որոնք շատ հավանական է մի քանի տարվա ընթացքում հեռանան, որովհետև նրանց զավակները արդեն հեռացել են և ապրում են զանազան երկրներում:

Հասած օրս իսկ մասնավոր ժողով ենք ունենում, ժանոթանում վարչության կատարած և կատարելիք աշխատանքներին: Մայիս 6-ի առավոտյան տեսակցում ենք կառավարության պաշտոնեությունց հետ և քանավոր ու գրավոր կերպով ներկայացնում հայ հասարակության և վարչության առաջարկությունները:

Կիրակի, մայիսի 7-ին, պատարագում ենք Գաղութի բոլոր հայերը, շուրջ 30 հոգի, հաղորդվում են և հոգեպես մխիթարվում: Հավարտ սուրբ պատարագի, կատարվում է հոգեհանգիստ եկեղեցու բարերարների և այլ նեղեցյալների համար: Ապա եկեղեցու սրահում հանդիպում ենք հայ ընտանիքներին, եկեղեցական խորհրդի նախագահ պր. Նահապետյանը բարի գալուտյան խոսք է ասում և հույս հայտնում, որ մեր ներկայությունն իրենց մեջ պիտի լինի հույժ նպաստավոր և խրախուսիչ ազգային տեսակետով: Պատասխանում ենք պր. Նախագահին: Ապա կարդացվում են Ավստրալիայի հայոց եկեղեցական խորհրդի նամակները, ուղղված ինդոնեզիայի հայոց զույգ եկեղեցական վարություններին և համայնքին:

Մանոթանալով տիրող կացության և ընդհանրապես գաղութի մտայնության, դժբախտաբար դալիս ենք այն եզրակացության, որ հայ գաղութը հետզհետե կազմալուծվում է:

Դժբախտություն է, որ ինդոնեզիայի նման մի պատվակաս և փառքամ գաղութ, այսօր մատնված է ալյուրի մի տխուր կացության, որ հնարավորություն չունի նույնիսկ հոգևոր պաշտոնյա պահելու: Պր. Նահապետյանի հետ խոսելիս գաղութի հրատապ խնդիրներին և

կարիքների շուրջ, նկատվում էր նրա հոգեկան տագնապն ու խոր վիշտը և ափսոսանքը, թե ինչու ժամանակին հեռատես չգտնվեցին և թույլ տրվեց, որ գաղութը մատնվեր ներկայի դառն կացության:

Խրախուսում ենք բոլորին, որ ձեռք-ձեռքի տված, սիրով ու համերաշխաբար վարեն եկեղեցական ու հասարակական աշխատանքները: Շեշտում ենք, որ անհրաժեշտ է, որ գաղութն օր առաջ ունենա իր հոգևոր պաշտոնյան, րաց մեան եկեղեցու դռները ժողովրդի առաջ, որ հավատացյալները գոնե ամեն կիրակի ի մի հավաքվելով և Աստուծուն պաշտելով, վերագտնեն իրենց հոգու արիությունն ու քաջությունը:

Մայիսի 11-ին, հինգշաբթի, առավոտյան շատ կանուխ, գնացքով մեկնում ենք Սուրաբայա:

Շատ էի լսել Ջավայի հարուստ քուսակա՛նության, որնձի թավջապատ դաշտերի և այս դրախտային կղզիների ընկած գեղեցկության մասին, իսկապես որ աշխարհի գեղեցկագույն երկրներից մեկը պիտի համարել ինդոնեզիան ընդհանուր առմամբ: Գնացքը ամբողջ օրեր, երբեմն նույնիսկ շաբաթներ, արագորեն սլանում է այդ օրհնաբեր դաշտերի ու կույս անտառների միջով: Հարուստ է բնությունն ու հիանալի՝ դիտողի համար:

Պր. Նահապետյանը լավ ճամբորդակից ու խոսակից է: Նա պատմում է զանազան անեկտոզներ ինդոնեզիայի կյանքից ու մանավանդ դրվագներ երկրորդ պատերազմից հետո: Կես ճանապարհին տեսնում ենք Սմարանգը, ուր մի ժամանակ ապրելիս են եղել քավական թվով հայեր, աշխատել ու հարստացել, սակայն կորել են ու անհետացել... Ահա ողբերգական պատմությունը գրեթե բոլոր հայ ընտանիքների:

Գնացքը վազում է սրընթաց, իսկ մենք, խոհեմով ու մտածումներով ծանրաբեռնված, դիտում ենք լայնատարած դաշտերը, դալալապատ բլուրներն ու լեռները, որոնք կարծես հանգստություն են տալիս մեր հոգևած օղբին և պայծառացնում մեր միտքը: Տեղայի ժողովուրդն ընդհանրապես բարեկիրթ է:

Մոտենում ենք քաղաքի արվարձաններին, շուտով գնացքը կանգ է առնելու Սուրաբայայի կայարանում: Տեղատարափ անձրև էր տեղում, երբ մի խումբ բարեկամների ու ծանոթների հետ ուղղվում ենք եկեղեցի: Ավճի քան մի տարի է, ինչ հնարավոր չի եղել Սուրաբայայում քահանա հրավիրել, սակայն ուրարակիր պր. Խ. Խ. Գավթյանը, պր. Արամայիս Հակոբյանի և երգչախմբի մյուս անդամների օգնությամբ, միշտ բաց է պահել եկեղեցու դռնն ու կատարել կիրակնօրյա ժամերգություն՝ ի մխիթարություն ժողովրդի:

Պատշաճ հանդիսություններ տոնվել են նմանապես վարդանանց հերոսամարտն ու Ապրիլ 24-ը:

Առաջին օրը, մայիսի 12-ին, զրեթե ամբողջությամբ զբաղված էինք ծանոթներ ու հյուրեր ընդունելով, իսկ շաբաթ օրը, եկեղեցական վարդապետ անդամների հետ միաժամ, այցելեցինք հանգուցյալ Բազրատ սին, այցելեցինք հանգուցյալ Կատարինեին և Գալստյանի այրուն՝ տիկին Կատարինեին և նրա քրոջ՝ տիկին Իշխանին: Նմանապես այցելեցինք մի քանի հիվանդների ու ծերունիների, և ապա, հերկության ժամը 8-ին, մասնակցեցինք վարչական ժողովին: Նախագահը կրկին բարձր դալուստ է մաղթում և ի մասնավորի շնորհակալությամբ արձանագրել տալիս Ավստրալիայի հայոց եկեղեցական խորհրդի եղբայրական վերաբերմունքն ու զոհողությունը: Կարգացվում են պաշտոնական նամակները և ուրախությամբ ընդունվում: Որոշվում է փոխադարձաբար բարոյապես և նյութապես օգնել Ավստրալիայի հայոց եկեղեցական խորհրդին, Պր. նախագահը մանդեցական կերպով զեկուցում է Զակարյայի եկեղեցու հետ առնչություն ունեցող աշխատանքների և քանակցությունների մասին և թվում կառավարության հանձնած մեր երեք նոր առաջարկությունները, որոնք ընդունվում են միաձայնությամբ և լիազորության նոր պաշտոնագիր է խմբագրվում, որով Զակարյայի ներկայացուցիչներ ղուկո, Հարություն Մեղրեյը և պր. Պետրոս Նահապետյանն իրավասու են ճանաչվում կառավարության հետ բանակցելու:

Մայիսի 14-ին, կիրակի, պատարագում ենք, ժողովուրդը զրեթե ամբողջությամբ հաղորդվում է: Հաղորդում ենք Վեհափառ Հայրապետի ողջույնն ու օրհնությունը, ապա քարոզում ենք և մասնավորապես շեշտում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կատարած ու կատարելիք ազգապահպանման հոյակապ դերի մասին: Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգիստ է կատարվում Բազրատ Գալստյանի, Արամ Հարությունյանի, Մարտիրոս Հորդանանյանի, տիկին Սովինար Զամարդարյանի և առհասարակ այն բոլոր հարազատներ աշխատավորների ու նվիրատուների հոգիների համար, որոնք նյութապես կամ բարոյապես սատար են հանդիսացել եկեղեցու պայծառացման և զարգացման: Վերջում լուսավորության ու առաջադիմության գործում:

Վերահիշյալ անձնավորություններից մասնավորապես հանգուցյալ տիկին Սովինար Զամարդարյանն երկար տարիներ անհուն զուրգուրանքով ու նվիրումով է ծառայել Սուրբաթայի հայկական դպրոցին և բուսական կերպով սաներ:

Դպրոցական փայլուն շրջանն է համարվում 1927—1936 թվականները, երբ հանգուցյալ վարդան ավագ քահանա վարդանյանը, իր քահանայական պաշտոնի հետ համընթաց, ստանձնում է նաև դպրոցի տեսչության պաշտոնը: Կրթական խնդիրների շուրջ խոսելիս չենք կարող երախտագիտությամբ չհիշել նաև բազմամյա ուսուցիչ և հասարակական գործիչ հանգուցյալ Հորդանան Հորդանանյանի անունը, որը վարեց ճանապարհական կյանք, դարձավ բանավեճար և վարդապետն ու բանփորն քահանան: Զավայի հայության, ըստ Գուշակյան պատրիարքի, նա սիրվեց շատերից ու նաև հայաժողովը մոլեռանդներից: Սակայն մինչև վերջին շունչը մնաց պատենելի վրա, հորդորելով ու համոզելով նոր սերունդին, որ շո՞տանա իր բերքին լեզուն ու Հայաստան աշխարհը: Նա թողել է մի քանի գրական փորձեր և աշխատություններ, ինչպես ժողովրդական վարդապետի ի պատիվ: Զավայի հայ մանկանց, սակայն, որպես մնայուն ու արժեքավոր գործ, պետք է հիշել Զավայի հայության մասին դրած ուսումնասիրությունը, որից միայն երեք կամ չորս օրինակ է մնացած: Գրքուկի առաջաբանը գրել է Գուշակյան պատրիարքը և գնահատական տողեր նվիրել հեղինակին ու նրա աշխատության: Տպվել է Երուսաղեմի հայոց Արքեպիսկոպոսի վանքի տպարանում, 1937 թվականին:

Նույն կիրակի, կեսօրից հետո ժամը 3-ին, կատարում ենք թաղման տխուր արարողությունը հանգուցյալ Սիմոն Կրեկյանի՝ աներհայրը եկեղեցական վարդապետի նախագահ պր. Ն. Նահապետյանի, խոսում ենք մի ամփոփ դամբանական:

Հաջորդ երկուշաբթի օրը դարձյալ հատկացնում ենք այցելությունների: Շատ ընտանիքներ ունեն հարազատներ ու ազգականներ Ավստրալիայի զանազան քաղաքներում, որոնց որպիսություն են ուղղում իմանալ և առհասարակ հետաքրքրվում են այնտեղի կյանքով: Գրեթե Զակարյայի բոլոր հայերը արդեն պատրաստություն են տեսնում զաղթելու այլ երկրներ: Մեծամասնության մեկնելուց հետո, թե ի՞նչպիսի ճակատագիր է վերապահված ազգային հաստատությունների, եկեղեցիների, մի խոսքով պատկանելի հարստության համար, դա պարզ է ինքնին, նույն մի՞ճակին պիտի արժանանան, ինչպես ժամանակին Հնդկաստանի հայկական կենտրոններից շատերը... Լավ է ուշ քան երբեք: Եթե ժողովուրդը լինի հեռատես ու վարչությունը ունենա բարի կամեցողություն, հնարավոր է միջոցներ ստեղծել և գեթ մասամբ փրկել մեր նախնիների արդար վաստակը:

Ինդոնեզիայի հայության 60 տոկոսն արդեն տեղափոխված է Ավստրալիա, կարճ ժա-

մանակվա ընթացքում ստեղծելով բարեկեցիկ կյանք:

Մայիսի 16-ին, երեքշաբթի, դադարում ենք նամակագրության մասին ներկայությունները: Ներկայությունները ընդունվում ենք Վեհափառ Հայրապետին ինդոնեզիայի հայ գաղութի ազգային-կենդանական կյանքի մասին, տալով մանրամասնություններ:

Երեկոյան ժամը 5-ին ներկա ենք լինում վարչության նիստին և ներկայությունները ընդունվում ենք հոգևոր պաշտոնյա հրավիրելու, ազգային հաստատություններն ու հասունարժեք կալվածները ապահովելու կարևոր հարցերը:

Կարգադրվել էր, որ նույն գիշեր հայկական պատարագը, երգչախմբի հետ միասին, երիզի վրա պիտի ձայնագրվեր: Պետք է խոստովանել, որ Սուրբաբայան անմրցելի է իր երգչախմբով ու մեներգիներով: Երգչախմբոր բաղկանում է հետևյալ անձնակազմով: Ներկա ենք իրար հետ, եկեղեցական արարողություններից, ուրարալի, եկեղեցական արարողություններից, քաղաքում պր. ի. ի. Դավթյան, տիկին Մարի Դավթյան, որ իր գեղեցիկ ձայնով լցնում է եկեղեցին և երաժշտական իրավիճակը է պարզում ունկնդիրներին, պր. Արա Հորգանյան և տիկինը, որոնք տարիներ շարունակ պայծառացնում են եկեղեցին սքանչելի նախանձախնդրությամբ, պր. Հովսեփ Պողոսյան, որ, տարիների վաստակավոր երաժիշտ ու երգահանահար, վարպետորեն շարժում է իր մատները ստեղծելի վրա և նոր քաղցրություն ու թարմություն տալիս հայկական մեղեդիներին: Ս. Սեդանին սպասարկում է պր. Արամայիս Հակոբյանը, որ պարզում էր ու ապրումով երգում է սարկավազի բաժինը: Ավստրալիայում եղած ժամանակ, իմ բարեկամ հոգևորականներից շատերը, բուն փափագ էին հայտնել լսելու հայկական պատարագը: Վերադարձիս, նպատակս է Ավստրալիայի դանադան քաղաքների ռադիոկայաններից ձայնասփռել նկմալյան և Կոմիտասյան աննման պատարագները:

Երգչախմբի անդամները ևս նախապատրաստվում են հեռանալու քաղաքից. նրանց մեկնումով եկեղեցին գրեթե կամայանա և ժողովուրդը կզրկվի հոգեկան վայելքից:

Մայիսի 17-ին, չորեքշաբթի երեկոյան, ամբողջ հայության ներկայության կարգում ենք մի ամփոփ դասախոսություն Ավստրալիայի հայ գաղութի մասին: Դասախոսության վերաբերության լինում են հարցումներ, որոնց տրվում է բավարար բացատրություն:

Երեկոյան անցնում է շատ հաճելի: Կանանց բարեգործական միության ժողովան անդամներից տիկնայք Հովհաննիսյան Արգարյանի և Մաման Պողոսյանի պատրաստած համեղ ընթերցան մասնակցում է ամբողջ համայնքը:

Մայիսի 18-ին, հինգշաբթի առավոտ, պր. Նահապետ Նահապետյանի և դուկտ. Սարգսի ընկերակցությամբ, մեկնում ենք Սուրբաբայից ոչ շատ հեռու գտնվող զովասուն ամառանոցներն ու լեռնային վայրերը դիտելու: Երկու ժամից հետո կանգ ենք առնում հանգուցյալ Բագրատ Գալստյանի տան առջև: Բաթու է հոգևոր ալս հանրաժանութ ամառանոցն իր գեղեցիկ տեսարաններով ու բարեխառն կլիմայով: Ամառայություն է տիրում տան մեջ և խորապես հուզում բոլորիս: Ուղեկիցներս քաղաքում են ամառանոցին և մեր շրջագայության ընթացքում մատնանշում են այն գեղեցիկ քնակարանները, որ ժամանակին կառուցվել են հայ հարուստները: Կառուցման ասպարեզում անմրցելի է եղած նույնիքն դուկտ. Սարգսի հանգուցյալ հայրը՝ Դուկաս Սարգսի, որի անունն այնքան սերտորեն կապված է Սուրբաբայ քաղաքի հետ առհասարակ և հայ գաղութի հետ մասնավորապես: Նրա կառուցած հյուրանոցներն ու հոյակապ շենքերը դեռ այսօր էլ շատերի նախանձն են շարժում ու պատիվ բերում հայ անհատի աշխատասիրության ու հեռատեսության: Մինչև կեսօր այցելում ենք լեռնային դանադան վայրեր:

Իմ շրջագայության ընթացքում ակնատես եղանք նաև այրված ու քանդված քաղաքի քնակարանների և քանդված հյուրանոցների: Ինդոնեզիայի հեղափոխության ընթացքում այնքան բուռն է եղած ժողովրդական ցասումն ու ատելությունը հանդեպ հույանդական համառ ու ապիկար կառավարության, որ շեն խնայած նույնիսկ հսկայական գործարաններին ու հաստատություններին:

Ինդոնեզիայի շարքաշ, բարի ժողովուրդն այժմ լծված է ծանր աշխատանքի. շինարարությունն անշուշտ առաջին գծի վրա է գալիս: Երկիրը տնտեսական ու քաղաքական երկուսի շրջան է ապրում:

Հանգստացած ու կազդուրված, շարունակում ենք մեր շրջագայությունը: Այցելում ենք Մալանգ ու Լավանգ, որ ժամանակին ապրել են հայ ընտանիքներ:

Նեղ ճանապարհով ու կածանով բարձրանում ենք Տրենտիս, մեր բարեկամ Նահապետ Նահապետյանի սեփական ամառանոցը: Գիշերում ենք Տրենտիսում և առավոտյան կանուխ վերադառնում քաղաք:

Երեկոյան ժամը 6-ին հատուկ նիստ ենք ունենում վարչության հետ, ուր պաշտոնապես խնդիր ենք հանձնվում եկեղեցական անոթներ ու դրքեր Սիդնի տանելու համար: Վարչության բարյացակամ այս վերաբերմունքը խորապես հուզում է ինձ:

Մայիսի 20-ին, շաբաթ, առավոտյան ժամը 9—11-ը, այցելում ենք քաղաքի հին ու նոր

րությունյանի, Մանուկ Հորդանանյանի, տիկին Մարիամ Հորդանանյանի և օրիորդ Թագուհի Մանուկյանի գերեզմանները և հոգհանդիստ կատարում:

Ջակարտայի հայոց եկեղեցում է դնվում մի գեղեցիկ մահարձան հետևյալ տապանագրությամբ.

«Տիկին Մարիամու Յ. Յարութիւնեանի, ամուսնոյ Յակոբու Յարութիւնեանի Ասպետի, քեռն Գէորգայ Մանուկեանի Ասպետի, հանգուցելոյ ի Բթավիա, ի 4 Մայիսի 1864, ի հասակի 87 ամաց: Տիկինս այլ էր բարեք, հեղ և քաղցր առ ամենեանան, նրկիւղած և ողորմած, մայր որբոց, ասպատան այրեաց, ասպնջական եկաց և նեցուկ տնանկաց: Սուրբ Յովհաննու եկեղեցւոյն և Մանուկ և Յակոբ ասպետներն ամուսնելոյ յանուն գերդաստանի իւրեանց, սա և հանգուցեալ քոր նորին օրիորդ Թագուհի Մանուկեանի նպաստ ելեն բաղձօք հասոյթս և օժիտս առատս հաստատեալ ի պէտս նոցա. բարի զործք նորին յաւերժացուցին զյիշատակս նոցա, յօրդոր լինելով զկենաց հետևիլ օրինակի նոցին: Որմայեց յիշատակսրանքն եկեղեցւոջ և Յուամ ունին զյետադայ արձանադրութիւն, այսինքն հիմնեալ երկուց հայրենասէր քերց.

«Ո Յիսուս, նրբ այն օր սիրական,
Երբ այն ժամ եկեցէ հրճուողական,
Երբ թողի դայս խշտի կաւեղէն,
Առ ի քեզ անդ յերկինս լուսաճեմա:

Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գտցեն:

Մահարձանս այս կառուցաւ ի գորովալից եզրօր որդոյ նորին, ի Զօրաբայ Մանուկեան Ասպետի որ ի Կալկաթաս:

Նույն օրը, ժամը 12-ին, հանդիպում ենք Ինդոնեզիայի փոխ-նախագահին, որը մեզ ընդունում է շատ սիրալիք և երկարորեն հետաքրքրվում հայ զաղութի անցյալով և ներկայով: Համառոտ կերպով տալիս ենք եկեղեցու պատմական և մասնավորապես շնորհում շնորհալի քույրերի կատարած նվիրատվութիւնները ոչ միայն հայ զաղութի, այլև Ջակարտայի և տեղացիների համար: Հայ զաղութի անունից խնդրում ենք զոնե խնայել պատմական եկեղեցին: Պր. Փոխ-նախագահը խոստանում է կարեկցարար քննության առնել մեր խնդրանքը:


Երեկոյան, պր. Նահապետյանի և տիկին Ռոզիկի Ոսկանյանի հետ միասին, ներկա ենք լինում Ջակարտայի պետական երգի ու պարի հանդեսին:

Ինդոնեզիան բաղկացած է մեծ ու փոքր զանազան կղզիներից: Ունկնդիրների վրա լավագույն տպավորութիւն թողեց Սումատրա կղզու խումբը իր երգերով ու մանավանդ շնորհալի պարերով:

Հունիսի 7-ին, շորեքշաբթի, Ինդոնեզիոյ վերագառնում ենք Սիդնի:

ԱՐԱՄԱՅԻՍ ՔԱՀԱՆԱ ՄԻԴԱՅԱՆ





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներով, 1962—1964 տարիներին, արքուքյան պատիվ է շնորհվել՝

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսին (23 հունվարի 1963 թ.).

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոսին (10 հոկտեմբերի 1962 թ.).

Սրբոց Հակոբյանց Մաշր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյանին (20 հունվարի 1964 թ.).

Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանին (20 հունվարի 1964 թ.):

Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Ապատյանին (27 հունիսի 1964 թ.):

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՁԻ ՇՁԱՆՇԱՆԻ
ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Վերջին երեք տարիներում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներով, Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշաններով պարգևատրվել են Մայր Աթոռի հետևյալ հարազատ գավակները, իրենց աստվածամհա, եկեղեցաշեն և ազգանվեր գործունեության համար.

Կյուլպենեկյան Ռաստատության խնամակալության խորհրդի անդամ, Փալմեյայի մեծահարգ դուքսը (Լիսաբոն).

Մեծահարգ Հայկ Ղազարոսյան (Միլանո).

Մեծահարգ Թորգոմ Ղազարոսյան (Բելյուրթ).

Մեծահարգ Վահան Մալեպյան (Նիցցա).

Մեծահարգ Զավեն Պալեար (Բոստոն).

Մեծահարգ Վարդգես Մկրտչյան (Նյու-Յորք).

Մեծահարգ Հարություն Հազարյան (Նյու-Յորք).

Մեծահարգ Էժեն Փափապյան (Կահիրե).

Մեծահարգ Վարդան Բարակյան (Բուենոս-Այրես).

Մեծահարգ Օժեն Փափապյան (Կահիրե).

Մեծահարգ Մարք Շահինյան (Յունիոն-Սիտի).

Մեծահարգ Մանուկ Մարտին (Սպահան).

Մեծահարգ Միհրան Թոգաթյան (Ալեքսանդրիա).

Մեծահարգ Կարպիս Ճընկլերյան (Լիոն).

Մեծահարգ Ստեփան Սրապյան (Միլանո):

ՎԱՐՉԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՁԱՆԱԶԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներով, վերջին երեք տարիներում (1961—1964), վարդապետական լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել հետևյալ վարդապետներին՝ նրանց հովվական, վարչա-

կան, կրթական և հոգևոր ծառայությանը որպես տրիտուր.

Հոգեշնորհ Ս. Վաչե վարդապետ Հովսեփյանին (Նյու-Ջերսի).

Հոգեշնորհ Ս. Եղիշե վարդապետ Կիսիրյանին (Ուստըր).

Հոգեշնորհ Ս. Վապգեն վարդապետ Թաթոյանին (Տորոնտո).

Հոգեշնորհ Ս. Շնորհք վարդապետ Գասպարյանին (Սան-Պավլո).

Հոգեշնորհ Ս. Ներսես վարդապետ Պողպալյանին (Ս. Էջմիածին).

Հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Պալլանին (Ս. Էջմիածին).

Հոգեշնորհ Ս. Գրիգոր վարդապետ Եղիայանին (Ս. Էջմիածին).

Հոգեշնորհ Ս. Դավիթ վարդապետ Սահակյանին (Կալկաթա).

Գերաշնորհ Ս. Էմիլիանոս եպիսկոպոսին (Ստամբուլ):

ԱՎԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական անբասիր և երկարամյա ծառայությունների համար, 1961—1964 թվականներին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներով և թմական առաջնորդների միջնորդությամբ, ավագության պատվի են արժանացել հետևյալ քահանա հայրերը.

Արժանապատիվ Ս. Բաբգեն ավագ քահանա Մազսուտյան (Բոստոն).

Արժանապատիվ Ս. Նահապետ ավագ քահանա Գարայան (Խասկովո).

Արժանապատիվ Ս. Աշոտ ավագ քահանա Տեր-Հարությունյան (Մանչեստր).

Արժանապատիվ Ս. Աստվածատուր ավագ քահանա Գասպարյան (Սան-Պավլո).

Արժանապատիվ Ս. Սահակ ավագ քահանա Շաքարյան (Կահիրե).

Արժանապատիվ Ս. Վռամշապուհ ավագ քահանա Ղարիբյան (Լիոն).

Արժանապատիվ Ս. Նորայր ավագ քահանա Տեր-Խորենյան (Բուենոս-Այրես):

ՋԱԶԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱՆԱԶ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՁ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներով, 1961—1964 տարիներին, երկարամյա և անբասիր ծառայության համար, քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել.

Արժանապատիվ Ս. Բաբգեն քահանա Մազսուտյանին (Բոստոն).

Արժանապատիվ Ս. Առնակ քահանա Գասպարյանին (Դիտրոյտ).

Արժանապատիվ Ս. Արտեմ քահանա Աշճյանին (Ուոտերտաուն).

Արժանապատիվ Ս. Լևոն քահանա Առաքելյանին (Ֆիլադելֆիա).

Արժանապատիվ Ս. Գուրգեն քահանա Համբարյանին (Երևան).

Արժանապատիվ Ս. Եղիշե քահանա Վարդանյանին (Կոտայք).

Արժանապատիվ Ս. Հարություն քահանա Տերտերյանին (Վեդի).

Արժանապատիվ Ս. Գեղամ քահանա Տեր-Գեղամյանին (Հոկտեմբերյան).

Արժանապատիվ Ս. Գևորգ քահանա Անմեծյանին (Ալեքսանդրիա).

Արժանապատիվ Ս. Ղևոնդ քահանա Փափապյանին (Ալեքսանդրիա).

Արժանապատիվ Ս. Պողոս քահանա Պետրոսյանին (Կալկաթա).

Արժանապատիվ Ս. Մաշտոց քահանա Թյուֆենկճյանին (Բոմբեյ).

Արժանապատիվ Ս. Թորգոմ քահանա Զոստենյանին (Լիոն).

Արժանապատիվ Ս. Կարապետ քահանա Հովնանյանին (Բաքու):

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայրապետական բարձր գնահատության արժանացողներին և բոլորին բարեմաղթում եկեղեցական և հանրագույն հետազա նոր հաջողություններ, ի սպաս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի:



ՊՐՈՖԵՍՈՐ ՎԼԱԴ ԲԸՆԸՑԵԱՆՈՒ (1900—1963)

Հայագիտությունը կարկառուն դեմք մը և հայ ժողովուրդը թանկագին բարեկամ մը հողը դրին։ Պրոֆ. Վլադ Բընըցեանուի մահով, որ տեղի ունեցավ 1963 Նոյեմբեր 8-ին Բուքրեշի մեջ, անոնք կորսնցուցին մեկն այրացառիկ այն օտարներեն, որոնց շահագրգռությունը դեպի հայ ժողովուրդի հոգեկան արժեքները հոգեպես ալ կապեր էին զանոնք հայության, և զորս հայ ժողովուրդը ինքն ալ կսգա հետևարար հարազատի մը պես։

Հայ ժողովուրդով շահագրգռվող ուումն մտավորականներ եղեր էին Բընըցեանուն առաջ ալ։ Հաշդեուն էր եղեր, որ առաջին անգամ իր գիտական հետազոտությանց դաշտն էր մտցուցեր հայ ժողովուրդի անցյալը ուումն հողի վրա, և առաջին անգամ լույսին հաներ հայուն վատնած ճիգը ասպնջական այս երկրին համար։ Հաշդեուն էր, օրինակ, որ փորձեր էր ապացուցանել հնագույն հայ կորիզի մը գոյությունը ուումն երկնքի տակ, Արճեշի կապը հայ ժողովուրդին հետ, ինչպես նաև հայ քարավաններու բերած նպաստը ուումն քաղաքներու կազմության առթիվ Մոլդովայի մեջ։

Պրոֆ. Նիկոլա Յորգան էր եղեր սակայն, որ ավելի խորունկեն էր հետազոտեր հայ ժողովուրդի անցյալը, ըլլա իր իսկ դարավոր պատմության, ըլլա ուումն հողի վրա իր ապրած դարերուն մեջ։ Ռումեն ժողովուրդի կյանքը և աշխարհի ժողովուրդներու անցյալը

ուսումնասիրած ժամանակ, ան շատ հաճախ դեմ հանդիման եկած հայության խաղացած դերին և մատուցած ծառայություններուն, հայ ժողովուրդը ևս ներմուծեր էր իր գիտական մտահոգությանց մեջ, հետզհետե ավելի գնահատելով և ավելի սիրելով զայն հոգեկան այն արժեքներուն համար, որոնցմով ողողված է հայ պատմությունը, և այն քրտինքին համար, զոր հալը թափած է իր ոտք կոխած տեղը։

Բընըցեանու փորձեց շարունակել Յորգայի կես ձգած գործը։ Իդուր չէր, որ Բընըցեանուն իր մեծ վարպետները հիշած ժամանակ, Անտուան Մեյենն, Ֆրեդերիկ Մակլենեն և Լուի Մարիեսեն առաջ Յորգան կհիշատակեր։ Անոր պատմական երկերով էր, որ սնած էր ինք իր ուսանողության տարիներուն, անկե էր ստացեր իր առաջին խրախուսանքները և անոր թելադրությամբն ու պաշտպանությամբն էր, որ ուսանելու էր գացեր Փարիզ։ Անկե էր ժառանգեր նաև շահագրգռությունը գեպի հայ ժողովուրդը, շահագրգռությունը, զոր ինք ևս այնքան ջերմ պիտի պահեր մինչև իր վերջին շունչը։

Պրոֆ. Յորգային պես, Բընըցեանուն ալ հայ ժողովուրդը ճանրցավ կանուխեն։ Ան իր պատանեկությունը անցուցեր էր քաղաքի մը մեջ, որ անդրանիկ օրրանն էր եղեր Մոլդովայի հայության, և ուր անհետացած գացած հինգ դարեր դեռ կշնչին ամայի գույզ մը վանքերու և գույզ մը թափուր եկեղեցիներու

մեջ, Փուլթ չէ, թե նոսրացած էր արդեն վաղուց հայ գերդաստաններու թիվը Մուղղավայի անդրանիկ այդ մայրաքաղաքին մեջ ու զայն շենցնող հայ քարավաններուն շառավիղներեն այլևս հետք չէր մնացած, փուլթ չէ, թե անոր փողոցներուն մեջ արդեն չէր լսվեր հայ լեզուն և հին գաղութի մը վերջին ճիւղերը հայ աղոթքներն անդամ չէին հասկընար: Հին օրերը այնուամենայնիվ դեռ իրենց փառքը կը շնչեին Անիի այս ավերակներուն մեջ ու կը գացնեին, թե հայն ալ անցած է այստեղէն:



Սնած 1900 թվականի ագոստոս 22-ին Տիմիշոարայի մեջ և նախնական կրթութիւնը ստացած այնտեղ, Սուլավայի մեջ էր, որ իր երկրորդական ուսումն ավարտեց Բընըցեանուն, Զերնովեցի համալսարանն անցնելու համար հետո և հետեւելու համար իրավաբանական և քանասիրական ուսմանց, իրավաբանութիւնը ավարտելով 1921-ին, և երկու տարի ետքն ալ, 1923-ին, ստանալով իր վկայականը քանասիրական ճյուղէն: Պահ մը ուսուցչական պաշտոն վարելէ հետո Սիրեթի լիսին մեջ, պաշտոնակից ունենալով Գլխան, որ իր կյանքի ընկերը պիտի ըլլար շուտով, Զերնովեցի համալսարանը հրավիրվեցաւ գրադարանապետի պաշտոնով, և միեւնոյն ժամանակ զբաղեցաւ քանասիրակա՛յ պրպրտումներով, ու ժողովինս լիտերարը հանդեսին մեջ իր հրատարակած քանի մը հոդվածները 1924—1925 տարիներուն ուշադրութիւնը գրավեցին պրոֆ. Յորգային, որուն միջամտութեամբ Փարիզ զրկվեցաւ Վլադ, մասնագիտանալու համար քանասիրական գիտութեանց մեջ:

Փարիզի իր ուսանողական տարիներէն իսկ կսկսի իր առաջին շփումը հայ ուսմանց հետ: Ան նախ կը քաղի լատիններէնով Մ. Ա. էրնուստիի հսկողութեան տակ, լայնցնելով հետո իր գիտական հետաքրքրութեանց շրջանակը և պարապելով սանսկրիտով, այբաններէնով և հունարէնով ևս, ու կհետեւի Ա. Մեյեի, Ի. Վենդրիսի, Ի. Բլոկի, Լ. Ֆինոյի, Է. Բենվենիստի և ուրիշներու բոլոր դասընթացներուն: Բայց Մեյեի խորհուրդով է, որ կուզե խորանալ հայ լեզվի ուսումնասիրութեան մեջ, հետեւելով Ֆրեդերիկ Մակլիերի դասերուն Արեւելյան կենդանի լեզուներու վարժարանին, ինչպէս և Լուի Մարիեսի դասընթացքին կաթոլիկ ինստիտուտին մեջ, շարունակելով միեւնոյն ժամանակ այբաններէն ուսանիլ Մարիո Մոկքի, հունարէն և պարսկերէն՝ էմիլ Բենվենիստի, կեղտական լեզուներ՝ Ի. Վենդրիսի, ինչպէս նաեւ

սանսկրիտ լեզուն՝ Ի. Բլոկի, Լ. Ֆինոյի և տիկին Վիլմանգրարովսկայի մոտ: Ուսանողութեան սույն տարիներուն է, որ ավելի քան տարի մը ուսումնասիրութիւններով կապալայի Լոնդոնի և Գուրլիսի մեջ, լրացնելու համար իր ծանոթութիւնները իռլանդական լեզվի մասին:

Ուսանողութեան նույն այդ տարիներուն է, որ Բընըցեանուն լատիններէնի և կեղտական լեզուներու հետ կապված ուսումնասիրութիւններ հրատարակեց «Mélanges de l'Ecole Roumaine en France» (1926), «Codrul cosminului» (1928) և «Zeitschrift für celtische philologie» (1929) հանդեսներուն մեջ, պարապելով միեւնոյն ժամանակ, Լուի Մարիեսի հսկողութեան տակ, «La traduction arménienne des tours participaux grecs» աշխատութեան վրա, որ իր ավարտաճառը պիտի ըլլար, և որ Բուքրէշի մեջ լույս պիտի տեսներ շատ ավելի ուշ, 1937-ին միայն:

Ավարտելէ հետո 1928-ին Ecole nationale des langues orientales vivantes-ի և Institut catholique-ի դասընթացները և տարիներ մը ավելի ուսումնասիրութիւններով պարապելէ հետո Անգլիոյ և Իռլանդայի մեջ, Բընըցեանուն հայրենիք վերադարձաւ 1930-ին, հիշյալ հիմնարկութիւններէն իր համապատասխան վկայականներն ստանալու համար ավելի հետո, իր ներկայացուցած ավարտաճառերու հիման վրա:

Փարիզէն դարձին, Վլադ Բընըցեանուն հաստատվեցաւ Զերնովեցի Այն օրվան պայմաններուն տակ հնարավոր չեղաւ տեղվոյն համալսարանին մեջ պրոֆեսորի ամբիոնն ապահովել իրեն, ինչպէս ան դառնութեամբ կարձանագրե հիշատակազրի մը մեջ, զոր մահէն հազիվ ամիս մը առաջ ներկայացուց պատկանյալ իշխանութեանց, որպէսզի գոնէ 33 տարի հետո իրեն շնորհվի տիտղոս մը, որուն արժանի կըներ զինք իր գիտական պատրաստութիւնն ու տասնյակ տարիներու գործունեութիւնը: Այնպէս որ, Փարիզէն դարձին privat-dozent-ի պաշտոնը միայն տրվեցաւ իրեն 1930-ին, պաշտոն, զոր ան շարունակեց վարել ամբողջ ութ տարի, մինչև 1938, երբ հազիվ շնորհվեցաւ իրեն conferecier-ի տիտղոսը: Եվ սակայն բացառիկ եռանդի և ոգնորութեան տեր երիտասարդը, որ Բընըցեանուն էր, այդ համեստ պաշտոնով ալ զոհացաւ իր գիտական գործունեութիւնը առաջ տանելու համար, նախ իբրեւ դասախոս հնդեվրոպական համեմատական քերականութեան, որու շրջանակին մեջ կտմնեին դասական հայերէնի, սանսկրիտի, հին պարսկերէնի և այբաններնի տարբերը, և հետո իր քանասիրական աշխատանքներով:

որոնք առավելապես նվիրված էին հունարենի, արաբերենի և իտալերենի հետ կապված նյութերու, և զորս լույս ընծայեց 1933—1936 տարիներուն, «Boabe de graiu», 1933—1936 տարիներուն, «Gând rominesc», «Condruș cosminului» և առանձին գրքերով, հանդեսներուն մեջ և առանձին գրքերով, Ավելցենք, որ 1933-ին Ալբանիա այցելեց գիտական առաքելությամբ մը և, դարձին, հատորի մը մեջ ամփոփեց իր տպավորությունները այդ երկրին:



Ան մոռցած չէր նաև ժողովուրդը: Նույն այդ տարիներուն կըրադեր և անով: Բընըցեանուի շահագործությունը դեպի հայ ժողովուրդը չսահմանափակվեցավ միայն լեզվաբանական մարզի մեջ: Ան սկսավ պրպտել նաև անոր անցյալը և ի մասնավորի հոգեկան այն նվաճումները, զորս իրականացուցեր էր ան իր ալեկոծ կյանքի ընթացքին, իր ուրույն տեղը արձանագրելու համար քաղաքակրթության հետամուտ ժողովուրդներու շարքին: Պրոֆ. Բընըցեանու զանց չըրավ նաև հայ ժողովուրդի ստեղծած դադութներուն ամենին կենսունակներին մին, որ Ռումանիո հայ գաղութին էր, և ուզեց լույսին հանել քաջատիկ նպաստը, զոր ան ընծայեր էր ասպնջական այս հողին:

Բայց իր անդրանիկ շփումը հայ ժողովուրդին հետ 1937-ին էր որ սկսավ ան: Այն քանի մը քանախոսությունները, զորս ան ըրավ Բուքրեշի մեջ նույն տարվան մայիսին հայ մշակույթին և Ռումանիո հայ գաղութի մասին՝ առաջին առիթը եղան հայ մտավորականության և հայ լայն խավերու հետ սերտ կապ մը սկսելու: Եվ անկե հետո մինչև իր մահը, ավելի քան քառորդ դար, կապված մնաց ան հայ ժողովուրդին հետ:

1937-ին էր, որ, ինչպես հիշեցինք, Բուքրեշի մեջ լույս տեսավ իր ավարտաճառը, ինչպես նաև Ռումանիո հայ գաղութի մասին իր կատարած քանախոսությունը առանձին գրքուկով¹:

Հաջորդ տարին, 1938-ին, Թեքենիկ դժվարությանց և նյութական քացառիկ դժոգությունց զնով էր, որ Բընըցեանուն ուզեց իրականացնել իր հիմնական մտահոգություններին մեկը, այն է հեղինակական ուսումնասիրությանց պարբերական մը, անոր շուրջը համախմբելով ուսման և օտար գիտնականներու կարևոր թիվ մը: Այս հանդեսին մեջ²,

որ ընդհատաբար չորս տարի լույս տեսավ, Բընըցեանուն գրեթե չգրադեցավ հայ քանասիրության հետ կապված նյութերով, այդ առնչությամբ նոր հետազոտություններ կատարելու առիթ ունեցած չըլլավ: Եւ այդ տարիներուն, Այնտեղ իր ստորագրած հոդվածները առավելապես հունական ուսմանց հետ առնչություն ունեին:

Հետագային էր միայն, որ հայկական ուսմանց նվիրված պարբերականի մը ծրագրեր իր մտահոգությանց մաս պիտի կազմեր: Այդ ծրագրերը պահ մը իրականանալու հույսով պիտի տար տասնյակ տարիներ հետո, երբ Բընըցեանուն 1960-ի Մոսկվայի արևելագիտական միջազգային համադոմարի օրերուն հրապարակ դրավ զայն: Եվ հակառակ անոր, որ միահամուռ հավանության արժանացավ իր առաջարկը և հակառակ նաև իր կողմն թափված ճիգերու, կարելի չեղավ իրականություն դարձնել զայն:

Պայմանները այնպես մը բրին, որ Բընըցեանուն ժամանակ մը րաժնվի իր ուսումնասիրությանց սեղանին, եթե չհաշվենք իր քանի մը քրոնիկներն ու գրախոսականները, 1949—1951 տարիներուն, Բուքրեշ լույս տեսնող «Cum vorbim» հանդեսին մեջ, Միուկողմն, պարագաները դիմքը հետո պահեցին դասախոսական տմբոններն ալ և 1948-ին էր միայն, որ իրրե confrencier հեղինակական քաղաքական քերականություն ավանդելու հրավիրվեցավ Բուքրեշի համալսարանի գրականության մասնաճյուղին մեջ, միևնույն ժամանակ դասական հայերեն դասախոսելով ուսման ակադեմիայի պատմության ինստիտուտին ադրնթեր սլավական և արևելյան լեզուներու վարժարանին (1948—1953), և, ավելի հետո, լատին ու հին-սլավ լեզուներ՝ անկվարժական ինստիտուտին մեջ (1954—1957):



Իր կյանքին վերջին տասնամյակին էր, որ Բընըցեանուն պիտի գրավեր առավելապես հայկական ուսումնասիրություններով: Բուքրեշի հայերեն «նոր կյանք» շարաթաթերթին իր աշխատակցությունը, որ կ'սկսեր 1954-ի աշնան և որ պիտի տներ մինչև իր մահը, առիթ ու խթան եղավ միևնույն ժամանակ, որպեսզի ընդլայնի իր շահագործությունը դեպի հայ ժողովուրդը, դեպի անոր անցյալն ու ներկան: Բազմաթիվ տասնյակ գրություններ, զորս ստորագրեց այնտեղ ամբողջ 9 տարի (1954—1963) գրեթե անընդհատ, հիշատ է, երբեմն լրագրական պարզ հոդվածներ էին տոնական առիթներով գրված, կամ տեղեկություններ, ճամբու նոթեր ու գրախոսական-

¹ „Armenii in Istoria si in viata româneasca“ Bucuresti, 1937, 57 p.

² „Revue des études indoeuropéennes“, I (1938), II (1940), III (1943), IV (1947).

ներ, բայց անոնք բոլորն ալ կրխեին ջերմ հետաքրքրութենն մը ամեն ինչի հանդեպ, որ հայ կյանքի հետ կապ ունենալու:

Իր հրատարակած հոդվածներեն կարևոր մաս մը հայ ժողովուրդի անցյալին կվերաբերէր: Այդ կարգին են իր այն գրութիւնները, որոնք իբր նյութ ունենին «Հայ մը իբր Բարեկոնի ժողովրդական ապստամբության մը պարագային», «Առաջին տեղեկությունները Հայաստանի մասին և Դարեհի դեմ հայ ժողովուրդի ապստամբության ընկերային-սոսիալական ներքին ծալքը», «Հայ Արշակունիներու ծագման հարցը», «Հին Հայաստանի մեջ քաղաքներու զարթի կապակցութեամբ», «Հին հայերու տոմարը», «Արարական աղբյուրները Հայաստանի մասին», «Հայերը Բալկանյան միջնադարյան քաղաքներու ապագրական կազմության մեջ», «Քուլտարական քաղաքներու և անոր աղբյուրները Արևմտյան նվաճողի մեջ», որոնցմէ վերջին երկու հոդվածները իր միջամտություններն էին Բալկանյան քաղաքակրթության մասին «Յունեսկո»-ի հովանավորությամբ 1962-ին Սինայայի մեջ տեղի ունեցած միջազգային խորհրդակցության ընթացքին:

Դարեհի Բեհիստունյան արձանագրությանը և հին Հայաստանի մեջ քաղաքացիական մը մասին իր գրությունները նոր մշակումով մը լույս տեսան ֆրանսերեն ալ:

Պրոֆ. Բրնքեհանու հոդվածներ նվիրեց նաև Ռումանիո հայ գաղութի անցյալին հետ կապված նյութերու: Այդ կարգի հոդվածներ էին «Հին հայկական վիսայություններ Մուղդուսի քաղաքներուն մասին» և «Քուլտուրա դե Արժեքի նպաստողական եկեղեցիի հայ հարտարապետները», երկուքն ալ գրված հայերու կատարած գերը շնորհիւ մտահոգութեամբ: Այս շարքին պետք է կցել նաև այն հոդվածները, որոնց մեջ Բրնքեհանու քննության առաջ հայկական անվանակոչումները ռումանական տեղանուններու մեջ, փորձելով ապացուցանել այդ կերպով հայերու վաղեմի ներկայությունը ռումեն հողի վրա, և մասնավորաբար գյուղական շրջաններու մեջ, ինչ որ կուզար եթէ ոչ հերքել, գոնե լրացնել վաղուց արմատ դրած այն տեսությունը, թե հայերը առավելագույն քաղաքներու մեջ է, որ հաստատված էին: Որքան ալ մարդ համամիտ չլիս իր հայտնած հանդուգն կարծիքներին շատերուն, որոնք ռումանական զանազան տեղանուններ կուգեին անպայման հայ բանորմի մեկնել, սակայն չի կրնար ժխտել շահեկանությունը իր ձգտումին՝ լեզվաբանական տվյալները օգնության կանչելու պատմական

հետազոտությանը: Ավելցնենք, որ ռումանական տեղանուններու նվիրված իր զննությունները այլուր լույս ընծայեց ռումաներեն⁴ և ռուսերեն՝ լեզուներով ալ:

Ռումեն անցյալին մեջ հայերու ընթաց նպաստը լուսարանելու կծառայի նաև իր պրպտումները այն հայ անձնավորությանը մասին, որոնք քաղաքիկ գեր կատարած էին այդ անցյալին մեջ: Իր նույն պրպտումներուն արդյունքը Բրնքեհանու հրատարակեց «Հայկական ժագում ունեցող քարձրաստիճան պաշտոնյաները հին Մուղդուսում» խորագրին տակ:

Լրագրական իր հայերեն հոդվածներուն մեջ կարևոր թիվ մը կաղմեցին հայագիտության վիճակին մասին իր ստորագրած շահեկան գրությունները, որոնց մեջ հաջորդաբար ներկայացուց հայագիտական աշխատանքները, որոնք տեղի ունեցած էին և տեղի կունենային ժողովրդական դեմոկրատիայի երկրներուն, Արևմտյան նվաճողի (Իտալիա, Ֆրանսա, Ավստրիա, Դաշնակցային Գերմանիա, Բելգիկա, Անգլիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Արարական Արևելքի և Հնդկաստանի ու վերջապես Սովետական Հայաստանի մեջ, այս առթիվ մասնավորաբար ծանրանալով Երևանի մեջ կատարված աշխատանքներուն վրա քաղաքագիտության, ինչպես և գրաբարի և ժամանակակից հայերենի ուսումնասիրության մարզերուն մեջ:

Այցելությունը, զոր 1961-ին կատարեց Սովետական Հայաստան և ուրկն վերադարձավ խանդավառ ու թարմացած, առիթ մը եղավ լայն խավերը ևս հաղորդակից ընելու իր ապրած ոգևորության, ոչ միայն իր սպավորությունները պատմելով քեմերեն, այլև զանոնք ներկայացնելով իր հայ ընթերցողներուն ալ, մասնավորաբար ծանրանալով այն աշխատանքներուն վրա, որոնք տեղի կունենային Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և գիտություններու ակադեմիայի գիտական ինստիտուտներուն մեջ: Եվ անկե հետո տեսակ մը առաքելություն համարեց իրեն արտասահմանին ծանոթացնելու մշակութային գործունեությունը, որուն լծված էր գիտնականներու և բանասերներու սովոր խումբ մը մայր հողի վրա:

Լրագրական իր հոդվածներու շարքին Բրնքեհանու շնորհավ այսպես նաև նոր օրերու հայ մշակույթը, խոսելով գեմերու վրա,

⁴ „Studii si cercetări de lingvistică“, IX (1960), № 1, p. 73—101.

⁵ «Աստմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 171—181.

⁶ «Բաները Մատենադարանին», № 71 (1962), էջ 262—282.

⁷ „Studia et acta orientalia“, I (1958), p. 68—81, 351—356.

նույն ինստիտուտի գիտական հանդեսին՝ «Լեզվաբանական ուսումնասիրություններ և հետազոտություններ» պարբերականին, ինչպես նաև մասնագիտական ուրիշ պարբերականներում, գլխավորաբար հայ լեզվաբանությունը շահագրգռող ուսումնասիրություններ հրատարակելով անոնց մեջ:

Այդ տարիներում իր լույս ընծայած հոդվածներն էիշենք.

«Նրափորակերպ-լեզուք «Ե» մասնիկը դասական հայերենի մեջ»¹⁰.

«Ուրարտական ածանցները դասական հայերենի մեջ»¹¹.

«Մատանվանց տերմինաբանությունը հայ լեզվի մեջ»¹².

«Հայոց ցեղային ծագման վերաբերյալ հարցեր»¹³.

«Գիտություններ ի մասին թուփերու տերմիններուն հայ լեզվի մեջ»¹⁴.

«Հայ լեզվի մեջ ուրարտական բառամթերքի հարցը»¹⁵.

«Ուրարտական ձևաբանական և շարահյուսական ձևեր դասական հայերենի մեջ»¹⁶.

«Ուրարտական ածանցներ դասական հայերենի մեջ»¹⁷.

Հայկական ուսմանց առնթքեր, Բընըցանուն շրջց նաև իր գիտական շահագրգռություննց մյուս կալվածները, Բացի լատիներենի, հունարենի, իտալերենի և արաբերենի հետ կապված իր ուսումնասիրություններն, ան բացառիկ նախասիրությունն ցույց տված զեպի հնդեվրոպական լեզուներու մայր օրրանը՝ Հնդկաստանը, հետազոտությանց նյութ դարձնելով սանսկրիտ լեզուն, և միևնույն ժամանակ հնդկի հին և նոր մշակույթը, Հնդկական ուսմանց հանդես իր այս շահագրգռությունը ի հայտ եկավ մաշավանդ հնդկի մեծ գրագետին՝ Ռարինգրանաթ Տագորի հորեյանի օրերուն: Այդ օրերուն ոչ միայն հանդես եկավ Տագորի մասին հրապարակային ելույթներով, այլ նաև բազմաթիվ հոդվածներով դանազան պարբերականներում էլ բն, ուր ան կուսումնասիրեր Տագորի իր գործունեության դանազան երևաններուն մեջ, ինչպես «Տագորը և իր քաղաքական բմբռնություններն ու գործունեությունը», «Հառաչդիմական երկույթներ Տագորի դրամաներուն մեջ», «Տագորը և հնդկի գրականությունը», «Տագորի քաղաքական պոեզիան», «Տագոր, մարտնչողն ու գրողը», «Տագոր վիպասան», «Տագոր Բենգալի բանաստեղծը» և այլն. սովոր ուսումնասիրության մը մեջ ներկայացնելու համար ի վերջո «Ռարինգրանաթ Տագորի կյանքն ու գործը», ուսումնասիրություն, որ ցարդ անտիպ կմնա: Բընըցանուն մեկն եղավ նույնպես Սովետական Միության գիտությանց ակադեմիայի կողմից Տագորի նվիրված մեծարանքի հատորին¹⁸ հոդվածագիրներն, գրելով Տագորի ընկերային-քաղաքական ըմբռնումներու բարեշրջման մասին, և Տագորի գործին հետազոտման մեջ իր ունեցած գործունեության համար սովետական հանձնախումբն ստացավ «Տագորի հորեյայանական մեղալը»-ը:

Ավելցնենք, որ Բընըցանուն շրջապատում ցավ իրավաբանության հանդես իր ցույց տված վաղեմի շահագրգռությունն ևս, ոչ միայն շարունակելով ուսումնասիրել պարսկական լեզուն, այլ և լույս ընծայելով դասական հնդկերեն և հաղորդագրություններ, որոնցմե մեկն էր գրությունը Իրանի և Ռումանիո մշակութային և պատմական կապերու մասին¹⁹.

Իր գրի աշխատանքները չկրցան դինքր հեռացնել սակայն իր հիմնական նախասիրությունն, որ ուսուցչական բեմն էր: Վերջին տարիներուն դասական հայերենը դասախոսելու կոչվեցավ դարձյալ, այս անգամ Բուքարեշի համալսարանի բանասիրական մասնաճյուղին մեջ, և զայն դասախոսեց մինչև իր մահը, հայագետներու նոր խումբ մը պատրաստելու մտահոգությամբ:

Բընըցանունի կյանքին վերջին երեք տարիները հայ ժողովուրդի հետ իր ամենն սերտ կապին և անոր հանդես իր ամենն ջերմ շահագրգռության շրջանն եղավ: Սովետական Հայաստան իր այցելությունը 1961-ին առիթ եղավ, որ ան կապեր ստեղծ Սովետական Հայաստանի գիտական շրջանակներուն հետ և դասախոսական ելույթներ ունենա Հայաստանի գիտությանց ակադեմիայի, համալսարանի և Մատենադարանի մեջ: Ան առիթ եղավ նմանապես, որ Բընըցանուն սկսի աշխատակցի Երևանի մասնագիտական պարբերականներուն, ինչպես «Տեղեկագիր»-ին, «Բանբեր Մատենադարանի»-ին և «Պատմաբանասիրական հանդես»-ին, որուն խմբա-

¹⁰ „Materialele sesiunii științifice a Institutului pedagogic“, București, 1957.

¹¹ „Studii și cercetări de lingvistică“, București, XI (1960), № 1, p. p. 73—101.

¹² Idem, XI (1960), № 3, p. p. 359—375.

¹³ Idem, XII (1961), № 3, p. p. 375—396.

¹⁴ Idem, XII (1961), № 4, p. p. 637—662.

¹⁵ Idem, XIII (1962), № 2, p. p. 257—279.

¹⁶ Idem, XIV (1963), № 2, p. p. 219—231.

¹⁷ „Revue de linguistique“, Bucarest, VI (1961), № 9, p. p. 95—117.

¹⁸ „Работниград Того“, Сборник статей, АН СССР, 1961, стр. 201—209.

¹⁹ „Revue de la faculté des lettres de l'université de Téhéran“, vol. V (1958), № 4, p. p. 12—30.

գրական մարմնին մաս կկազմեր. Հայաստանի գիտություններու ակադեմիայի նախագահության հատուկ որոշումով:

Այժմը ընդմիջտ փակած միջոցին, հրատարակության համար զանազան պարբերականներու հղած էր արդեն տասնյակ մը նյութեր, ուսումնասիրություն թե գրախոսական, որոնցմէ մասնա մամուլի տակ էին արդեն, ինչպես «Neues zu den «Vorindischen Sprachresten Vorderasiens» («Die Sprachreste Vorderasiens» («Urartu und Armenien» («Das Altertum», Berlin), «Բարբառագիտական հետազոտություններ Սովետական Հայաստանի մեջ» («Buletinul facultății de filologie a universității, Timisoara»). Տիմիշոարայի համալսարանի «Անալ»-ներուն մեջ ևս տպագրվելու վրա էին իր կարգ մը գրախոսականները իրավարանական և հնդկաբանական զանազան հրատարակությունց մասին, իսկ «Studia et acta orientalia»-ի վեցերորդ գրքին համար հանձնած էր գրախոսականներ Քանթեր Մատենադարանիս-ի Գ—Ձ հատորներուն, հունգար հայագետ է. Շուպի երկերուն և Հրաչյա Աճառյանի Հայոց լեզվի լիակատար քերականության Գ հատորին և «Պերեդենասիատիս-թի սրոտեիկ»-ի մասին:

Տպագրելու սահմանված իր հոգվածներուն մեջ հիշենք «Պատմա-բանասիրական հանդես»-ին իր հղած ուսերեն շորս նյութերը՝ «Հայագիտությունը Արեւմտքի երկիրներուն մեջ», «Armiano-vediaskie izoglosi», «Ergativnii stroi v armianskom iazike», «Vlania urartskogosbstrate na struktura armianskogo iazika», ինչպես նաև գիտությանց ակադեմիայի «Տեղեկագիր»-ին իր ուղարկած «Ինչ-ինչ հարցեր հայկական ազգանուններու մասին ուսմանական երկիրներուն մեջ» և «Հայերը ուսմանական երկիրներու ընկերային և մշակութային կյանքին մեջ», նույնպես ուսերեն:

Ասկե դատ, մահն քանի մը օր առաջ, նոր Գեւհի մեջ զամարվելիք արեւելագիտական միջազգային 26-րդ համագումարին ուղարկած էր «The Urartian substractum in the classical armenians» և լրացնելու վրա էր երեք դասախոսություններ, զորս պիտի կարդար Երևանի մեջ, եթե մահը վրա չհասներ մեկնումի ճիշտ նախօրյակին: Այդ երեք դասախոսություններն էին՝ «Հայագիտությունը հայուսիսային երկրներուն մեջ», «Հայագիտությունը Արեւմտքի մեջ» և «Ուրարտական նշանաբանության հետքեր դասական հայերենի մեջ»:

Պատաստելու վրա էր նույնպես, «Revue des études arméniennes»-ի համար, ըն-

դարձակ հոգված մը, որուն նյութը պիտի ըլլար ներկայացնել հայագիտական աշխատանքներու վիճակը Սովետական Միության մեջ:

Տասնյակ մը երկեր ալ, ոմանք ավարտած, ոմանք դեռ մշակվելու վրա, կսպասեն լույս աշխարհ գալու: Ասոնցմէ արդեն ավարտած էին «Հայ հնագրական արժույթ», «Ռաբինդրանաթ Տագորի կյանքն ու գործը», «Մահարաբարատա»-յի երկու հատոր թարգմանությունը, դասական հայերենի քերականության «Զեւարանության» մասը, հաջորդ մասը՝ «Շարահյուսություն»-ը պատրաստության մեջ ըլլալով դեռ, «Հին Հայաստանի պատմությունը և մշակույթը», զոր վերամշակելու վրա էր այս տղերքը գրողին և տիկին Գլիա Բընըցեանուի աշխատակցությամբ: Իսկ որոշ մշակման կարոտ էին դեռ «Հայկական դիցաբանությունը և առասպելները», «Սանսկրիտ լեզվի դասընթացը», «Քալիդասա, իր կյանքն ու գործը»:

Իսկ ծրագրային վիճակի մեջ էին դեռ ուրիշ շատ մը երկեր, բոլորն ալ լեզվաբանական նյութերով, ինչպես «Բեական սեռի հետքեր դասական հայերենի մեջ», «Հեռագաս հոգր դասական հայերենի մեջ», «Նախահայկավածային ձայնավորները հայ լեզվի մեջ», «Հայկական հին ամիսներու անունները», «Ազգականական կապ ցույց տվող տերմինները հայ լեզվի մեջ», «Հոգնակի շինող և մասնիկը դասական հայերենի մեջ», «Բնաստարանական քերականությունը (polarizarea semantica) հնդեվրոպական լեզուներու մեջ»:

Զորս տասնամյակ տեղեց պրոֆ. Բընըցեանուի ստեղծագործական կյանքը, և հակառակ խորթ պայմաններուն, որոնք հաճախ ընդհատել կամ դժվարացուցել էին դայն, այնուամենայնիվ բեղմնավոր եղավ գրչի իր վաստակը: Աշխատանքներու ցուցակը, զոր ինքն իսկ կազմած է մահն քիչ առաջ, 198-ի կհասցնեն իր գրությունները, մեջն ըլլալով իր անտիպ, կիսավարտ կամ ծրագրված երկերն ալ, ինչպես և հայկելով լրագրական հոգվածները, նոթերը և գրախոսականները, որոնք, պետք է ըսել, սովոր թիվ մը կկազմեն: Որքան ալ սեղմվի այսպես իր հիմնական երկերուն համարանքը, ան քավական է բան մը պարեցնելու իրմե: Բայց ինչ որ իր անունը պիտի պահէ հայ ժողովուրդով գրադողներու շարքին մեջ, իր տաք վերաբերումն է դեպի հայ արժեքները, որ միացած գիտական նախաձեռնության և պրպտելու իր անսպառ եռանդին և կիրքին, մեղ կստիպե, օր հավերժացնենք իր ալ անունը և հիշատակը, առանձին հատորի մը մեջ ամփոփելով ամենեն անականջական էջերը իր բազմաբեղուն գրչի վաստակին:

Բընըցեանուն իր աչքերը կփակե իր մտա-
վոր ուժերու լրութեան և իր հոգեկան աշխու-
ժին բովանդակ թարմութեան մեջ, գրեթե
մանկական այն ոգևորութեամբ, որով բռնվա-
ն էր իր գործունեութեան բոլոր մարզերուն մեջ
և որով կվարակեր իր շուրջիններն ալ: Այն-
տեղ, ուր ուրիշները պիտի տատամսեին, ինչ
առաջ կնետվեր անվախ, և այնտեղ, ուր պի-
տի հուսահատեին ուրիշներ, ինք չէր ընկրկեր
երբեք, անսասան մնալով իր լավատեսութեան
ու խանդավառութեան մեջ: Իր միակ հենա-
րանը իր սեփական աշխուժն էր և հարատե-
լու իր անսպառ ոգին, թեև միշտ գորավիդ
ունեցավ իրեն գիտական հետազոտութեանց
ծարավով նույնպէս բռնկած այն կիներ, որ
Գլխան էր: Զայն ճանչցած ուսանողական տա-
րիներուն և միասին մտած ուսուցչական աւ-
պարեղ, միասին ալ ուսանելու էին գացեր,
ամբողջ կյանք մը գործակիցներ դառնալով
հետո իրարու, և զիրար ամբողջացնելով հա-
յադիտութեան մարդին վրա: Արդարեւ, մինչ
վազ կհետադուտեր հայ պատմութիւնը և
հայ անցյալը ուսման հոգի վրա՝ լեզվաբանի
և բանասերի գիրքերուն կառչած, Գլխայի
մտահոգութիւնը ուղղված էր առավելապէս
հայ արվեստներու կալվածին:


Զինքը ճանչցած ճիշտ այն օրերուն, երբ իր
կապը կսկսեր հայ ժողովուրդին հետ և գոր-
ծակցած անոր մանավանդ իր կյանքի վերջին
շուրջ յոթը տարիներուն, այս տողերը գրողը
մոտեն տեղյակ է այն բուռն հետաքրքրու-
թեան, զոր Բընըցեանու տածեց մինչև իր

կյանքի վերջին րոպեն դեպի հայ ժողովուրդի
հոգեկան արժեքները, հետաքրքրութիւն, որ
տակավ փոխված ջերմ համակրութեան մը, ի
վերջո պիտի վերածվեր խանդավառ սիրո մը
դեպի ամեն ինչ, որ կապ ուներ հայ ժողո-
վուրդին հետ:

Վերջին տարիներուն գրեթե նույնացած էր
ան հայ ժողովուրդի հուզումներուն հետ. հա-
րադատի մը պէս կապերը անոր դարավոր
խոռվքին ու դարավոր ճիգը վերելք հասնելու,
կապերը և նոր օրերու անոր տքնութեամբ ու
վաղվան տեսիլներով: Կհիշեմ մանկական
ոգևորութիւնը, որով երեք տարի առաջ ան
կգառնար Հայաստանէն, իր սիրուն մեջ ամ-
րացած անգամ մը ևս ու հոգեպէս թարմա-
ցած, ինչպէս և վառված նոր տքնութեանց
ծարավով, հակառակ սրտի իր հիվանդու-
թեան, որ քանիցս անկողին գամեր էր գինքը:
Կհիշեմ դայն հրահրող այդ նույն ոգևորու-
թիւնը մահէն հազիվ քանի մը օր առաջ, երբ
արհամարհելով բժշկական ամեն խորհուրդ,
արդեն պատրաստ էր ճամբա ելլելու դեպի
Երևան, այս անգամ Գլխային հետ, որուն
կուղեր ինք անձամբ ցուցնել հայ հողը, հին
դարերու իր նվիրական փլատակներուն և իր
մշակութային նոր ճիգերուն մեջ: Լուր չունեմ,
թե մահը արդեն դոան տակ կսպասեր ու թույլ
պիտի չտար, որ կրկին անգամ երթա Արա-
րատը ողջունել:

... Ան կհանգչի հիմա Բուրբնի հայոց գե-
րեզմանատան մեջ: Բաղձացեր էր հայ ծնող
թաղվիլ հայ մեռելներուն քովիկը: Ու հիմա
ան կշարունակե հայ ժողովուրդին ծայր տա-
րիլ, իր մեռելին հետո ալ:





Խ. ԿԱՆԱՑԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՑ*

ՃԵՄԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Ճեմարանի աշակերտներն իրենց աշխատանքային օրվա մեծ մասը նվիրում էին իրենց դասերի պատրաստմանը, շատ էին զբաղվում ընթերցանությամբ: Ճեմարանի հարուստ գրադարանն սպասարկում էր ամենայն սիրով աշակերտության ինքնագարդացման գործին:

Ճեմարանի դպրոցական բաժնի սաները, հրեկոյան երկու ժամվա տնոդությամբ սերտորոշվում էին հետո, ժամը 9-ին գնում էին ընկելու, իսկ լսարանական բաժնի ուսանողները կարող էին պարասել մինչև ժամը 12-ը և դեռ ավելի:

Ջուտ ուսումնական աշխատանքներից դուրս, ճեմարանցիներն զբաղվում էին նաև ալլ հասարակական-գրական գործունեությամբ: Կային որոշ խմբակներ: Օրինակ, մեր լսարանի ուսանողները (Ա լսարան, 1902—1903) կազմակերպել էին հրատարակական ընկերություն, որի նախագահը ես էի. իսկ քարտուղարը՝ Միտն Ասլանյանը¹:

Հիշյալ ընկերությունից բացի, մի խումբ ընկերներով կազմել էինք մի ուրիշ մարմին, որի նպատակն էր կապ հաստատել Երևանի միջնակարգ դպրոցների՝ հայոց թեմական

դպրոցի և ուսաց գիմնազիաների աշակերտների հետ: Կապը հատկապես սերտ էր գիմնազիայի աշակերտության հետ: Հիշում եմ մի հավաքույթ, որ տեղի ունեցավ Ճեմարանի սենյակներից մեկում: Ներկա էր գիմնազիայի աշակերտների մի խմբակ Գրուշի (այժմ՝ հայտնի հոգեբույժ) գլխավորությամբ:

Գիմնազիայի աշակերտները դպրոցական դասերից հետո զբաղվել են հայերենով, հատկապես հայոց պատմությամբ: Երևանի գիմնազիան փաստորեն հայկական ուսումնական հիմնարկ էր. նրա աշակերտները սիրում էին իրենց մայրենի լեզուն, իրենց պատմությունը. նրանց հոգին մնում էր անարատ. ուսերեն սովորելով հանդերձ՝ չէին մոռանում նաև իրենց լեզուն և իրենց գիրն ու գրականությունը:

Հաճախ մենքյան և Զատիկի տոներին, մանավանդ ամառվան արձակուրդին, մենք ցրվում էինք գյուղերը և կաղմակերպում դասախոսություններ, երեկույթներ, ներկայացումներ: Ճեմարանի աշակերտները այս կայան կերպ մասնակցում էին նաև մեր հասարակական-քաղաքական կյանքին՝ հարելով որևէ հոսանքի: Կային «Նոր-դար»-ական, «Մշակ»-ական հոսանքներ, ապա հնչական, դաշնակցական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ: «Նոր-դար»-ական, «Մշակ»-ական հոսանքներին հարող մարդիկ զբաղվում էին լույս միմյանց հետ վիճարանելով: Կարգում էին թերթեր և արժարժված

* Շարունակված «Էյմթոթին» ամսագրի 1984 թվականի № 2-ից:

¹ Այդ ընկերության մասին գրել եմ իմ «Հուշեր»-ում, «Տեղեկ»-ը գիր 2. Մ. Ինտերուտի, 1983 թ., Մ II:

խնդիրների շուրջը բանակոչվով զբաղվում, ձեմարանում մեծամասնությունն էր կազմում դաշնակցության խումբը, որին գլխավորում էր Միմոն Գրուզինյանը (Վրացյան), շնչակցականներից, հիմնականում սխավում, աչքի էր ընկնում Գուրգեն Նալկունին, որ հետո հարել է սոցիալ-դեմոկրատներին, 1905 թվականից հետո աշխատել է սոցիալ-դեմոկրատական խումբը, որի ղեկավարներն էին Քաղեոս Ավդալբեգյանը, Առաքել Առաքելյանը և Նղիա Մուսայելյանը:

Ձեմարանում տեղի են ունեցել նաև աշակերտական խռովություններ: Մի անգամ մեծ ցույց է եղել ձեմարանի վարչության դեմ (կարծես 1890—1892 թ. թ.) և ձեմարանից արձակվել են շուրջ 80 աշակերտներ, որոնք բոլորն էլ տեղավորվել են Քիֆլիսի Ներսիսյան դպրոցում և թեմական մյուս դպրոցներում:

Երկրորդ ցույցը տեղի է ունեցել 1906—1907 ուսումնական տարում: Յուլյի առթիվ եղել է այն, որ ձեմարանի վարչությունը (ռեկտոր՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան) ձեմարանից արձակում է Աղեկյանին և Փիլոսյանին: Ձեմարանի ուսանողների և աշակերտների մի խումբ, 24 հոգի, որը ղեկավարում էին Քաղեոս Ավդալբեգյանը և Առաքել Առաքելյանը, ընկերակցությամբ Մուսայելյան Նղիայի, Աղաջանյան Ալեքսանի, Գուրգեն Նալկունու և ուրիշների, բողոքում է վարչության դեմ, թե ընկերների արձակումը հիմնավորված չէ, արդարացի չէ: 24-ականները պահանջում են վերականգնել նրանց իրավունքը: Նրանք նույնիսկ հանդես են գալիս մամուլում: Թ. Ավդալբեգյանը «Մշակ»-ում հրատարակում է մի շարք հոդվածներ: Վարչությունը չի ընդառաջում բողոքներին: Վերջիններս, ի նշան դժգոհության և որպես բողոք կատարված անարդարության դեմ, կամավորապես հեռանում են ձեմարանից: Բայց կարճ ժամանակից հետո, բոլոր հեռացողները վերադառնում են ձեմարան և շարունակում իրենց ուսումը:

Տարվա ընթացքում ձեմարանում տեղի էին ունենում մի շարք տոնական հանդեսներ: Մեծ համար առանձնապես ցանկալի տոն էր ձեմարանի տոնը, որ տեղի էր ունենում սեպտեմբերի վերջերին: Տոնահանդեսը տևում էր մի քանի օր: Այդ օրերին արդեն մենք հաճում էինք մեր նոր, տաք զգեստները: Մեր հագուստը կարվում էր մուգ-կապույտ դույնի ընտիր, բարձրորակ մահուդից: Գպրոցական բաժնի աշակերտները հաճում էին սովորական բլուզ և շալվար, կապում կաշվի գոտի, իսկ լսարանցիք նույն կտորից, սակայն բլուզը փոխարինվում էր մի տեսակ բաճկոնով երկու շարք կոճակներով, կապում

էին նույն կտորից պատրաստած գոտի: Գլխարկը դարձյալ մահուդից կարած ֆես էր: Ցրտերին հազնում էինք վերարկու, ֆարաշյի նման: Եկեղեցի հաճախելիս այդ վերարկուն հագնելը պարտադիր էր: Ձեմարանական այդ ֆարաշյան հետագայում, Մինաս Բերբերյանի տեսչության ժամանակ, փոխարինվում է աշխարհիկ վերարկուով, իսկ ֆեսի փոխարեն դնում էին սովորական ուսանողական գլխարկ:

Ձեմարանի տոներին Վաղարշապատ վանքի դռնում էր բազմամարդ, աշխույժ: Ձեմարանի, վանքի քակերը օր ու գիշեր թնդում էին ուխտավոր ժողովրդի ուրախության, զվարճության ձայներից: Շնչում էր հայկական զուռնան, լսվում էին հայ ժողովրդական երգերի, «Եկեղեցի»-ների դալալները, տղա ու աղջիկ թե թեի տված զոփում էին գետինը իրենց խմբակային շուրջպարերով, մարդիկ սենտուն հայացքներով դիտում էին հեզաճկուն հայ աղջիկների մենապարերը և ունկնդրում նրանց քաղցրանուշ մեղեդիները:

Ձեմարանի աշակերտների ձեռքով գուլնըզ-դուլն թղթերից պատրաստած լապտերները և թղթե շղթաները զարդարում էին ձեմարանի ողջ քակը:

Ձեմարանի տոնի օրը կազմակերպվում էր նաև հատուկ հանդես, ուր հրապարակ էին դալիս ձեմարանի դասախոսները հատուկ զեկուցումներով: Ելույթ էին ունենում աշակերտներն ու ուսանողները: Ձեմարանի տոնին, առհասարակ, բոլոր հանդեսներին շուրջ ու փալլ էր տալիս Կոմիտասը իր երգեցիկ խմբով:

Ձեմարան և Կոմիտաս... անուններ նվիրական և անքաժնելի: Ձեմարանը վերհիշելով, մեր մտքի առաջ պատկերանում է անմոռաց Կոմիտասն իր ամբողջ վեհափայլամբ, Կոմիտասին հիշելով, մեր մտքի տեսողության առաջ է մեր ձեմարանը գործվալից, մեր «ալմա մատեր»-ը:

Տոնի առթիվ ձեմարանի սեղանատան ճոխ սեղանի շուրջը նստում էին ուսանողներն ու աշակերտներն իրենց դասախոսների հետ միասին: Մեկը մյուսի հետևից սեղանակիցները բաժակաճառեր էին նվիրում ձեմարանի հարատևության ու քաղաքավաճման համար: Հատկապես հուլիս ու սրտառույ էին աշխարհի զանազան վայրերից ստացված ձեմարանի նախկին սաների հեռագրերը: Մեկը բարձրաձայն կարգում էր հեռագիրը և հայտնում: Թե ո՞րտեղից և ո՞ւմից է ստացված, շեռարդում էին Ռուսիայից, Բուլղարիայից, Վանից, Պոլսից, Նյու-Յորքից, Զիկագոյից, Փարիզից, Բեռլինից, Պետերբուրգից, Մոսկվայից և Կովկասյան զանազան գյուղերից ու քաղաքներից: Նրանք շնորհավորում էին

մայր ձեմարանի տոներ և բարեմաղթություններ անում, Հեռագրում էին հղբայր հեշում-յանը, հղբայր Քերոբը, հղբայր Յուփյանը և ուրիշներ, ձեմարանի ներկա աշակերտներին կամ ուսանողներին շատ-շատերը ճանաչում էին շնորհավորողներին, մինչև անգամ շատ տարիներ առաջ ավարտած ընկերներին, հղբայրներին, որովհետև նրանց բոլորի մասին սերնդից սերունդ պատմվում էր:

Օ՛, անմոռաց օրեր, իմ պատանեկության երջանի՜կ օրեր...:

Մենդյան տոներ, Զատիկի տոներ, Բարեկենդանի տոներ, Կաղանդի տոն, Համբարձման (Քառնդուլումա-ի), Տյառնընդառաշի (ՏՏրընդեզա-ի) տոներ, Այդ տոներին ևս աշակերտությունը ապրում էր ուրախություն, ցնծություն:

Մենդյան, ինչպես և Զատիկի ու Բարեկենդանի տոներին, կազմակերպվում էին ներկայացումներ, ներկայացումների մի մասը կազմակերպվում էին հայրենակցական միություններ, օրինակ, վանեցիք ներկայացնում էին կաղանդը և կենցաղային բնույթ կրող պիեսներ, որոնք գրվում էին իրենց՝ ուսանողների կողմից, ներկայացումները կազմակերպվում էին հաճախ ուսուցիչների ղեկավարությամբ: Մի անգամ ներկայացրինք «Վիլհելմ Տեյլ»-ը՝ ներկայացնում էինք նաև Հ. Պարոնյանի «Բաղդասար աղբար»-ը, «Մեծապատիվ մուրացկաններ»-ը, ինչպես նաև Մոլիերի գործերից, Այդ ներկայացումներին հրավիրվում էին նաև ձեմարանի ուսուցիչների հետ միասին իրենց ընտանիքները, վանքի միաբաններից ոմանք, ներկայացումներին աղջիկների, կանանց դերերը տղաներն էին կատարում: Մեծ հաջողությամբ կատարվեց Հ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ կազմակերպված Գոգոլի «Ռեվիզոր»-ի ներկայացումը, ուսաց լեզվով:

Կաղանդի օրը, նոր-տարվա նախօրեին՝ զեկտեմբերի 31-ի գիշերը, ուսանողները դարձյալ սեղան էին նստում իրենց ուսուցիչների հետ: Անմոռաց է մնացել իմ հիշողության մեջ այդ տոներից մեկը: Սեղանի ղիխին բազմած էր մեր պատկառելի վերատեսուչը՝ Կարապետ Կոստանյանը: Նա տոնի առթիվ խոսում էր պատշաճ մի ճառ, շեշտում էր հայ ժողովրդի իմաստավոր սովորությունները: Առաջը դրած մեծ, կլոր գաթան, որի մեջ գրված էր մի արծաթյա դրամ՝ «բախտը», մաս-մաս էր անում և կանչում ոմանց վերջնիկու: Գաթայի որե՛կ կտորը, ով վերցնում էր այն կտորը, որի մեջ դրամն էր, նա էլ դառնում էր բախտավորը: Նրան ծափահարում էին: Սկսվում էր երգն ու պարը մինչև լուսաբաց:

Զատիկի տոներին աշակերտներին կարմիր ներկած ձու էին բաժանում, դանադան մրգեր, Բարեկենդանին՝ հատկապես սրահամա (նուշ): Աշակերտները ձու էին կովացնում Զատիկի օրերին, իսկ Բարեկենդանի օրերին՝ քաղամ էին խաղում: Զատիկին հաջորդող երրորդ՝ Կանաչ կիրակի օրը զրոսանք էր կատարվում ներսիսյան անտառում, ուր և տեղի էր ունենում ավանդական ճաշկերույթը: Քառնդուլումա-ի արարողությունը տեղի էր ունենում ձեմարանի հարավային կողմի պարտեզում, բոլոր մանրամասնություններով՝ ծաղիկ քաղել, քախտ քանալ, երգել և այլն:

Տոներին կազմակերպվում էին նաև էքսկուրսիաներ, Հաճախ, Վաղարշապատից ոչ շատ հեռու գյուղերում, ավաններում ապրողները, հեռուներից եկած ընկերներին հյուր էին տանում իրենց տները: Օրինակ, ինձ հետ գյուղ՝ Իզդիր էի տանում նոր-նախիջևնցի Ալեքսանդր Զոհրաբյանին, վայոց-ձորեցի (Դարալագյազ) Վահան Տեր-Խաչատրյանին: Գյուղում կազմակերպվում էինք երեկույթներ և ժողովրդի առաջ դուրս էինք գալիս դասախոսություններով զանազան թեմաների շուրջը, մեծ մասամբ՝ Նյութ Նոնելով հայ ժողովրդի պատմությունից: Ամառվա արձակուրդներին էքսկուրսիաներ էին կազմակերպվում մեր աշխարհի ավելի հեռավոր վայրերը:

Ուզում եմ այստեղ պատմել մեր մի հեռավոր էքսկուրսիայի մասին:

1904 թվականի ամառային արձակուրդի սկիզբներին, ձեմարանի մի խումբ ուսանողներ որոշեցինք հետինտն էքսկուրսիա կազմակերպել: Ղեկի հայրենիքի նվիրական վայրերը: Մեր էքսկուրսիային մասնակցում էին Ա լսարանից 7—8 հոգի՝ Սիմոն Գրուզինյանը (Վրացյան), Արշավիր Շավարշյանը, Արշավիր Տեր-Սկրտչյանը, Անուշավան Միքայելյանը, իսկ Բ լսարանից՝ Հակոբ Խաչիկյանը, Գեղամ Տեր-Թովմասյանը և ես: Ուշ երեկոյան հասանք Նրեան, հյուրընկալվեցինք մեր նախկին սիրելի ուսուցիչ, Նրեանի թեմական առաջնորդի փոխանորդ Կարապետ Եպիսկոպոսի մոտ (1903—1905), առաջնորդարանում, Ս. Սարգսի բակում: Առաջնորդարանը մի ընդարձակ, բազում սենյակներից բաղկացած մեծ շենք էր, ուներ մեծ, ընդարձակ, լայն պատշգամբ, որի առաջից աղմկահանող Հրազդանն էր հոսում, իսկ դիմացից երևում էր հայ ժողովրդի ոգու մարմնացում Մասիսը՝ իր ամբողջ վեհությունով: Այդ շենքը ցարդ գոյություն ունի, սակայն անշքացած վիճակում:

Հետևյալ առավոտ, կազմ ու պատրաստ, մեր խումբը դուրս եկավ Նրեանից և ընթացավ ղեկի Գառնի: Մի օր մնացինք Գառ-

նիում, գիշերեցինք քահանայի և մի երկուսի գյուղացիների հյուրընկալ հարկերի տակ, Դիտեցինք Տրդատի պալատը, բերդը, Այդ ժամանակ երևում էին միայն հաստաբետ պարիսպների մնացորդները, մի քանի խուլակած տաշված, քանդված խոշոր քարեր, Պալատի դիրքը հռչակապ էր, շինված քարձրադիր վայրում, Աղատ գետի ապամոտոս փոխին, Գյուղի միջով անցնում էր մի շատ խոշոր առու անուշահամ ջրով:

Գնում ենք Ղամարլու (Արտաշատ), դիտում ենք հինավուրց քաղաքի վայրերը, մտքով սլանում մեր պատմության խորքը, մեր մտքի աշքերով տեսնում պատմական Արտաշատը:

Հյուրընկալվում ենք Ղամարլուի քահանաներից մեկի տանը, Շարժվում ենք դեպի հոր Վիրապ, Տեսնում ենք Գրիգոր Լուսավորչի բանտը՝ հոր Վիրապը, ուր, ըստ Ագանթաղեղոսի, Լուսավորչին մնացել է 14 տարի:

Մեր մի շաբաթ տևող այդ ճանապարհորդությունը մեծ մասամբ անցնում էր ուրախ, զվարճության մթնոլորտում, Հաճախ մի՛նձարանում էինք որևէ խնդրի շուրջը, Մեր ընկերներից միայն մեկը կար, որի հետ բոլորը գրեթե ընդհարվեցին. դա Գեղամն էր, Սա, օրինակ, հոր Վիրապի վանահոր ընդունարանում մեղ հատկացված երկու անկողիններից մեկը ինքը յուրացրեց, մյուսը թողնելով բուրբիս: Այս և նման դեպքերը, հարկավ, առաջ երբին Գեղամի նկատմամբ տրտունջ, հանդիմանություն:

Մեր տեսած վայրերից ամենից ուշագրավը Գեղարդի վանքն էր, որ գտնվում էր Գառնիից դեպի արևելահյուսիս, Աղատ գետի բարձրաբերձ ափին: Վանքը շինված է լեռան մեջ, Հայ բանվորներն ու վարպետները անխոշ ջանասիրությամբ բաց են արել լեռան կուրծքը, ներս մտել և իրենց արվեստի հմտությամբ կերտել մի հույակապ հուշարձան:

Հայ հավատացյալ ժողովուրդը դարձրել է այդ վանքը ուխտատեղի և հոծ քաղմություններով այցի է եկել մեր այդ նվիրական հուշարձանին:

Երկու օր մնացինք այդ գեղահրաշ վայրում:

Ամեն տարի, Թարգմանչաց տոնին, էջմիածնի աշակերտությունը, ուսուցիչները, ծառայողները ուխտագնացություն էին կատարում դեպի Օշական՝ համբուրելու շիրիմն այն մեծ անձնավորության, որը հայ ժողովրդին պարգևեց իր գոյությունը հավետ պահպանելու և պաշտպանելու հզորագույն զինքը՝ այրուքները:

Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը գտնվում է Օշականի մի բարձրության վրա, հովանա-

վորված եկեղեցիով, Եկեղեցում ժամասացությունը լսելուց հետո, Ճեմարանի ընտանիքը հանգստանում էր վանքապատկան մի ընդարձակածավալ այգում: Այգում ճաշելուց և զվարճանալուց հետո, վերադառնում էինք էջմիածին՝ երգ ու պարով, ցնծությամբ:

Մեր էքսկուրսիայի սովորական վայրերից էր նաև Այդր լիճը, որի շուրջը շատ լեզանդներ են հյուսվել, Դրա մոտերքի բազում աղբյուրներից սկիզբ է առնում Մեծամորի (Սևջուր) գետը, որը թափվում է Արաքս գետը:



Ճեմարանում առավոտյան զարթնում էինք ժամը 7-ին, գիշերապահի դանգակի հնչյունների տակ, կվացվելուց անմիջապես հետո, Ճեմարանի զանգը հրավիրում էր առավոտյան աղոթքի, Շատ կարճ տևող աղոթքից հետո, աշակերտներն անցնում էին սերտարան՝ երեկոյան սովորած դասերը կրկնելու համար: Սերտողությունից հետո գնում էինք սեղանատուն՝ առավոտյան առաջին նախաճաշը վալելու: Խմում էինք քաղցր թեյ, հետո մի ուլանքի րոմբոս (հաց) և մոթայի կամ հորաի պանիր անուշ անելով: Այնուհետև սկսվում էին դասերը, երեք դասից հետո տրվում էր երկրորդ նախաճաշը: Դասերի ավարտից հետո փոքր հանգիստ էր լինում, ապա գնում էինք ճաշելու: Ժաշը միշտ երկու տեսակից էր լինում, երրորդը՝ աղանդեր՝ որևէ քաղցր: Մեր ճաշերը շատ սննդարար էին՝ ապուր, բորշ, շիլա, դուլա, բոգարթմա, խաշած միս, տապակած միս, խաշած կարտոլ ձեթով, կոտլետ, կարկանդակ չրի ճաշի հետ, խաշած և տապակած ձկներ, քաշովի, փլավ, տարին 5 անգամ հարիսա՝ առաջ յուզով: Տոն օրերին, հանդիսավոր օրերին մեր թե՛ ճաշը և թե՛ ընթերցը լինում էին բազմատեսակ, ճոխ: Պաս օրերին՝ չորեքշաբթի և ուրբաթ, շաբաթական պասերին և Մեծ պասին մեր սնունդը պակասում էր: Տրվում էր լոբի, սրանից պատրաստված բազմատեսակ ճաշեր, սիսեռ, ոսպ, մախիս, շոնջուլ, որ բերվում էր Թիֆլիսից, պասվա փլավ, քաշովի, կարտոֆիլ և այլն:

Մեծ պասին աշակերտներից ոմանք ճաշկուրսով հիվանդանում էին: Խրիմյան Հայրիկը, իմ աշակերտության ընթացքում, վերջին տարիներին հրամայեց, որ աշակերտների պասուց ճաշերը սահմանափակվեն միմիայն չորեքշաբթի և ուրբաթ օրերով: Այդ բարեփոխությունը մտավոր աշխատանքով զբաղվող աշակերտների համար միանգամայն ոգջունելի դարձավ, ճաշկուրսով հիվանդացողներ այլևս չկային:

Գյուղից՝ վաղարշապատից հրավիրվում էին վարսավիրները Աշակերտները պետք է մազերը խուլձին տալից, իսկ լսարանցիք՝ ինչ ձևով որ ուզեին կարող էին սարքել տալ իրենց մազերը: Մազերը լավ սարքել տալու մեջ հույսկված էր վաճառիչ Լեւոնը Մյովանիձե-տյանը: Նա ընդհանրապես լավ սովորելուց զատ՝ հատուկ ուշադրություն էր դարձնում նաև իր արտաքինին:

Մենք ունենք հատուկ կոշկակարներ և կոշիկ մաքրողներ: Տարեկան մեզ տրվում էր երկու ձեռք հագուստ՝ ամառային և ձմեռային:

Ճեմարանն ուներ իր հատուկ հիվանդանոցը, որ գտնվում էր Ճեմարանի շենքի և ննջարանի միջև ընկած մի փոքրիկ տարածություն վրա: Հիվանդանոցը մի հարկանի աղյուսաշեն շենք էր, ուներ իր հատուկ բժիշկը, բուժակը և մյուս օժանդակող սպասավորները:

Իմ Ճեմարանական շրջանում բժիշկը երևան-ցի կարապետ խաչատրյանն էր: Նա թե՛ Ճեմարանում, թե՛ վանքում և թե՛ վաղարշապատում վայելում էր մեծ հեղինակություն: Նա բարեխիղճ, հոգատար և հմուտ բժիշկ էր: Խաչատրյանի բժշկության ժամանակաշրջանում հիվանդացել են շատերը, եղել են նաև ծանր հիվանդություններ: Ղեկավարում էր հիվանդությունները ղեկավար, սակայն բուժում էր ատոլլացել և ապաքինվել են, ո՛չ մի դժբախտ ղեկավար տեղի չի ունեցել: Ճեմարանի բուժականներից «Ֆելդշեր» Պետրոսը հայտնի է եղել իր երկարատև և բարեխիղճ ծառայու-թյամբ:

Հիվանդանոցի սպասարկումը հիանալի էր, խնամքը, հոգատարությունը գովելի: Հիվանդների սնունդը բարձր որակի էր և տրվում էր բժշկի հրահանգների համաձայն: Հիվանդանոց էին հաճախում նաև այնպիսի ճեմարանականներ, որոնք ծուլություն պատ-ճառով դասերը պատրաստած չէին լինում, կամ խռատափել էին ուզում որևէ պարտակա-նություն կատարելուց: Այդպիսիներին մեծ բարիք բժիշկը ոչ մի զեղ չէր նշանակում, աղ-թմծծաղով ասում էր. «Մի երկու օր կպառ-կես, միշտ որ ճեմարանում գտնվեցի, նոր դուրս կգրեմ...»:

Ճեմարանի աշակերտները իրենց մտավոր սնունդն ստանում էին լուսավոր, ընդարձակ դասասննյակներում, գրադարանում, հանդի-սարանում: Աշխատանքից հետո Ճեմարանցիք իրենց հանգիստը վայելում էին Ճեմարանի հյուսիսային և հարավային ընդարձակ բա-ղնիկում: Այդ բաղնիքը ծածկված էին կանաչով, ծառերով, ծաղկանոցներով: Հատկապես հա-րավային ընդարձակ բաղնիքը մշակվում էր աշակերտների հարեանակցական միություն-ների կողմից: Կային վանեցիներ, թիֆլիս-

ցիներ, դարաբաղցիներ, իգգիրքիներ, վաղարշապատացիներ, աշակերտների և այլն մարզեր: Այդ մարզերը լավ ձևավորված էին և ծաղկապատված: Դրանք բաժանվում էին ծառուղիներով: Պարտեզներում, մարդ-րում շինված էին սեղաններ, նստարաններ: Մարզերի միջով, ծառուղիների եզրերով, խո-խուղով հոսում էին առվակների ջինջ ջրերը:

Վանեցիների մարզի մոտ կառուցված էր մի ավազան, միշտ ջրով լցված: Ճաք օրերին աշակերտներն այդ ավազանում զովանում էին լողանալով:

ՃԵՄԱՐԱՆԻ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԸ

Ճեմարանին սպասարկում էր տեխնիկա-կան աշխատողների մի սովոր խումբ: Այդ ծառաները մեծ մասամբ գալիս էին արե-մբույան Հայաստանից—Վանից, Մոկաց երկ-րից, Բշտունյաց աշխարհից, Աշակերտից:

Ճեմարանի ծառաներից հիշում եմ Լախո-ֆեռուն, որը բարձրահասակ, ճեմարանում զլխով, բարի հայացքով մի մարդ էր: Նա վե-րին աստիճանի հոգատար էր ղեկավար աշա-կերտները, մանավանդ ղեկավար փոքրերը: Նա-խո քնուկ հայրական վերաբերմունքը աշա-կերտներին ներշնչում էր ակնածանք, հար-գանք ու սեր ղեկավարին:

Մեկից-մեկի երևակայության ալքերով տեսնում եմ Մուրադին, Նազարին, Պատիկին, Հայրապին: Ինչպե՞ս լավ, բարի, սրտացալ մարդիկ էին գրանք: Նրանցից շատերը Ճե-մարանի աշակերտներից դասել էին առնում, ձեռք էին բերում որոշ գիտելիքներ: Նրանք վերադառնում էին իրենց վայրերը և իրենց ձեռք բերած գիտելիքները գործադրում էին իրենց հայրենակիցներին օգտակար լինելու համար: Նրանցից ոմանք իրենց գյուղերի դպրոցներում ուսուցիչներ էին դառնում, մինչև անգամ Խոսեալ, նոր դպրոցներ էին բաց անում և այդպիսով Ճեմարանից ստա-ցած լույսը վառում ու տարածում էին օ-ւ-մանյան լծի տակ սառապող իրենց խաժար գյուղերում: Պատմում էին, որ Մուրադը Մո-կաց աշխարհում մի շարք դպրոցներ է բացել և ղեկավարել իր տեսչության ներքո: Շատե-րը գրանցից վերջին հրաժեշտն էին տալիս Ճեմարանին, իսկ ոմանք էլ մի քանի տարի իրենց ընտանիքների մոտ մնալուց հետո, նորից վերադառնում էին Ճեմարան: Օրինակ՝ Նախո բեռնի Ճեմարանում ծառայել է երեք նվազ:

ՃԵՄԱՐԱՆԻ ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Երբ ես ընդունվեցի Ճեմարան, Ա դասա-րանում 36 հոգի էինք, իսկ Ճեմարան:

ավարտեցին 9 հոգի, որոնցից երկու հոգի Ա դասարանից չէին բարձրացել:

Ես ավարտեցի լսարանական բաժինը 1905 թվականի գարնանը: Մեջ ես բերում ավարտողների անունների ցանկը.

1. Ասլանյան Միոն՝ վարդապետացի.
2. Ատոմյան Կորյուն՝ կարենցի.
3. Խալիբյան Լակոբ՝ մեծ-սալացի (Նոր-Նախիջևան).
4. Կանայան Խաչատուր՝ իզդիրցի.
5. Տատյան Լյուդովիկ՝ օրդուցի.
6. Տեր-Խաչատրյան Վահան՝ մալիշկացի (Գարալագյալ—Վայոց ձոր).
7. Տեր-Պողոսյան Նղիշ՝ վարդաշենցի (Ուտի).
8. Տերտերյան Արտեմ՝ շուշենցի.
9. Քրիշչյան Մելքոն՝ ցղնացի (Ագուլիսի շրջան):

Մենք ավարտական քննությունների համար պարապում էինք մեծ եռանդով: Օրնի-գուն աշխատում էինք, ումանք պարապում էին առանձին, մենակ, իսկ ռեանք էլ երկու հոգով միասին: Ես առանձնապես մտերիմ էի Վահանի հետ. մենք Ա դասարանից մինչև վերջ միասին ենք նստել զրասեղանի առաջ, հաճախ միասին պարապել: Քննություններին հասնախ միասին պարապել: Վահանի հետ, երպարտաստովելու համար, Վահանի հետ, երբեմն և սյուսների, զնում էինք անտառ և մի ժողի տակ նստած կամ պառկած, անդորրություն մեջ պարապում էինք ու պարապում:

Մեր քննությունները տեղի էին ունենում հանդիսարանում: Քննությանը նախադահում էր վերատեսուչը: Քննական հանձնաժողովի անդամներն էին քննող դասախոսը և երկու ընթերցարկալ: Վանքից քննություններին ներկայինելու համար սովորաբար գալիս էին ուսումնական վանականներ: Ղրանք էլ իրավունք ունեին քննվողին հարցեր առաջադրել: Հիշեմ քննություններից մեկը: Եկեղեցական պատմության քննությունն սկսելուց առաջ, մենք հավաքված էինք մեր լսարանում (2-րդ հարկ) և սպասում էինք հրավիրելուն: Բոլորս հուզված էինք և գուշակություններ անում, թե ո՞ր տոմսը ո՞ւմ կընկնի: Ուտի վրա քառյակներ էինք հորինում բոլորիս մասնակցությամբ ու սկսում երգել: Հիշում եմ մի երկու կտոր.

«Ավարտական խումբ, դեպ հանդիսարան,
Այնտեղ կապասե Մակար սրբազան.
Պարոն տեսուչը բացեց բերանը,
Սեղանի առաջ ցցվեց Վահանը»:

¹ Ավարտական քննության տոմսերը կազմում էինք մենք ավարտողներս, ըստ ծրագրի և ապա տալիս քննական հանձնաժողովին և հաստատություն:

Նրա հետեից գալիս է Լակոբ,
Գլխում զետեղված պատմություն
ամփոփ.

Կարկուտ խոսքերի տեղում է տարափ,
Ընթերականներ շշմած են անշափ:

Ահա գալիս է Նղիշեն առաջ
Նվ նիհար կրծքից դուրս թողնում հառա՞շ-
երորդ տոմսակը խիստ օրհասական,
Չար բախտի բերմամբ դուրս եկավ նրանք:

Դեռևս բոլորիս նվիրված քառյակները շա-
վարտած, կանչվեցինք քննության:

Քննությունները տեղում էին հաճախ մինչև ուշ գիշեր: Հարցաքննում էին շատ երկար, մանրամասն: Քննություններն հաջող տալուց հետո, դուրս էինք գալիս բակ և թարմ օդ ծծելով, հանգիստ զրոսնում ու վրուցում էինք լուսնի կաթնագույն շողերի ներքո:

Ճեմարանն ավարտելու համար միայն ավարտական քննությունները քառյական չէին: Ամեն մի շրջանավարտ պետք է ներկայացնեք ավարտական շարադրություն: Ավարտական շարադրությունները գրելու համար մի տարի ժամանակ էր տրվում: Նյութերը հանձնարարվում էին դեռևս Բ լսարանում: Շարադրությունների նյութերը մեծ մասամբ լինում էին մեր պատմությունից, մեր գրականությունից: Լինում էին նյութեր նաև ուս-սաց և եվրոպական գրականությունից, ինչպես նաև փիլիսոփայական առարկաներից: Նյութը կարող էր նաև ընտրել ուսանողը և առաջարկել հաստատության, իսկ սովորաբար առաջարկվում էր ղեկավար ուսուցչի կողմից: Իմ ավարտական շարադրության թեման էր «Տասնութերորդ դարու էջմիածնի նվիրակության պատմությունը»: Ղեկավարում էր Հուսիկ վարդապետ Ձոհրարյանը:

Այդ շարադրությունները գեահատվելուց հետո միայն հանձնվում էր գիպլումը: Դիպլոմի մեջ հիշատակվում էր նաև ավարտական շարադրության թեմայի վերնագիրը: Մեր գիպլոմները գրվում էին հայերեն և ռուսերեն՝ որակյալ թղթի վրա: Դիպլոմն ստորագրում էին վերատեսուչը և մանկավարժական խորհրդի գիտական քարտուղարը: Դիպլոմը կնքվում էր զմուռսով:

Մեր լսարանի շրջանավարտներս նվիրվեցինք ուսուցչական գործունեության:

Ճեմարանի իմ ընկերներից հուզվումով հիշում եմ հետևյալներին.

Խալիբյան Լակոբ.— Նոր Նախիջևանին մոտիկ գտնված հայ գյուղերից մեկի՝ Մեծ Սալայի բնակիչ էր: Միջահասակ, շիկավուն մազերով, բարի, հանդարտաբարո, խոսում էր հանգիստ, աղմուկ ու վիճաբանություն չէր սիրում: Լավ ընկեր էր: Շատ աշխատասեր

էր, պարագում էր անընդհատ, Մեր ընկերական-հասարակական զործերին ակտիվ մասնակցութիւն ունէր: Արձակուրդներին հաճախ ելույթներ էր ունենում գլուղներում, հասարակութեան առաջ, Հիշում եմ, մի անգամ նրան սկսեցինք քննադատել այն բանի համար, որ Աշտարակում իր բանախոսութեան մեջ չափից ավելի էր գովարանել Գրիգոր Արծրունուն: Մենք հակամշակականներ էինք մեծ մասամբ:

Խայրխայնը ձեմարանն ավարտելուց հետո, իր հայրենիքում աշխատում էր դպրոցական ասպարեզում: Նա ջերմ հայրենասեր էր և դադութում վառ էր պահում հայ լեզվի և գրականութեան անմար ջահը: Զարհուրելի 1937 թվականին մեր սիրելի ընկեր Հակոբը նույնպես բազմաճաղար ու բազմափուլ անմեղ զոհվածներից մեկը եղավ:

Տաւալան Լյուդովիկ.— Միջազգային, թուրքական մի պատանի էր նա: Լյուդովիկը եկել էր Սև ծովի ափերից, Թուրքիայի Օրդու քաղաքից: Մածկամիտ էր նա, քիչ էր շփույթ ընկերների հետ, սակայն շփվելիս կատակել գիտէր, նույնիսկ երգել, պարել: Տոներին նա մինչև անգամ պարում էր և պարեր սովորեցնում ուրիշներին: Հիշում եմ նրա սովորեցրած պարերից մեկը՝ «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ...», որ կատարվում էր երգելով: Տաւալանը դեռ ձեմարանում, Հ. Հովհաննիսյանի օժանդակութեամբ, թարգմանեց Պոգոլի «Ռեկիդո»-ը (սվերաքննիչ-ը), որ հետո հրատարակվեց Վ. Տ. ստորագրութեամբ: Նա Պարսկաստան էր անցել և գրադվել ուսուցչութեամբ:

Տեր-Խաչատրյան Վահան.— Բարձրազասակ, համակրելի զեմքով մի պատանի էր, որը հենց առաջին դասարաններից աչքի ընկավ իր հուժկու ձայնով: Նա հաճախ դասարանում, դասերից հետո, իրեն ևրեակայում էր աշուղ և քանոնը ձեռքն առած սկսում էր երգել այնքան բարձրաձայն, որ համախմբեք ստիպված էինք լինում մեր ականջները փակել: Երբ Կոմիտասը վերահասու դարձավ Վահանի ձայնին, խստիվ արգելեց նրան երգելու մեր շրջանում, կտրուկ արգելեց նրան աշուղութիւն անելու: Այնուհետև Վահանը դարձավ Կոմիտասի երգչախմբի ծաղիկը, թե ու թիկունք հանդիսացավ վարդապետին, Մելքոնի հետ միասին: Վայոց Ձորի այդ աղան ընկերասեր էր, խիղախ, քաջ, ջերմ հայրենասեր: Իմ ձեմարանական կյանքում համարյա միշտ միասին էինք, միեկնույն սեղանին էինք պարագում, կողք-կողքի: Երբեմն էլ խոսվում էինք միմյանցից, օրերով չէինք խոսում իրար հետ:

Վահանը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայում էր ցարական

բանակում. նա սպա էր, իր քաջագործութիւնների համար արժանացել էր թրի և Գևորգի շքանշանի:

Տեր-Խաչատրյանը լավ երգիչ էր, ուսուցիչ, թարգմանիչ, գրականագետ: Նա էլ անժամանակ թողեց այս աշխարհը: Ահա՛վոր 1937 թվականը նրան էլ կլանեց:

Տեր-Պողոսյան Նիկի.— Միջազգային, նեղ կրթով, փոքր, երկարավուն զխով, շնորհ զեմքով մի գրեթե սկամորթ պատանի էր նա, Այդ վարդաշենցի ուտին լավ էր սովորում, հատկապես հետաքրքրվում էր հայոց լեզվով, Դեռևս Գ թե Ե դասարանում նա մի ծրագիր էր մշակել, որպեսզի կոլեկտիվ ուժերով սկսենք կազմել «Հայ լեզվի խնդրառութեան բառարան», Այդ աշխատանքն սկսվեց և սաղմնային վիճակում էլ մեռավ:

Նիկիյան կասկածամիտ էր, ոչ ոքի հետ մտերմանալ չէր կարողանում:

Տարիներ անցած, լսում էինք, որ Նիկիյան Պոլս է գնացել:

Տերտերյան Արսեն.— Ձեմարան եկավ Շուշի քաղաքից, նա ավարտել էր Շուշու թեմական դպրոցը և եկել էջմիածին՝ շարունակելու իր ուսումը ձեմարանում: Տերտերյանը Ա լսարան ընդունվեց 1902 թվականի սեպտեմբերին, ընկերակցելով մեզ, Մենք ձեմարանի դպրոցական բաժինն ավարտելով անցել էինք բարձրագույնը:

Արսեն Տերտերյանը բարձրազասակ էր, խորխուր, քայլում էր հաստատուն, աներե, քայլերով, գլուխը միշտ բարձր պահած: Տերտերյանը հեշտութեամբ մտերմանալ չգիտեր, զովարութեամբ էր մոտենում ընկերներին, ինքնամոլի էր, գրեթե շարունակ միայնակ, ինքն իր խոհերի հետ: Նա շատ աշխատասեր էր, օրերուն կարգում էր ու կարգում, կարգում էր ավելի շատ զեղարկեստական-գրական-քննադատական գրականութիւն, Արսենը մեր ընկերական շրջանից համարյա մեկուսացած էր: Մինչև վերջ էլ մի մտերիմ ընկեր չունեցավ: Բոլորիս հետ էլ լավ հարաբերութեան մեջ էր, լուի իրը գասրնկեր, ձեմարանն ավարտելուց հետո, Տերտերյանը գնում է Երևան և թեմական դպրոցում դասավանդում հայ գրականութիւն, հայոց պատմութիւն: Նա շարունակ աշխատել է Երևանում, քիչ ընդհատումով: Արսեն Տերտերյանը ուսուցչութեան հետ միասին գրադվում է նաև գրականագիտութեամբ: Փրում է գրաքննադատական ուսումնասիրութիւններ: Տերտերյանի համարվել, իրը լավ գրականագետի, հռչակվում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու ժամանակաշրջանում, Հայաստանի համալսարանական առաջին և լավագույն դասախոսներից էր և մինչև իր կյանքի վերջը աշխատում էր

համալսարանում, Տերտերյանն ընտրվել էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Ա. Տերտերյանը, իր մեծ աշխատասիրության շնորհիվ, շարքային ուսուցչից հետզհետե բարձրացավ մինչև ակադեմիկոսի աստիճանը: Նա իր անձնվեր աշխատանքով բազում ուսանողներ կրթեց, կազմեց պատրաստեց, Այսօրվա շատ գրականագետներ նրա սաներն են:


Մեր ընկերականությունը վերսկսվեց Երևանում, այստեղ հինավուրց էջմիածնական դասընկերներս դարձանք իսկական ընկերներ:

Քրիշշյան Մելիսե.— Գողթան գավառի ծղնա գյուղացի էր Մելքոնը, բարձրահասակ, հայկական զիմագծերով օժտված մի անձ, միշտ մտախոհ, խորհրդավոր հայացքով, կարծես ինչ-որ հոգսերով ծանրաբեռնված: Ուսանողական ժողովներին և առհասարակ որևէ հավաքույթի ժամանակ նա միշտ լուրջ էր: Քիչ էր պատահում, որ մեր ուսանողական-ընկերական կատակներին և խաղերին մասնակից լիներ:

Քրիշշյանը նմանապես Կոմիտասի լավագույն աշակերտներից էր, նրա անմիջական գործակիցներից մեկը, ինչպես և Վահանը, Մելքոնը, Ճեմարանն ավարտելուց հետո, շատ ժամանակ շանցած, անցնում է Գերմանիա, իր ուսումը կատարելագործելու համար: Գերմանիայում մնում է երկար տարիներ, ամուսնանում է գերմանուհու հետ: Քրիշշյանը հայտնվում է Կովկասում իր տիկնոջ հետ 1913 թվականին: Երկա՛ր, երկա՛ր տարիներ թափառեց Մելքոնը Եվրոպայում և այլուր: Իր ազգագույն աշխատանքը նա շարունակեց Միլոուքի հայության մեջ՝ հատկապես զբաղվելով ուսուցչությամբ: Միլոուքում նա գրեց իր սիրելի ուսուցչի՝ Կոմիտասի մասին հուշեր՝ ամփոփված մի գրքում:

Հայրենիքի կարոտը ժերուխյան հասակում նրան բերեց հայրենիք՝ Հայաստան: Երեք տարի առաջ նա իր տիկնոջ հետ վերադարձավ Երևան: Այժմ նա թոշակառու է, ապրում է պետության կողմից իրեն հատկացված մի հարմարավետ բնակարանում, Կիևյան փողոցում, խաղաղ ու անդորր վայելելով ծերությունը հայրենի հարազատ հողում:





ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԼԵՋՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Ա

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ

Ներկա հոգւածը, որ հանձնում ենք տպագրության, մեր՝ Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը՝ ուսումնասիրությանից երկու առանձին գլուխներ են, որոնք նվիրված են Նրա Մատեան ողբերգութեան՝ գրքի մակդիրներին և ոճարանական մի քանի այլ ցուցաբերումներին:

Ավելի քան տասը դար Նարեկացին հայ ժողովրդի հետաքրքրության ու պաշտամունքի խորհրդանշան է: Նարեկացու Մատեան ողբերգութեան աշխատության դերն ու նշանակությունը շատ մեծ է մեր մշակութային պատմության մեջ: Գուցե Նրա հետ համեմատվեն Մեսրոպ Մաշտոցի և Մովսես Խորենացու գործերը:

Նարեկացին բանաստեղծ է և այն էլ հոգու անաստեղծ, իսկ Նրա ստեղծագործությունը արդու փառաբանումն է և Նրա հոգու ոլորտի մեծ ոգրերգությունը, որ հազվագեյ հանարների է բախտ վիճակվում արտահայտելու:

Նարեկացուն հուզում էին կյանքի և բնության առեղծվածները. նա տեսնում, զգում էր բնության ու կյանքի հրաշքները, հասկանում էր դրանք վայելելու մարդու իրավունքները, այդ և Համլետի նման կարող էր ասել. «Ինչո՞ւ եմ չգիտեմ ի՞նչ պատճառով ես կորցնում եմ ուրախ տրամադրությունս, բոլորովին

բաց եմ թողել սովորական մարդանքներս և այնպես մեկամաղձոտ եմ դարձել, որ այս հոյակապ կառուցվածքը՝ երկիրը ինձ մի մայի հովանդան է թվում, Այս սքանչելի ամպհովանին, եթեքը, նայեցեք, մեր գլխին կախված այս հրաշալի երկնակամարը, այս վեհաշուք ձեղունը՝ ոսկի կալծերով նախշված, այս բոլորը աչքիս ուրիշ բան չէ, եթե ոչ գարշու ժահահոտ գոլորշիների մի համադրություն»:

Եվ ի վերջ այս ամենի պետք է ասեր. «Ի՜նչ հրաշակերտ է մարդը, որչա՞փ անսահման են Նրա ընդունակությունները, Կազմվածքը և շարժումը որչա՞փ բարեձև և հիանալի: Կաց ու նիստով կարծես մի հրեշտակ, խոհականություն մարդ կարծես մի աստված, Աշխարհի գեղեցկությունը, Կենդանիների կատարելատի՛պը, Այդ բոլորով հանդերձ, ի՜նչ է իմ աչքիս հողի այդ գերագույն զտվածքը, Մարդը չէ հիացնում ինձ...» (Շեքսպիր):

Հողի այս զգերագույն զտվածքը՝ մասին Շեքսպիրից մոտ վեց դար առաջ Նարեկացին ասել է.

«Ահա մարմինդ կրող երկու միակցորդ ու խորհրդակից ոտքերիդ վրա, Հրեշտակի ձևով ես կառուցվել դու, Որպեսդի երկու վերև բարձրացրած քո բազուկներով վերասլացիկ, Իբրև թռչելու համար թև առած՝ դիտես հայրենի աշխարհը: Եվ միշտ աշխարհի շնչին ու ճղճիմ հոգսերով տարված...

Մարմնիդ աշտանակի վրա իբրև ճրագ
բազմականթեղյան,
Գլխիդ կլորությունը հաստատվեց,
Որպեսզի այդպիսով, չհեռանալով
օրինակելի լույսի շնորհից,
Տեսնես Աստծուն և անանցանելիքն
իմաստասիրես:
Բանականության պատվով կրկնապես
ճոխացար,
Որպեսզի վերուստ քեզ տրված բոլոր
բարեմասնությանց
Հաղթանակը դու պատմես անարգել,
անկաշկանդ լեզվով:
Մատեներով հարմարապես ճյուղավորված
ճարտար ջո ձեռքերով
Գործելուդ համար և կառուցելու՝ Աստված
կոչվեցիր:

Դարագլուխ կազմող այս գործի մասին
բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել
թե՛ հայ գիտնականների և թե՛ օտարների
կողմից, սակայն նրա յուրահատուկ, ճոխ և
բարձրարժեք լեզվի ու ոճի մասին չկա
ամբողջական որևէ աշխատություն: Մեր կա-
տարածը մի փորձ է՝ Աշխատությունը կազմ-
ված է այդպիսի 16 գլուխներից:



Այստեղ մենք վերլուծելու ենք «Մատենան
ողբերգութեան» երկի լեզվի որակական տար-
րերի հսկայական կուտակումները և ցույց
տալու այն բնագավառներն ու միջավայրը,
որոնք նյութ են ծառայել հեղինակին՝ ստեղ-
ծելու մակդիրներով չափազանց հարուստ մի
խոշոր գեղարվեստական կոթող: Մյուս կող-
մից, այստեղ քննվելու են այն հարցերը, թե
որքանով այդ մակդիրները նպաստում են
երկի ոճական ու գեղարվեստական արժա-
նիքների հարստացմանը, այսինքն վերլուծե-
լու ենք նարեկացու մակդիրների ոճա-ար-
տահայտչական արժանիքները:

Մակդիրները գեղարվեստական խոսքի այն
միջոցներն են, որոնք պայծառ ու պարզ են
դարձնում առարկայի այս կամ այն հատ-
կանիչը, առանձնացնում են նրա այն կողմը,
որը տվյալ դեպքում առարկայի համար
կարևոր է: Բառը արտահայտում է մի ընդ-
հանուր հասկացություն. այդ հասկացությու-
նը անորոշ է լինում, հաճախ վերացական.
տաղանդավոր գեղագետը մակդիրների մի-
ջոցով կարողանում է այդ վերացական ընդ-
հանուր հասկացությունները դարձնել պարզ,
որոշակի ու ցայտուն. մակդիրներով նա լու-
սավորում է առարկան, խտացնում է իրեն
շրջապատող իրականության զույնները, դարձ-
նում է տեսանելի, շոշափելի, մեր բոլոր
զգայաբանների միջոցով ընկալելի:

Երբ բանաստեղծն ասում է՝ «առփիտեցըն-
ցուղ ցող», ցող բառը ոչ միայն ձշտվում է
ժամանակով, այսինքն՝ լուսաբացի ցնցղած.
այլև առաջացնում է բազմազան տպավորու-
թյուններ. ցողը կապում ենք լույսի հետ, նրա
մեջ տեսնում ենք արևածագի պայծառ զույ-
ները, զգում ենք նրա անապակ մաքրությու-
նը, զովությունը. մի խոսքով՝ այս որակումով
առարկան լուսավորվում, պայծառանում ու
դառնում է մեր զգայարաններին շատ ավելի
մատչելի և մեր մեջ առաջ է բերում բազմա-
զան հաճելի զգացումներ: Զմեռանաք ասել,
որ այդ մի մակդիրով բանաստեղծը նաև
առաջացնում է ձայնային հնչական հաճելիու-
թյուններ՝ միացնելով առարկայի և նրա մակ-
դիրի համահնչականությունը: Այստեղ արդեն
մակդիրը դառնում է դիպուկ, ստանում է
ներադրու ուժ և առաջացնում է հաճելի տպա-
վորություններ:

Նարեկացու մակդիրները բաժանում ենք
երկու հիմնական խմբի՝ ընդհանուր մակդիր-
ներ և անհատական կամ անհատա-ստեղծա-
գործական մակդիրներ:

Առաջին խումբը կարելի է անվանել նաև
պատմական. Սրանք այն մակդիրներն են,
որոնք ներկայում են առարկային կամ երևույթ-
ներին նախնական՝ դեռ գիտակցության ցած
աստիճանի վրա կանգնած մարդու կողմից:
Մարդը, ելնելով իրեն շրջապատող զանազան
երևույթների իր վրա թողած տպավորությու-
ններից, այդ երևույթներին կամ առարկաներին
հատկացնում էր առանձին որակումներ.
վերջիններս կապում էին առարկաներին և
միշտ նրա անվան հետ էին հանգես դալիս:
Այսպես, օրինակ՝ մեր ժողովուրդը և մեր հին
բանաստեղծությունը արեգակն բառի հետ
միշտ կապում է արդար բառը. արեգակն ար-
դար. համեմատոր հայտնի աղոթք-երգը՝
«Առաւօտ լուսոյ, արեգակն արդար», Արդար
բառը «Հայկազեան րառարան»-ում նշանա-
կում է ճշիտակ, իրավունք սիրող, անմեղ,
հավատարիմ, ուղիղ, ճշմարիտ, նույնիսկ
դժվար է այստեղ բացատրել ժողովրդի նախ-
նական այն մտապատկերացումը, որ նա
արեգակ թառից ստացել և նրան կոչել է առ-
դար: Գուցե ուղիղ կլինի բացատրել թառի
ծագման նշանակությունը. արդ նշանակում
է ձև, շենք, կարգավորություն. արդար այս
դեպքում պետք է նշանակել շինող, ձևավո-
րող, կարգավորող. համեմատոր՝ մեծաբեկ
(մեծացնել), լարդաբեկ և այլն: Բայց միա-
ժամանակ ժողովուրդը արեգակի մեջ կարող
էր տեսնել արդարության խորհրդանշիչը. իրեն
լուսատու նա խավարը, հանցանքները փա-
րատող արդար դատավոր է: Հենց այստեղից
էլ նարեկացու անաչառասփիռ մակդիրը
արեւ համար. «արեգակն անաչառասփիռ»:

այսինքն, նա արդարորեն լույս է սփռում բուրի վրա, ամենուրեք, իսկ ժարեզակն արգար է կամ ժարգարոթնան արեզակն բոլոր գրողներն էլ գործ են ածում, «Ընդ ելից արեւուն արդարութեան արեզակն ի յանձկութիւն սրտիս մտցնա» (Նարեկ, 2, 7), Արեզակը ներկայանում է ոչ միայն քնական խավարը շնորդ, այլև հատուկ փոխարեութիւն մաքրող ու վերացնող է նաև տգիտութիւնը, մտքի ու հոգու խավարը, Նարեկացու մոտ արեզակը մաքրում է վիշտը, հոգու տվայտանքները, որոնցով վշտահար տառապում է ինքը Նարեկացին: Այստեղից էլ լույսը դառնում է ուրախութեան խորհրդանշիչը, թախծին ու անձկութիւնը մաքրու սրտից մաքրող մի գորութիւն:

Աղաթանգեղոսի համար արեզակը հոգու, մտքի լուսավորութեան խորհրդանշանն է և մեղքերի շնորդ արդար գաւտալորը: Եվ վաղընջուց հետէ կորուսեալը, տղիսութեամբ մեղացն պաշարեալը, մառախալապատը, միգալատը, ափշեալը, ոչ կարացեալ հայել իմանալ նկատել, զարեզակն արդարութեան տեսանել» (Աղաթանգեղոս, 797): Անա երևույթների առարկաների մասին կազմելով որոշ պատկերացումներ, այդ պատկերացումներին համապատասխան նրանց կցում են այս կամ այն մակդիրը, և հետո այդ մակդիրները միշտ միասին են հանդես գալիս առարկայի կամ երևույթի հետ:

Տարբեր ժողովուրդների վիպերգերում գանաղան նախընտրելի մակդիրներ կան. օրինակ, Հոմերոսի ծովը ունի սովորաբար գորշ-մութ գույն, դիսին միշտ կարմիր է, ռիֆ-վեդա-յում կաթակը ծիծաղկոտ է: Հոմերոսի աքայացիները կոչվում են դանգրահերներ. մաղերի գույնը սովորաբար բաց խարսույշ է: Այդպես է նաև ոուսական վիպերգում: Մաղերի համար սիրած գույնը շէկ գույնն է: Մեր վիպերգում նույնպես մաղերի համար րեզոնանս գույնը խարսույշ գույնն է. այստեղից էլ կայուն մակդիր է՝ դեղձուն ծամ: Համեմատի՛ր թե՛ ի բոցոյն վազէր խաւտեալ պատանեկիկ, նա հուր հէր ունէր, [ապա թէ] բոց ունէր մօրուսս:

Դիցապաշտ հայի խորհրդանշական գույնը սպիտակն է: Այս գույնի պատկերացումը գուցե ճիշտ կլինի կապել լույսի հետ, ինչպես որ խավարին համընկնում է սևը: Հայի համար մինչև այսօր էլ րեորոշ է սպիտակ գույնով ողբակնդ մատուցելը: Հեթանոս հայը ուխտի էր դնում սպիտակ ցլուք, և սպիտակ նոխաղօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք» (Աղաթանգեղոս, 22): Նարեկացին էլ միշտ սպիտակը համարում է մաքրութեան, արդարութեան, իսկ սևը կրքի, խավարի, վշտի, չարութեան ու հանցավորութեան նշան. համե-

մատի՛ր՝ «Մտեմ ի բոյնն աղանի, և անտուտ ազոաւ ելանեմ, գամ սակաւ մի սպիտակ և սրանամ դառնամ քնաւին սևացեալ» (ՀԱ): Այստեղից էլ՝ թխաւիպ կիրք, տխրատեսակ մօր և նման այլ արտահայտութիւնները:

Այդպիսի մակդիրների թվին պետք է ավելացնել ծաղիկ մաքրութեան, այսինքն մաքրութեան, ծաղիկը իբրև մաքրութիւն ու անմեղութիւն. կենդանի ջուր. ճիշտ է, այս մակդիրը վերցված է Աստվածաշնչից, բայց այդտեղ նույնպես կա ժողովուրդի մտածողութիւնը, ինչ մեր ժողովուրդը կարող էր նույնպես ջուրը կոչել կենդանի, այսինքն կենդանութիւն տվող, կամ կենդանի պահող. համեմատի՛ր, «Զիս թողին զաղբերս ջրոյ կենդանոյ և փորեցին իւրեանց գուրս գուրս ծակոտս» (Երեմիա Բ 13):

Մեր ժողովուրդական հեքիաթներում ջուրը ունի անմահական մակդիրը. բոլոր մեծ հերոսները, դրական անձերը մեծնելուց հետո կամ հիվանդանալիս վերակենդանանում կամ բուժվում են անմահական ջրով:

Աղաթանգեղոսը թանկագին քարերը միշտ գործ է ածում պատուական մակդիրով. թե՛ կամ ակաճ պատուական է շնորհային աշխարհէն. իբրև զմարգարիտն պատուական. առցեալը մարգարտովն պատուականաւ. Յանթթա ցանկայիս ակամբ պատուականօք (տե՛ս 8, 10, 22): Նա Արամազդ անվան հետ կապում է մեծ, արի մակդիրները. թե՛ ծնունդ է մեծին արին Արամազդայ (53). և ընդ մէին և զմեծն և զարին Արամազդայ» (127): Վահագն Լազ կամ վիշապաբազ, Անահիտը՝ մեծ տիկին. «Այլ զոր գուդ կոչես մեծ Անահիտ տիկին» (59): Նարեկացու մակդիրների մեծ մասը կամ ուղղակի կերպով վերցրած է Աստվածաշնչից, կամ ակնարկներ են աստվածաշնչական այս կամ այն պատումի, որոշ դեպքերի կամ եղելութիւնների:

Թե՛ ի՛նչ ժողովրդական մակդիրներ է գործածել Նարեկացին, այդ մասին առանձին: Այժմ անցնենք նրա մակդիրների գեղարվեստական ու ռեալական արժեքների վերլուծութեանը իրացի օրինակներով:

Նոսելով րեզնանուր կամ պատմական մակդիրների մասին, պետք է շեշտել, որ մակդիրների այս տեսակը դուրս է առանձին գեղարվեստական հղացումներից. այստեղ Աստծուն տրված րեզնանուր որակումները ամենուրեք համարյա կրկնվում են. դրանք կարող ենք գտնել թե՛ Աստվածաշնչում և թե՛ Աստծուն նվիրված դանադան ներդրումներում: Այդպիսի կոչումներն են, օրինակ՝ ողորմած, Երեմիայ, ամաւոր, անճառ, միայն խնամակալ, մարդասէր, գրած, բազմագութ, կեցուցիչ, հօգ, այցելու, պաշտպան, սուրբ, քառ-

հեալ, անպատում, անհոգ, անզգեմունքի, փրկիչ, և այլն և այլն: Այս բոլոր տեսակի կոշտամեքերը հաճախ կրկնվելով, իրենց մեջ չունենալով պատկերավորման գիպոկոսթյուն, մտքի և երևակայության թռիչք, վերջ ի վերջո դառնում են լեզվի համար առանձին բեռ և ոճը զրկում են հուզարտահայտչական հատկանիշներին: Շատ հաճախ ընթերցողը ստիպված շուտ է տալիս թերթերը, ազատվելու համար տաղտկալի մակդիրներին:

Նույնիսկ Աստվածաշնչում հիշյալ որակումները երեք-չորսից չեն անցնում: Օրինակ՝ «Տէր բարձրեալ և ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի» (Սաղմ. ԽԶ, ԽԷ): Այս կողմից Աստվածաշնչւնը զուսպ է, նրա որակումները ավելի առարկայական են ու իրական: Նարեկացու՝ Աստուծոն ուղղված բազմազան և նույն տիպի որակումներին շատերը ունի Ազաթանգեղոսը: Առհասարակ զուտ ոճական առումով, մեր կարծիքով, Նարեկացու վրա ազդեցություն է ունեցել նաև Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը:

Ազաթանգեղոսի ազդեցությունը ցայտուն կերպով դրսևորվում է, երբ Նարեկացին Գրիգոր Լուսավորչի նման աղերսում է, միայն այն տարբերությամբ, որ Գրիգորը աղերսում է հավատի մեջ ամուր մնալու, իսկ Նարեկացին՝ անդրաշխարհի և այս աշխարհի տանջանքներից խուսափելու համար: Առաջին դեպքում մենք տեսնում ենք քրիստոնեությունը նոր ընդունած հին հեթանոսի հաստատակամությունը, տոկունությունը, դեպի ամեն տեսակ տանջանքները արհամարհանք, իսկ երկրորդ դեպքում՝ դժոխքի, սանդարամետի ուրվականներից, սատանաներից սարսափած, հոգնած ու տառապած միջնադարի հայ վարդապետին: «Տէր ամենակալ... բոժիչ ցաւոց մերոց, ողջացուցիչ բեկելոց, անդորրիչ նեղելոց և արձակիչ կապելոց, մխիթարիչ սգաւորաց, յոյս անյուսից, խոռվելոց հանգիստ, աշխատելոց նաւահանգիստ» (Ազաթանգեղոս, 93): «Տէր, արարիչ երկնից, կեցուցիչ, Տէր տէրանց, Աստուած աստուածոց, Աստուած յաւիտենական, Աստուած երկնից, Աստուած անճառ յուսոյ, և այլն (Ազաթանգեղոս, 52, 53, 144):

Համեմատիր՝ «Աստուած բոլորից, անճառ մեծութիւն, անբովանդակելի բնութիւն, անքննելի իսկութիւն, հզօր զօրութիւն, կարող րարեարութիւն, անպակաս լրութիւն, անճառ ժառանգութիւն, վայելչական վիճակ, առատ պատրաստութիւն, անստուեր իմաստութիւն, տենչալի տուրք, անձկալի ձիւր, բաղձալի բերկրութիւն... դաշնուցիչ մուրիւնոց, գտիչ կորուսելոց, յոյս ապաւինելոց» (Նարեկ, 1Բ): Այսպիսի տողերում էլ երբեմն զգում ենք հեղինակի մտքի ստեղծագործական ուժը,

երբեմն-երբեմն ընդհանուր կաղապարի մեջ նկատում ենք մտքի որոշ առկայծումներ, ինքնուրույն որակումներ, բայց ընդհանուր առմամբ միևնույն արտահայտությունների թույլ կրկնություններն են, ոչ բանաստեղծական, երբեմն անմիտ ու նույնաբանական. օրինակ՝ նույն էջում իրար մոտ. «Ճշմարտութեան ճանապարհ, անվրէպ շաւիղ, երկնածեմ սանդուղք»: Կամ՝ «Երասանակալդ սրտի, անծախելի ստացուածք»: Եթե առաջին օրինակներում նկատում ենք շոր, ավելորդ կրկնությունը, ապա երկրորդ օրինակը բոլորովին անորոշ է: Ստացուածք բառը գրաբարում անորոշ մի բառ է. նշանակում է «ունեցվածք, բերք, ամեն տեսակի հարստություն», անսոց չկա պարզություն ու ցայտունություն. կենծալիլ մակդիրը չի փոխում գրությունը և ավելի անորոշ է դարձնում: Ո՞րն է անծախելի (անփշանալի) ստացվածքը կամ ի՞նչ բան է այդ, մնում է անորոշ:

Աստուծոն կամ Քրիստոսին ուղղված բազմազան որակումները Նարեկացին շատ հաճախ նույնությամբ կրկնում է, ինչպես՝ Քրիստոս Աստուած, անուն ահաւոր, մեծութեան տեսակ, անքնին բարձրութեան պատկեր, անսահման զօրութիւն, կերպարան փրկութեան լուսոյ, պաշտպան կենաց, դուռն արքայութեան, ճանապարհ. հանդարտութեան, ապաւինութիւն նորոգ, և այլն: Ամբողջ էջեր կարդում ես, առանց զօրծողութեան, առանց բայացման, որպիսի հանգամանքը ծանրաբեռնում է ոճը, խճճում է միտքը, առաջացնում ոճական ավելցուկ. սրանց մեջ շատ հաճախ վառ առկայծումները առանց մտքին և զգացումներին հասնելու խավարում են (համեմատիր՝ բան Գ, ԻԳ, ԻԷ և այլն):

Ավելի հանելուկային և ոչ բանաստեղծական, մանավանդ անհասկանալի ու շոր է դառնում ոճը այն ժամանակ, երբ այդ մակդիրները ակնալի են Աստվածաշնչի մեջ պատմված այս կամ այն դեպքի վերաբերյալ՝ դրանք այդպես էլ մնում են անհասկանալի, առեղծվածային: Գուցե վանական վարդապետներին, որոնց գիտությունը Աստվածաշնչի իմացութեամբ էր պայմանավորված, հասկանալի էին, բայց մենք այստեղ օժտեան ողորդութեանս-ը քննում ենք իբրև գեղարվեստական արժեք ներկայացնող, մանավանդ լեզվական քարձր մշակույթի մի երկ, ժամանակակից ըմբռնումներով, զաւելով գեղեցիկը տգեղից, բարձրը, վսեմը սովորականից՝ առանց ավելացնելու կամ պակասեցնելու նրա արժանիքները:

Համեմատաբար իրական են ու առարկայական, երբեմն էլ դիպուկ այն մակդիրները, որոնք Նարեկացին բաղում է Աստվածաշնչից, բայց որոնք վերաբերում են սովոր-

րական առարկաներին, կյանքի այս կամ այն երևույթներին, Այս դեպքում ոճը ընդունում է կենցաղագրական գույն, մոտենում է կյանքին, շուրջը, վերացական, տիկտր որակումներից իջնում, մոտենում է իրականությանը, դառնում է ավելի հյուսիսի ու րանաստեղծական, Զափաղանցումների հետ մեկտեղ կա իրականության զգացումը՝ արտահայտված օբյեկտ-մորոնների, փոխարինական դիպուկ մակդիրներով, Այս դեպքում նկատվում է որոշ հավասարակշռություն՝ առանց ավելորդ գունավորումների, Օրինակ՝ «Ընտանիք թշնամի», հարադատը հակառակ, որդիք դառնանոդը (Համեմատի՜ր Երեմիա ԺԲ 6)։ Քառանգի և եղբարքն քո, և տուն հօր քո, և նոքա դանեցին քեզ։ Սկիտս նանրակտրհուր, քե-րանս շարախոս, ակնս յայրատատես (անամոթ նայվածք ունեցող), կանչս վրիպալուր... գինուր նենդաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժեալ, մշակ հեղդացեալ... ունայնաբան շաղակրատ, պաճարմիտ գոռող, անասնօրէն ապիրատ... վախշուկն անշքեալ, կարողութիւն տկարացեալ, բարձրութիւն խոնարհեալ... մատակարար կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարեկամ հատուածեալ, հաղարպետ դողամիտ, մերձաւոր կծծի, բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ... իղձք անսէր... վաճառական վատնիչ... սլաշտօնեալ արքեցող, գանձուց ոստիկան երկմիտ, պատգամաւոր բանասարկու, դոճապան քնէած... պահապան մատնիչ, քնակակից շարախոս, սուրհանդակ անժաման... արքայ արտալած (զօրք ըշված), թաղաւոր թարմատար (վատթար, շնչին, ավելորդ), կայսր ոգեկործան, և այլն և այլն (տե՛ս նարեկ ԾԶ)։ Համեմատի՜ր՝ «Ոչ պոյ ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտը նոցա նանրեալք են (Սաղմ. Ծ 10), «Մնացի, գի բերցէ խաղող՝ և երբ փուլ» (Սալմ. Ծ 4)։ «Այդիս տնկեսցես և գործեսցես, և գինի ոչ արբցես, զի կերիցէ դայն որդն» (Բ Օրինաց ԻԸ 39)։ Համեմատի՜ր նաև նորենացու Ողբը։ «Իշխանք ապստամբք, զուլակիցք դողող, կծիք, կծծիք, ժլատք... դաատորք տմարդիք, սուտք, խարողք, կաշառառուր...» և այլն (նորենացի, 3-րդ կԸ)։

Այստեղ նարեկացին կյանք է իջնում, լեզվի որակական տարբերը ենթարկում է դանադան ձևաբանական փոփոխությունների, ստեղծում է հակադրություններ, անակնկալ նորություններով մեղմում է մակդիրների խճողման բացասական տպավորությունը Այսպես, օրինակ, տեղ-տեղ մակդիրները հանդես են գալիս իբրև դերբայներ. այդ դերբայները նշում են դործողություն, շարժում, փոխելով ածականների որակական միատեսակությունը. ասյա մակդիրները տրվում են գոյական

ներով, որոնք ավելի առարկայություն, իրացի նյութականություն են մտցնում խոսքի մեջ։

Սակայն նարեկացու մակդիրների ոճագեղարվեստական արժեքը Աստվածաշնչի այս կամ այն պատկերի, դեպքի ու դիպվածի վերաբերյալ կազմված մակդիրների մեջ չէ. ինքը արվեստագետը ստեղծագործում է ինքնուրույն մակդիրներ նյութ առնելով կյանքից, ընթացությունից, Այս դեպքում ոճը ստանում է կենսապայման հաղորդականություն, առարկաներն ու երևույթները լցվում են պարզությամբ, պայծառությամբ, դառնում են ընկալելի բոլոր կողմերով, Այդ մակդիրների մեջ դրվում են խոր մտքեր՝ առյուծ կյանքով ու հույզով։ Սրանք շնորհիվ առանձին հասկացությունները դառնում են որոշակի, առիթ են տալիս մեզ մտածելու, վառում են մեր մտքերն ու երեակայությունը, Օրինակ՝ սովորական գրողները կասեն՝ մեծ իմաստուն, նշանավոր իմաստուն, հույսալուր իմաստուն, շատ ավելի ուժեղ արտահայտությամբ կլինի հանճարեղ իմաստուն, Ազաթանգեղոսի մակդիրները այս կողմից ավելի դիպուկ են ու քնորոշ, բայց այնտեղ միայն կարդում ենք՝ բուճաւոր իմաստուն, իսկ նարեկացին ունի եռգեհանեաւ իմաստուն (2Թ)։ Այստեղ արդեն չկա սովորական կրկնված մակդիրը. դա անսպասելի, նոր, թարմ մի որակում է, որն իր մեջ ունի մտքեր և զգացումներ. այստեղ շեշտվում է իմաստունի հանճարեղությունը, նրա հոգու, զգացումների մեծությունը. առարկայի վառ կերպով լուսավորված է մի քանի կողմերից։ Հետաքրքրականն այն է, որ մեր ուղի հարուստ դրականություն մեջ այդ մակդիրը միայն նարեկացին է գործածել, թե՛ նրանից առաջ, թե՛ հետո չենք գտնում այդ բառի երկուրդ գործածությունը։

Վերցնենք մի ուրիշ օրինակ. «Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան հոգեկորոյս և միշտ մտախար, կամակոր իսկ և սրտաբեկ, ուշամոռաց և հանճարադրաւ, զգայադիրկ և իմաստասպառ, յայրատատես և եղճոնալուր» (ԻԲ)։ Այս բոլոր մակդիրները անհատական ստեղծագործության արդյունք են, բոլորը նոր են, անակնկալ ու թարմ. մաւմնախորձան, ուշամոռաց, հանճարադրաւ, զգայադիրկ, իմաստասպառ բացարձակապես նարեկացու ստեղծած բառերն են։ Հետաքրքրական է, որ անհամատեղ բառը շատ ավելի շեշտակի դործ է ածված Աստվածաշնչի մեջ. «Եւ բարկացաւ Սաւուղ ի վերայ Յովնաթանու և ասէ քնա. աղբիւրդի անձնամատն» (Ա Թադ. Ի 20)։ «Մաւմնախորձան» մակդիրը շատ հետաքրքրորդ է Զոհրապը, բայց ավելի տոփական նշանակությամբ, Այս մակդիրները ամբողջական նախադասություններ են. լրիվ

Բերդ. 277
Են

նկարագրովթյուններ ու պատկերներ, ոչ միայն արտաքին առարկայական, այլև ներ-
միայն արտաքին առարկայական, այլև ներ-
քին խոր հոգեբանական. դրանք ամբողջա-
կան մտքեր են ու բնորոշումներ: Ձեր առջև
կան մտքեր են ու բնորոշումներ: Զեր առջև
կան զանազան միջոցադարի մարդը՝ անմեղ, ան-
հանցանք, բայց ոճի գործածի սարսափելի
հետապնդում: Ունի տեսողական պատկեր-
ներ՝ գունազոյն, պակասը լրացվում է
խոր զգացական և մտային պատկերներով:

Նարեկացու մակերևոր որոշիչները շատ ա-
ռատ են. որակական գնահատումներին
առարկաների ու երևույթների միջև հաճախ
ստեղծվում է անհերքաշնադատություն: Երբեմն
ամբողջ էությունը որակական գնահատումներ են,
առանց գործողության և առանց գոյական-
անորոշիչի: Երբեմն, այսպիսի ոճը առաջացնում
է որոշ հույզ, բայց ստանում է թվարկման
բնույթ, թուլանում է ոճի պատմողական կող-
մը, կորչում է հավաստակալությունը: Երբ այդ որա-
դաշնակցությունը, մանավանդ երբ այդ որա-
կումները չեն կապվում իրար հետ կա-
պակցող շարժականությամբ, սկսում են կողմնա-
պակցող շարժականություն, կի երևույթները իշխել
գլխավորների վրա, հիմնական մտքերը կորչում են երկրորդականի
որոշիչների ամբողջ շղթաների մեջ: Գլխավոր
անդամների կապը մոռացվում է, ընթերցողը
ստիպված կանգ է առնում կապող հանգույց-
ները գտնելու համար, որոնք երկրորդա-
կան տարրերի մեջ կորած գլխավոր անդամ-
կաները, որպեսզի ընթերցողը չմնա անհաս-
կանալի. ահա այստեղ տպավորությունները
թուլանում են ու կորչում, կտրվում են իրա-
րից մտքերը և զգացումները, որովհետև խոս-
քի կենտրոնը կազմող գլխավոր անդամները
ստորոգյալն ու ենթակալան մոռացվել, կորել
են. մեծ ճիգ է հարկավոր նրանց գտնելու-
կամ մտրում պահելու, որ հաճախ դժվար է:

Նարեկացու մակերևորների այդ փոթորիկը
մեղմում է հմուտ արվեստագետի հատուկ
ներքնատեսությամբ. նա ինքը շատ լավ հաս-
կանում է իր ոճի թերությունները (համեմա-
տի՜ր՝ Ես, դի մի՜ կրկնաբանությունն ի շա-
տախտություն կրթեսցի... (1)). Ոճական բազ-
մապիսի միջոցներով, հաճախ շատ բարդ
հնարներով խոսքի մեջ մտցվում է բազմա-
զանություն, տարրեր ձևաբանական, շա-
րահչունական, հնչյունական բարդ կա-
պակցություններով կատարվում են ոճական
զարմանալի անցումներ, փոփոխություններ.
Հանկարծ ածականները փոխվում են դեր-
բայներով, դերբայները բացահայտիչներով
կամ պարզապես գոյական մակերևորներով.
ածականը գոյականացվում է վերացականո-
րեն, կատարվում են յուրահատուկ շարադա-
սական շրջումներ, պարզ մակերևորները բար-
դանում են, կամ ընդհակառակը. մի խոսքով
այս բոլոր միջոցներով ոճը մասամբ ազատ-

վում է չոր թվարկումից, ստացվում են մտքե-
րի և այդ մտքերը արտահայտող ձևերի ներ-
դաշնակ միահյուսումներ, երաժշտական
պատրանք, հուզարտահայտչություն, միև-
նույն գույները տարբեր և բազմազան կա-
պակցությունների մեջ թարմանում են՝ առա-
ջացնելով բազմազան տպավորություններ:

Բանաստեղծը բնորոշում է իր անձը. թեր-
ծամ, որ այժմս բանաստեղծի խորհուրդային
սիգացող բարձրապարհոց՝ անկեղծ զննի
դիս անկեղծան՝ կարկեղծ ի խոսքից, կաշկան-
դեղ ձեռք, լեղել անդամ, խփեղ
շրթամբ, կափուցեղ աչք (2): Նախ այս-
տեղ տպավորությունը ուժեղանում է հան-
կարծական անցումով. բանաստեղծ, խոր-
տաճայն, սիգացող, բարձրապարհոց մարդը
նույն վայրկյանին ընկնում է որպես ղի ան-
կեղծան: Հանկարծական անցման հակա-
դրոշմները առաջացնում է մի նոր տպավո-
րություն և այդ տպավորությունը ուժեղա-
նում է նախկին տպավորության արագ բեկու-
մով. ճիշտ է՝ նախկին տպավորությունը տեղի
է տալիս, բայց նա ուժեղանում է նոր ստա-
ցած հակադիր տպավորությամբ: Շարունա-
կություն մեջ փոխվում է մակերևորների ձևա-
բանական կազմը, ածական մակերևորները
փոխվում են դերբայական լրացումների, իսկ
հետո դերբայական լրացումները թարմաց-
վում են նոր բայարմատներից կազմված այլ
որակի ածականներով. ստախտակ անշառ-
ժուն, կոճղ կիսայրեաց, արձան անդգայ,
պատկեր անբարբառ, գոյություն անշունչ:
Շարունակության մեջ՝ կրկին անցում փոխ-
վում է մակերևորների ձևը նոր դերբայով՝ ա-
պառնի դերբայով. անցյալում տեղի ունեցած
գործողությունները (անցյալ դերբայի դեպ-
քում) փոխադրվում են նոր ժամանակի մեջ.
փոխվում է նաև շարադասությունը. ստախ-
տակ անշարժուն, կոճղ կիսայրեաց, արձան
անդգայ, պատկեր անբարբառ, գոյություն ան-
շունչ: Դառնում են՝ ռոգորմելի տեսիլ, աշ-
խարհի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի
դժմք, արտասուելի նմանություն և այլն:
Վերջին օրինակները հատկանշական են, մա-
նավանդ որ մակերևոր որոշիչները իրար գուդա-
դիր հոմանիշներ են կազմում: Հաճախ այդ
հոմանիշները ընդմիջվում են զարմանալի
դիպուկ հակադրություններով, թարմացող,
առարկայի մեջ նոր, հակասական բովանդա-
կություն առաջ բերող օգտյուրներներով,
Օրինակ՝ Ես որում եկն հՀաս ժամ բարեպա-
տե՜հ դրել ինձ զայս նուազ ձայնի հեծութեան՝
զուարճախառն՝ նրկիդի (2): Երբեք թէ
աստ ողորմություն քո, Տէր, կամեսցի, այս
յուծութիւն կոհակաց կաբժէ է քան զվէժ, և
թէ ի ցամաքի անտես առնիցես, իբր զանկա-
յուն պնդութիւն յատակիս ի ներքոյ աստի

հոսանքային սասանիա (ՁԵ), Կամ թե՛ «զգուհի արքանակա՛ն, զգազրուրեան հանուրիսն» (ԽԵ). կամ հետեւյալ կտորը. «Անպատճառ օցտող (առանց պատճառի պատակտող), անկարգ զրկող, անսովելի զող, զրգեալ տրտնջող, փափկացեալ փախստական, սեղանանենդ սարտուցեալ, անպատասխանի վնասապարտ, քաղցրասնոյց հայհոյիչ, դաւակ հայրատեաց, կոտակարանաց մատնիչ, Մովսեսի շարախօս, մոռացող նրախտեացն, իմաստուն սխալական, ամենադեղտ յանցաւոր, ամօթապարտ զղջացեալ, տարակուսեալ աշխատող, աղաւաւոր կոտալաշտեալ...» և այլն (ԽԶ):

Օրսյումբորոնները անսպասելի կերպով երկու տարրեր հակասական երևույթներ իրար հետ են կապում՝ ստեղծելով անսպասելիություն, թարմություն, Այստեղ փոխվում են տպավորությունները, առաջանում է մտքի ուժեղ լարում առարկայի և հատկանիշի միջև կապ գտնելու համար. սրանք մի տեսակ հակադրություններ են, այն տարրերում միայն, որ առանձին բնույթներ չեն կապում, այդ դեպքում միտքը ուժեղ չի դորձում, որովհետեւ երկու հակադիր առարկաները պահում են իրենց հատկանիշները, միայն մեկն օգնում է մյուսի պատկերացմանը, րայց օրսյումբորոնի դեղքում, մենք աշխատում ենք իրար հետ միացնել հակադիր բաներ՝ հակասական երևույթների մեջ որոշ ընդհանրություն գտնել, իրար համատեղելի դարձնել. չենք դրանով էլ առարկայի մեջ նոր, թարմ բովանդակություն է մտնում: Այսպես նաև՝ օրհնարանեալ ահաւորութիւն»... համեմատի՛ր հետեւյալ մակդիրները. «Այլ ում ձիս խօսնական, կարծրեալ, սանձակոտոր, արձակերասան, լուսնակա անհամբուր՝ վայրենական և անկրթական, երիւնջ առգական (մի ձեռագրում՝ յառգական—խորշող), անուղղական և անվարժական, մարդս մուգդնական, տարադրական և կորստական, մանուկս մեղանշական, անխրատական և վարատական, տնտեսս մահապարտական, տարտամական և անդորձական, րանական և անասնական, դադանական և անմարդկայն, ձիթենիս ամայական, անպտղական և կործանական»... համեմատի՛ր Խորենացու «Ողբ»-ը. հիշենք նաև՝ սղի կենդանական և խօսուն մեռնալը (ԺԷ), օցամաքեալ խոնաւութիւն» (ԻԹ):

Փոխաբերական ձևերով նարեկացին մերկացրել է Ժ դարի հասարակարգի բոլոր հոգի կողմերը՝ Խորենացու նման և նրա հետեւողութիւնը: Նրա աչքից չի վրիպել կյանքի ոչ մի րեալագուհու, մասնավոր երևույթների ու առարկաների միջոցով, լեզվական հարուստ ձևերով կատարել է մեծ ընդհանրացումներ,

որոնք մեղ համար ունեն պատմական ու ճանաչողական խոշոր նշանակություն:

Նարեկացին մակդիրների միջոցով ստեղծում է հակադրություններ, որոնցով նա իր պատկերած առարկաները կամ երևույթները ավելի մանաշնչի է դարձնում, հոգեբանորեն րանաստեղծը շատ լավ բմբռնում է հակադրության արտահայտչությունը. նա միշտ լույսին հակադրում է խավարը, որովհետեւ լավ դիտի, որ լույսի բոլոր տեսակի հատկանիշները ցայտուն, տպավորիչ և ավելի շոշափելի են դառնում խավարի մեջ. համեմատի՛ր «Շիլիոնի կայանավոր»-ի «Աղատություն»-ը, շունչ հավերժական, րանտեղում ես միայն շքեղ ճաճանչումս»): Նրա հակադրական մակդիրները դիպուկ են, սուր. իրար հակադրվող հատկանիշները լուսավորում են մեր ուղեղը, ինչպես կայծակի վառ լույսը՝ համատարած խավարը: Այստեղ հակադրվում են վերացական և թանձրացած հատկանիշները: Հակադրվում են ոչ միայն հատկանիշները, այլև սուր հակադրության մեջ են դրվում այդ հատկանիշը կրող առարկաները: Իրողը, նարեկագու ոճը կարելի է բնորոշել որպես հակադրություններով հարուստ ոճ: Խոսքի այս ձևը միշտ իրեն զգալ է տալիս մակդիրների մեջ, շարահյուսության մեջ, կապակցությունների մեջ, դանադան րազմաձև ոճական փոխանցումների մեջ: Ոճական այս ձևերը ցայտուն կերպով վեր են հանում միջնադարյան իրականության ամբողջ մղձալանջը, ներքին հակասությունները և այդ հակասությունները լավ չբմբռնող րանաստեղծի ողորդությունը:

Նարեկացու հակադրությունները պատահական անհամակարգ հակադրություններ չեն, այդտեղ զգացվում են ներքին միությունը, ոճական ամբողջությունը, նշանակությունների դարմանալի միահյուսումը: Այս ամբողջ շղթայավորումների մեջ հաճախ րաներ կորցնում են իրենց րուն նշանակություններ, ստանում են նոր նշանակություններ իրենց շրջապատող օղակների միջնորդությունների մեջ: Զիշտ է, ոճական այս միջոցի հաճախակի դարձածությունը շատ դեպքում առաջ է բերում ճնշող, մոռյլ տպավորություններ, րայց ամեն սնգամ ոճական մի գյուտ, դիպուկ, խորախորհուրդ մի արտահայտություն, կամ կառուցվածքի ձևափոխում՝ աղատում է միևնույն տպավորության ծանրացույ բեռից, սուրբ բերելով նոր, թարմ տպավորություններ և զգացումներ: Չնայած այս խտացման, րանաստեղծը կանգնած է իրական հողի վրա. մոռյլ իրականությունը նա գրսևորում է մոռյլ գույներով:

(Նուրուշահիյի)

Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ԲԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Հայ ժողովրդի բազմաքանդար մշակութի մեջ իր ուրույն և առաջնակարգ տեղն ունի բազմադարյան հայոց մատենագրութիւնը:

Երբ թերթում ենք այդ մատենագրութիւն հինավուրց էջերը, մեր առջև հառնում են ականավոր շատ ու շատ դեմքեր, որոնք վաղուց արդեն լայն ճանաչում են գտել ամենուրեք:

Այդ ամենաականավոր դեմքերի շարքին է պատկանում նաև Ե դարի նշանավոր պատմագիր Ղազար Փարպեցին:

Փարպեցու մասին շատ է խոսվել ու գրվել ինչպես հայ, այնպես և օտարազգի ուսումնասիրողների կողմից: Առաջին անգամ, իհարկե չհաշված մեր պատմիչներին, Փարպեցու կյանքի որոշ հանգամանքների ու ստեղծագործութիւն մասին խոսել է Հ. Մ. Զամչյանն իր «Պատմութիւն Հայոց» ստվարածավալ աշխատութիւն առաջին երկու հատորներում, որոնք լույս տեսան 1784 թվականին: Սկսած այդ թվականից մինչև օրս փարպեցագիտութիւնը մեծ քայլեր է կատարել և մեր ականավոր պատմագրի մասին պատկանելի քանակությամբ գրականութիւն է ստեղծվել: Այդ գրականութիւն որոշ մասի մեջ փորձեր են արված կազմելու Փարպեցու ամբողջական կենսագրութիւնը, բայց պետք է համարձակուրեն ասել, որ այդ մինչև այժմ ոչ մեկին չի հաջողվել Փարպեցու կենսագրիչներից ամենալավագույնը՝ անվանի հայագետ

պրոֆ. Խալաթյանը նույնիսկ, ո՛չ միայն տուրք է տալիս իր նախորդների արտահայտած սխալ մտքերին ու դրույթներին, այլև, իր կողմից է՛լ առավել զարգացնելով դրանք, այնուհետև դառնում է միա՛կ ուղեցույցը հետագա ուսումնասիրողների համար՝ Հետագա ուսումնասիրողներից միայն մեկը՝ բազմաբեղուն Լեոն, փորձեց չհետևել Խալաթյանին, բայց այն էլ միայն մեկ խնդրի՝ Փարպեցու սոցիալական ծագման վերաբերյալ: Այս հարցում Լեոն հետևում է մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանին, որը դեռևս Խալաթյանից առաջ, Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան»-ի աշխարհարար թարգմանութիւն՝ ծանոթագրութիւնների մեջ արտահայտում է միանգամայն ճշմարիտ մտքեր Փարպեցու կենսագրութիւն մի քանի հարցերի շուրջը, բայց որովհետև դրանք որոշ չափով անսովորտ են ու անկատար և միաժամանակ հակասութիւններ էլ են պարունակում իրենց մեջ, ուստի արձագանք չեն գտել ուսումնասիրողների մոտ:

Ներկա այս համեստ աշխատանքը նպատակ ունի, եղած աղբյուրների և ուսումնասիրութիւնների հիման վրա, տալ Ղազար Փարպեցու ամբողջական կենսագրութիւնը:

¹ Գ. Խալաթյան, «Ղազար Փարպեցի և գործք նորին», Մոսկվա, 1883 թ.:

² Առ. «Հայոց պատմութիւն», հատ. 3, Երևան, 1947 թ.:

³ Մ. Նալբանդյան, «Ղազար Փարպեցու դրած թուղթ», Ս. Պետերբուրգ, 1868 թ.:

¹ Հ. Մ. Զամչյանց, «Պատմութիւն Հայոց», Ա. Վենետիկ, 1784 թ. և Բ. Վենետիկ, 1784 թ.:

Ղ. Փարպեցու կենսագրության մասին առաջին տեղեկություններին մենք հանդիպում ենք նրա «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» աշխատության, վերջինիս «Առաջաբան»-ի, «Պատմություն Հայոց»-ի «Առաջաբան»-ի և մասամբ նաև բուն «Պատմության» մեջ⁵։ Նրա անձնավորության մասին մեկ-երկու հաղորդումների ենք հանդիպում նաև մեր հետազոտականության գործերում, սակայն, դրանք ոչինչ չեն ավելացնում իր՝ Փարպեցու հաղորդածի վրա։ Ընդհանրապես, շատ դժվարում նույնիսկ հակասություններ են պարունակում իրենց մեջ և խառնում իսկությունը, եվ մեզ համար էականը, հավաստին ոչ թե նրանց հաղորդումներն են, այլ հենց իր՝ Փարպեցու հաղորդած վավերական տեղեկությունները։

Փարպեցու կյանքը և ստեղծագործությունը մեզ հետաքրքրում են ոչ միայն որպես պատմական-դրական դեմքի, այլև՝ նրա կյանքի այս կամ այն հանգամանքները որոշելիս, շատ րան է պարզվում նրա ժամանակաշրջանի, այդ ժամանակաշրջանի հայ հոգևորականություն, վերջինիս երկու թևերի՝ տեղական-հետադիմական՝ պարսկասերների, և հունական ուսում ստացած առաջավոր՝ ազգային, կուսակցությունների միջև տիրող պայքարի, հայկական մշակույթի աստիճանի, նրա՝ Փարպեցու, և նրա հետ առնչվող ժամանակակիցների՝ Մ. Խորենացու և Եղիշեի, կրոնա-դավանարանական վեճերի և այլոց մասին։ Ահա այս տեսակետից, մեծ հետաքրքրություն է ներկայացնում Փարպեցու կենսագրությունը՝ նրա ծնունդը, սոցիալական ծագումը, ստեղծագործությունն ու աշխարհայացքը, և, ընդհանրապես, նրա վարած կյանքն ու մահը։

Ղազար Փարպեցու ծննդյան թվականը մեզ հայտնի չէ։ Այդ մասին ոչ ինքը և ոչ էլ հետագայի մեր պատմիչները ոչինչ չեն հաղորդում։ Միայն Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Վահան Մամիկոնյանի ժամանակ ապրում էր «ճարտասան և պատմագիր Ղազար Փարպեցին»⁶, Իսկ թե այդ ո՞ր ժամանակն էր, այդ արդեն իմանում ենք հենց իր՝ Փարպեցու «Պատմություն»-ից։ Սակայն այդ մեղ չի բավարարում։ Նման կերպ է վարվել նաև մեր ուսումնասիրողների մեծ մասը, որոնք միահամուռ կերպով պնդում են, թե

Ղազար Փարպեցու ապրած ժամանակաշրջանը եղել է Ե դարի վերջերը և Զ-ի սկիզբները⁷։ Բայց ի՞նչ. կարո՞ղ է մեզ զոհացում տալ նման հայտարարությունը, Իհարկե ոչ ուրեմն, ե՞րբ է ծնվել Ղազար Փարպեցին։

Այս հարցին ժ. դարում Մ. Նալբանդյանը հետևյալ պատասխանն է տալիս. «446 թվականներում Փարպեցին կամ նոր էր ծնած կամ շատ-շատ երկու-երեք տարեկան...»⁸, Իսկ պրոֆ. Գ. Խալաթյանը հետևյալ կերպ է պատասխանում այս հարցին. «... մեծաւ հաւանականութեամբ... ամ ծննդեան Ղազարայ Փարպեցույ ի միջի 440 և 443 ամաց խնդրելի է»⁹։ Երկուսն էլ, փոքր տարբերությամբ, համարյա միևնույն փաստարկումներն են բերում իրենց եզրակացությունները հաստատելիս, սակայն, մեկը 455 թվականին Փարպեցուն համարում է 17—18¹⁰, մյուսը՝ 12—15 տարեկան¹¹։ Ուսումնասիրողների մեծ մասը ընդունում է երկրորդի տեսակետը, ընայած այն հանգամանքին, որ Մ. Նալբանդյանը մի փոքր ավելի ճիշտ է մոտեցել խնդրին։ Վերջինիս տեսակետը ճանաչում չի դնել թեևս այն բանի համար, որ ինքն իր մեջ հակասություններ է պարունակում։ Պետք է ասել, որ Խալաթյանի տեսակետը նույնպես հակասություններ ունի, բայց որովհետև դրանք աչքից վրիպող հակասություններ են, ուստի ճանաչում են դտել։ Մենք նպատակահարմար ենք գտնում ուղղել այդ հակասությունները և մեր կողմից շարադրել այն փաստարկումները, որոնք, ըստ մեզ, ավելի կարևոր են, ավելի էական դեր են կատարում Փարպեցու ծննդյան ամենահավանական թվականը որոշելու խնդրում։

Այսպես, եթե ընդունենք, ինչպես Նալբանդյանն է ասում, որ Փարպեցին ծնվել է 444—446 թվականներին (մենք 444-ն ենք դնում, որովհետև նա առաջնորդվում է տրված թվից սկսած հաշվման սխեմով), ապա «... յամին ձոթնն տասներորդի Յադկերտի արքա-

⁵ Տե՛ս Ղազարայ Փարպեցու, «Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904 թ.։

⁶ Կիրակոսի վարդապետի Գանձակեցու, «Համառոտ պատմութիւն», Վենետիկ, 1865 թ., էջ 21։

⁷ Տե՛ս Մ. Էմիլ. «Ղազարայ Փարպեցու Թուղթ առ Վահան տէրն Մամիկոնեաց», Մոսկվա, 1853 թ. և Երկասիրությունները հայոց լեզվի, գրականության և պատմության մասին (1840—1855 թ. թ.), Մոսկվա, 1888 թ.։ Տե՛ս նաև Զ. Ղ. Ալիշան, «Հայապատմութեան Վենետիկ», 1901 թ., Զ. Գ. Զարբեղեալյան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Վենետիկ, 1887 թ., Զ. Ն. Ալիշան, «Կարմիրն վարդան...», Վիննա, 1951 թ., Ա. Զամբյուր, «Հայ գրականության պատմություն», Նոր-Նախիջևան, 1914 թ., Ղ. Նալբանդյան, «Եղիշե», Երևան, 1959 թ. և որիշները։

⁸ Մ. Նալբանդյան, էջ 45։

⁹ Գ. Խալաթյան, էջ 7։

¹⁰ Մ. Նալբանդյան, էջ 45։

¹¹ Գ. Խալաթյան, էջ 8։

նրանք տղաներ էին (Փարպեցի, էջ 75), մանուկ տղաներ էին (Փարպեցի, էջ 77—78), «յոթ տղայք» էին (Փարպեցի, էջ 107) և դասակներին ձեռքից էին խլված (Փարպեցի, էջ 67 և 107): Եվ իրոք, նրանցից ամենաավագը՝ Վահանը, 451-ին մեր հաշիվներով ընդամենը 6—7 տարեկան էր, որը, հավանական է, կարող էր դայակի ձեռքից խլված լինել: Այս թվական տվյալները համապատասխանում են նաև հեղինակի այն հաղորդմանը, որ, 455-ին Աշուշայի տանը ուսանող իշխանադուհուր Ե... դեռևս ի տիս մանկութեան էին...», մանուկներ էին (Փարպեցի, էջ 111), «... մնացեալ դեռևս ի տղայութեան հասակի...» (Փարպեցի, էջ 110): Սրանցից ավագը՝ Վահանը, այդ թվականին 10—11 տարեկան էր, որը միանգամայն մանկության հասակ է (12 և բարձր տարեկանը, մեր կարծիքով, պետք է համարել պատանեկության հասակ): Այս բոլորից հետո աղատ կերպով կարող ենք որոշել այդ շորս իշխանիկների ծննդյան թվականները, որոնցից մեզ համաքաժմենակարեւորներն են ամենակրտսերի՝ Վարդի, և հասկապես, ամենավաղի՝ Վահանի, ծննդյան թվականները: Ավելորդ չենք համարում բոլոր վերասածք ի մի բերել:

Վարդ—455 թ. 3—6 տարեկան. ծնվել է 449—452 թ. թ.:

Արտաշես—455 թ. 7—8 տարեկան, 451 թ. 3—4 տարեկան. ծնվել է 447—448 թ. թ.:

Վասակ—455 թ. 9—10 տարեկան, 451 թ. 5—6 տարեկան. ծնվել է 445—446 թ. թ.:

Վահան—455 թ. 10—11 տարեկան, 451 թ. 6—7 տարեկան. ծնվել է 444—445 թ. թ.:

Այստեղից ի հայտ է դալիս, որ Վահան Մամիկոնյանը ծնվել է 444—445 թ. թ., իսկ Մ. Նալբանդյանը, ինչպես վերևում ասացինք, գրում է, որ Փարպեցին ծնվել է 444—446 թ. թ., որը երբեք տեղի ունենալ չէր կարող, նախ այն պատճառով, որ Փարպեցին մեծ է Վահանից (Փարպեցի, էջ 188), իսկ երկրորդ՝ այդ դեպքում Փարպեցին 455-ին ոչ թե 17—18 տարեկան կլինի, այլ՝ 9—11, ինչպես ասել ենք արդեն: Այդ էլ չի կարող լինել, որովհետև տվյալ թվականին այդպիսի տարիք ակտիվ և ուժեղ Վահանը և ուրիշ Միհրդոն Փարպեցին պետք է մի քանի տարով մեծ լինի Վահանից, որպեսզի կարողանա գրել. «... Բէպէտ և քստ տիոց աւագադոյնի քան զձեզ էաք, այլ սննդակից էաք ձեզ և խաղակից, կրելով ի խաղ դարձանելիս ձեր զկնի ձեր» (Փարպեցի, էջ 188: Ընդգծումը մերն է—Չ. Ն.): Այս, Փարպեցին պետք է շեշտված չափով մեծ լինի, որպեսզի խաղերի, մեր կարծիքով ուղղակի խաղերի, զինավարժությունների ժամանակ կարողանա նրանց ետևից կրել նրանց «արկանելիքը»,

այն է վերնազգեստներ՝ պատմուճաններ, թիկնոցներ և այլն: Բացի այդ, համոզված ենք, որ Փարպեցին «արկանելիք»-ից բացի, զինավարժությունների, իսկ հետո նաև որսերի ժամանակ վերցրել է և նրանց զենքերը՝ վահան, տեգ, նիզակ և այլն, կատարելով յիկնապան-զինակրի պարտականություններ: Մեզ այդ համոզման են բերում պատմագրի գրվածքների հետևյալ խոսքերը, որ նա գրում է շորս եղբայրների հասցեն. «... ի նետաճգութեան զեղացկածից և դիպցուցողք, յորս՝ թեթևաշարժք և նախասպանք, յերկուցունց ձեռաց աշողակք, և յամենայն կողմանս ուղղակիք և շնորհակցք...» (Փարպեցի, էջ 11): Այսպիսի տողեր կարող է գրել այն անձը, որը ինքն անմիջապես մասնակցել է այդ որսերին: Իսկ եթե մասնակցել է, ապա անպայման կրել է նաև նրանց զենքերը: Որ իրոք, Փարպեցին շեշտված չափով մեծ է եղել մամիկոնյան ուսուրերից, այդ երևում է «աւագադոյնք» բառի օգտագործումից: Պատագիրն ինքն էլ ցանկացել է շեշտել իր ավագությունը նրանց նկատմամբ, օգտագործելով այդ բառը՝ շատ մեծ էինք, այլապես կգրեր «աւագ էաք», այն է՝ «մեծ էինք»: Որ Փարպեցին շեշտված չափով մեծ է եղել նրանցից, երևում է նաև հետևյալ տեղեկությունից. «Հարցցին քստ մարմնոյ զհայրուրեան իմոյ խրատս և զքստ հոգւոյ զվարդապետութեան իմոյ զքան...» (Փարպեցի, էջ 195: Ընդգծումը մերն է—Չ. Ն.): Պատը երևում է, որ «հայրություն» բառն օգտագործված է ավագության իմաստով: Փարպեցին այնքան մեծ է եղել Վահանի կրտսեր եղբայրներից, որ հետագայում նրանց «հայրական խրատներ» է տվել: Ահա նման մի ավելակություն. «... և պատուէին (Վահանի եղբայրները—Չ. Ն.) որպէս և զհայր...» (Փարպեցի, էջ 195): Այս բոլորից հետո, քստ իս, րնդունելի չէ Գ. Նալբանդյանի այն տեսակետը, թե 455-ին Փարպեցին եղել է 12—15 տարեկան, նամանավանդ, այդ հաստատելու համար նրա բերած փաստարկները¹⁸:

Այնուհետև, եթե ընդունենք, որ Մ. Նալբանդյանի հաղորդած 446 թվականը տպագրական վրիպակ է, ինչպես այդ կտեսենք հետո, որի տեղ պետք է դնել 436 թվի, ապա այդ դեպքում 455-ին Փարպեցին կլինի 19—21 տարեկան, որը չի կարող «սննդակից» և խաղակից լինել 7—11-ամյա իշխանորդներին: Անկախ այդ վրիպակից, Փարպեցին այդ թվականին 18 տարեկանից ավելին չէր կարող լինել, այլապես չէր կարող գրել. «Զկեալ զիմ ի տղայութեան»՝ զայն տէրդ իսկ ինքնին քաջ գիտէ» (Փարպեցի, էջ 187):

¹⁸ Գ. Նալբանդ, էջ 6—7.

Մինչև 18 տարեկան հասակ ունեցող պատանու համար մի փոքր տանելի է ստղայու-
թյունը բառի օգտագործումը, բայց նրանից
բարձր՝ տանելի չէ, իսկ եթե ընդունենք, որ
455-ին նա 17—18-ամյա պատանի էր, ապա,
պնդելով պետք է ծնված լինի 438—439 թ. թ.։
Ահա այստեղ հարկ է ուղղել վերոհիշյալ
տպագրական սխալը։ Մ. Նալբանդյանի նույն
աշխատության ձեռագիր-ինքնագրում, որ-
պես Փարպեցու ծննդյան տարի, նշված է 440
պես Փարպեցու ծննդյան տարի, նշված է 440
թվականը¹⁶։ Այստեղ էլ սխալն այն է, որ
հենց ըստ Նալբանդյանի հաշվման սխալների,
Փարպեցին 455-ին կլինի ոչ թե 17—18, այլ՝
16—18 տարեկան։ Ընդհանրապես, Մ. Նալ-
բանդյանի հաշվման սխալները սխալ է և իր
մեջ մեկ տարվա կորուստ է պարունակում։
Որևէ անձի տարիքը որոշելիս պետք է դեկա-
վարվել ոչ թե տրված թվից հաշվման սխա-
լումով, այլ՝ հաջորդ թվից հաշվման կամ
գումարման ու հանման սխալներով։ Այս սխա-
լումով դեկավարվելով՝ ամփոփենք մեր
մտքերը։ Այսպես, մենք տեսանք, որ 455
թվականին Փարպեցու առավելագույն տարի-
քը կլինի 18, բայց նա այդ թվականին կա-
րող է լինել նաև 15—16-ամյա պատանի,
ուրեմն, նրա նվազագույն տարիքը կլինի 15
տարեկան։ Այս հաշվով, Ղազար Փարպեցին
ծնվել է 437—440 թվականներին։ Ահա, մեր
կարծիքով, Փարպեցու ծննդյան ամենահա-
վանական թվականը։

Իսկ ինչ վերաբերում է նրա ծննդավայրին,
այսպես ավելորդ կլինե՞ր այդ մասին երկար խո-
սել, եթե դա էլ կասկածանքի տակ առնված
չլինե՞ր այդ հարցի որոշ ուսումնասիրողների
կողմից։

Ինչպես մեր մատենագիրների մեծ մասը
սովոր է իրեն կոչել իր ծննդավայրի կամ այն
վայրի անունով, որտեղ անցկացրել է իր գոր-
ծունեության մեծ մասը, այնպես էլ Փարպե-
ցին իրեն կոչել է իր հայրենի գյուղի անունով
(Փարպեցի, էջ 5), այն է՝ պատմական Այ-
րարատի Արագածոտն դավառի Փարպի գյու-
ղը (այժմ Աշտարակի շրջանի Փարպի գյու-
ղը)։ Եվ միանգամայն իրավացի է Մ. Նալ-
բանդյանը, երբ գրում է. «... մեր պատմու-
թյան մեջ, ակնառուոր տոհմի մարդիկը ունին
իրենց տոհմային անունը և շնն կոչվում
ենակված գիւղի կամ քաղաքի անունով, ինչ-
պես Հովհան Մանգակունի, Աղան Արծրունի
և այլն, իսկ երբ չունին մի այդպիսի տոհ-
մային անուն, այն ժամանակ՝ խորհնացի,

Տարոնեցի, Փարպեցի և այլն»¹⁷։ Որ Փարպին
պատմագրի ծննդավայրն է և ոչ իր գործու-
նեության վայրը, երևում է նրանից, որ մենք
դեռևս պատանի Ղազարին տեսնում ենք
Փարպիից շատ հեռու՝ Վրաստանում (Փար-
պեցի, էջ 188 և 196)։ Դրանից հետո մենք
նրան տեսնում ենք այլ և այլ տեղերում՝
Հունաստանում, Շիրակում, Սյունիքում, Ադ-
վանքում, Վաղարշապատում, Ամիդում, բայց
Փարպիում և ոչ մի անգամ (Փարպեցի,
էջ 185, 186, 187, 195 և 196)։ Որ Փարպին
պատմագրի ծննդավայրն է, երևում է նաև
նրանից, թե նա ինչպիսի՝ ոգևորությամբ ու
հիացմունքով, ինչպիսի՝ շքրմ սիրով է նկա-
րագրում Այրարատյան աշխարհի բնությունը-
նը՝ նրա հարուստ կենդանական և բուսական
աշխարհը, նրա զեղեցկանիստ վայրերը, նրա
կենսալից առօրյան (Փարպեցի, էջ 9—11)։
Դա նրա հայրենի ծննդավայրի գովերգումն
է, ուր նա անց է կացրել իր մանկության
տարիները։ Եվ վերջապես, մեր հետագա ժա-
մանակաշրջանի պատմիչները ևս Փարպեցուն
հիշում են «Ղազար»¹⁸, «Փարպեցի»¹⁹ և
«Փարպեցի»²⁰ անուններով։ Այս բոլորից հետո
կարելի է հաստատապես պնդել, որ «Փար-
պեցի» անունը երա հայրենի Փարպի գյուղի
անունից է ծագել և դա երա ծննդավայրն է։

Սակայն, ի՞նչն էր ստիպել պատանի Ղա-
զարին այդպես վաղ հասակում թողնել իր
հայրենի ծննդավայրը և ապաստան գտնել
Գուգարքում՝ Աշուշի ռդեշխի տանը։ Մենք
տեղեկություն չունենք այդ մասին։ Թերևս նա
վաղ հասակում զրկվել էր ծնողներից և
կյանքի հորձանուտը նրան նետել Վրաստան,
այնտեղից էլ Ցուրտա՝ Աշուշայի տունը...
Մենք չունենք ստույգ տեղեկություն և ոչինչ
ավելացնել չենք կարող, սակայն, այն հան-
գամանքը, որ նա մանկությունից իսկ ստիպ-
ված է եղել զրադվել իր ապրուստի միջոցնե-
րի հոգացողությամբ (Փարպեցի, էջ 196),
մեզ այդ ենթադրությանն է բերում։ Բայց
նա վաղ հասակից մտերմորեն կապված է
եղել Մամիկոնյան և Կամսարական իշխանա-
կան տների հետ (Փարպեցի, էջ 201)։ Մտեր-
մական այդ կապը, ինչպես և մեկ-երկու այլ
հանգամանքներ, որ քիչ հետո կրեքենք
ստորև, առիթ են տվել ուսումնասիրողների

¹⁶ Մ. Նալբանդյանի «Ղազար Փարպեցու թղթի աշ-
խարհարար թարգմանության» ձեռագիրը, Երևանի գրա-
կանության և արվեստի թանգարան, Նալբանդյանի
ֆոնդ, 10—1 (Ս), (1862), էջ 40։

¹⁷ Նալբանդյանի ֆոնդ, 10—1 (Ս), էջ 40։ Սույն տո-
ղերը հրատարակության մեջ չկան, իսկ ձեռագրում էլ
ուղղամիտ գծերով չենք կարող հանդիպել։ Մենք նպատա-
կահարմար գտանք վերականգնել դրանք։

¹⁸ Սանդախտի Տաթևեցույ Ասողկան, «Պատմու-
թյան տեղեկական», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 74 և
Կ. Գաճաճեցի, էջ 16 և 17։

¹⁹ Կ. Գաճաճեցի, էջ 21։

²⁰ Սանդախտի Տաթևեցույ, էջ 7, 80 և 82։

մեծ մասին, առանձնապես պրոֆ. Խալաթյանին, Փարպեցու և Մամիկոնյաններին միջև տեսնել ժամրձավորա կամ ճշմարտությունը, Փարպեցուն համարել ոչ միայն ժողովրդի առն ունևորին, այլև թագաւ կամ յազգէ ազնուացա՞նք²¹,

Այս թեզի առաջամարտիկը Մ. էմինն էր, որն առաջին անգամ գրեց. «Թէև անյայտ է մեզ անուն ծնողաց նորա (Փարպեցու—Չ. Զ.) սակայն՝ որպէս երեկ ականաւորը ոմանք էին և հարուստը...»²², Այնուհետև, այս թեզը հաստատելու համար բերում է մի շարք պատճառարանութիւններ, որոնք համոզեցուցին չեն էմինի այս թեզի ու այն հաստատելու համար բերված փաստարկումների դեմ առաջին անգամ դուրս եկավ Մ. Նալբանդյանը, գրելով, թե ականավոր տոհմի մարդիկ ունեն իրենց տոհմային անունը, մինչդեռ, այդպիսիք չունենողները կոչվում են իրենց բնակված վայրի անունով։ Սակայն ափսոս, որ նա հենց դրանից անմիջապէս հետո նահանջում է իր վերասածից՝ գրելով. «Բայց սակայն, մենք երբեք չենք ուզում ասել, թե Փարպեցին ծագաւ մարդու, կամ ազգատի գավակ էր. մեզ հայտնի չէ այդ, որովհետև պատմութիւնը լուռ է այդ մասին. միայն, այս է մեր ասածը, թե պ. էմինի մեջ բերած պատճառարանութիւնները չեն կարող և թույլ են Փարպեցին ականավոր և հարուստ մարդերի գավակ եղած ենթադրելու»²³,

էմինի և Նալբանդյանի միջև սկսված այս առաջին բանավեճը հետագայում լռեց և ընթացավ մի ուղղութիւնով՝ էմինի տեսակետը հազթանակեց և իր կողմը գրավեց ուսումնասիրողների գերակշիռ մասին։ Թերևս, այդ տեղի ունեցավ Նալբանդյանի վերոհիշյալ նահանջի պատճառով, իսկ ինչ վերաբերում է այդ հարցի մասին պատմութիւնը լուռութեամբ, ապա քիչ հետո կտեսնենք, որ այդ պատմութիւնը այնքան էլ լուռ չէ, որքան պատկերացնում է Մ. Նալբանդյանը։

Այն, էմինի տեսակետը ոչ միայն հազթանակեց, ոչ միայն փր շուրջը համախմբեց ուսումնասիրողներին, այլև՝ իր փայլուն զարգացումն ստացավ Խալաթյանի մոտ, որ տեղ Փարպեցին դարձավ ոչ միայն ականավոր և հարուստ անձանց որդի ու ազնվական, այլև՝ ազգակից դարձավ Մամիկոնյաններին։ Հետաքրքիրն այն է, որ նա մի օր էլ ազգակից դարձավ Արծրունյաց տոհմին։ Շնորհիւ նորին եւ (Փարպեցին—Չ. Զ.) որևէ ազգակցութիւն կամ մեծավոր կապ է ունեցել Մա-

միկոնյան կամ Արծրունի տոհմի հետ,— դրում է ականավոր Մ. Արեղյանը,— քանի որ Հայկական Մամիկոնյանի այրին՝ Չուրկ, ... Աղան Արծրունու թուրք, իր շօք երեսնեւեքի ճետ հավասար ունեցել է վրաստանում և Ղազարին...» (ընդգծումը մերն է—Չ. Զ.)։ Նախ՝ երեք երեսնեւեքն էին սնուցվում, իսկ երկրորդ՝ մի՞թե սնուցման մեջ ազգակցութիւն տեսնելու իրավունք ունենք մենք։

Սակայն, սկզբից եեթ հայտնում ենք, որ ընդունելի չեն վերոհիշյալ դրույթները, քանզի դրանք հաստատելու համար մեջ բերած ուսումնասիրողների փաստարկումները համոզեցուցին չեն և բացի այդ, ծանոթանալով հանգամանքներին և Փարպեցու տեղեկութիւններին, մենք միանգամայն այլ եզրակացութեան ենք գալիս։ Քանի որ այդ դրույթներն իրենց առավել զարգացումը գտել են Խալաթյանի մոտ, ուստի նպատակահարմար ենք գտնում սկսել հենց նրա փաստարկումներից, ընթացիկ կարողանանք հերքել դրանք, նաև ժխտած կլինենք այդ դրույթները պաշտպանողների համարյա բոլոր փաստարկները։

Այսպես, Փարպեցու ազնվական ծագումն հաստատելու համար Խալաթյանը մեջ է բերում մի շարք հանգամանքներ, որոնք միանգամայն անհավանական են²⁴, Բայց նա բերում է երկու այլ փաստարկներ, որոնք ամենակարևորներն են նրա փաստարկումների մեջ և մանկայն ուշադրութեան արժանի, սակայն նույնպէս ոչ ընդունելի։ Անվանի հայագետը այդ փաստարկները վերցրել է Փարպեցու այն տեղեկութիւնից, երբ վերջինս ինքն իր մասին գրում է Վ. Մամիկոնյանին. «Եւ դու յայց ելեալ խնդրել զիս, և գտեալ յայտարհին յայնմ (Սյունիքի մասին է խոսքը—Չ. Զ.)՝ ամերի տուն, ոչ իբրև զաղֆատ զոգի կազմանէն և ի մանկատուն, և ոչ իբրև օտար զոգի էլ էլ և կամ զծառայ ռերուր...» (Փարպեցի, էջ 188)։ Ընդգծումը մերն է—Չ. Զ.)։ Ընդգծած բառերի առաջին խումբը կովան է հանդիսացել պրոֆեսորի համար՝ Փարպեցուն համարելու թունկորի որդի, իսկ երկրորդը՝ ազգախառն տոհմակցութիւն տեսնելու Փարպեցու և Մամիկոնյանի միջև²⁵։

Ասացինք, որ այս երկու փաստարկումներն էլ ընդունելի չեն։ Ահա թե ինչու՝ Խոսենք առաջինի մասին։

Երբ 486 թվականին Վ. Մամիկոնյանը դառնում է Հայոց մարդպան (Փարպեցի, էջ 178), նա վաղարշապատի Ս. էջմիածին Կաթողիկէ Մայր Նիկեացու և նրան կից վանքերի միաբանութեան՝ հոգևորական այդ կարևոր կենտրոնի, հոգաբարձութիւնը հանձ-

²¹ Գ. Խալաթյան, էջ 4։

²² Մ. էմին, «Թղթի» «Առաջաբան», էջ 18 և «Երկա-սիրութիւններ», էջ 174—175։

²³ Մ. Նալբանդյան, «Առաջիկ», էջ 40։

²⁴ Գ. Խալաթյան, էջ 3—4։

²⁵ Գ. Խալաթյան, էջ 3։

իրավունք է տալիս Փարպեցուն դրելու Վահանին, թե դու ինձ գտար և տուն բերեցիր ոչ որպես բեզնից մի ոմն օտար և կամ մի ոմն ծառա: Իրավացի չէ՞ նա, չէ՞ որ նրանք երկուսն էլ գտնվում են մի ընդհանուր՝ աղնը-վական դասակարգում, միայն այն տարբերությամբ, որ նրանց պարտականություններն ու պաշտոններն են տարբեր: Մրանցից բացի, մեր ուշագրությունն ակամա բեռնվում է նաև թի ծառայությունն աշխարհիսն քառերի վրա: Արդյոք այս բառերը մեզ իրավունք չեն տալիս ենթադրելու, որ Փարպեցին իր կյանքի սկզբում գտնվել է ծառայական դրություն մեջ, օրինակ Աշուշ Բոգոշյանի տանը, որից նա ազատվել է հետագայում՝ հոգևորական ձեռնադրվելուց հետո, երբ նա արդեն ծառայությունում չէր: Մեր այս միտքը չի՝ հաստատվում, արդյոք, Փարպեցու այն տեղեկությունները, թե, երբ նա Աշուշյանի տանը «սենդակից» և խաղակիցք էր Վահանի և նրա եղբայրների հետ, խաղի ժամանակ կրում էր վերջիններիս «սարկանիքը» (Փարպեցի, էջ 188): Եթե նա տոհմակցություն ունենար Մամիկոնյանների հետ կամ ընդհանրապես ազնվական ծագում ունենար, ապա խոսք կարող էր լինել «սարկանիքը» կրելու մասին, մի՞թե այդ դերի համար չկար ուրիշ մի ծառա, եթե այդ ծառան հենց ինքը՝ ապագա պատմագիրը չէր, որն իր ջանասիրտության, նվիրվածության, շնորհալիության, ուշիմության, առաջադիմության և ազնիվ ծառայելու շնորհիվ գրավել էր իրեն շրջապատողների սերն ու համակրանքը: Եվ հետո, մի՞թե Մամիկոնյանների հետ ազգակցություն ունեցող կամ ընդհանրապես ազնվական ծագում ունեցող մարդուն կհամարձակվեն բանասարկել և բացելուց այնքան խիստ հալածանքների ենթարկել, որ նա ստիպված լինի փախչել հայրենիքից (Փարպեցի, էջ 186): Եվ այդ այն ժամանակ, երբ Մամիկոնյանը թելադրող են եղել Հայաստանում: Մի՞թե Մամիկոնյանների հետ տոհմակցություն ունեցող անձնավորությանը կհամարձակվեն բանասարկել հենց այդ տան ծառաները, թեև իրող դրանք լինեն ավագ ծառաներ, և ինչ որ մի ավագ ծառան՝ դարձյալ այդ տանից (Փարպեցի, էջ 187): Եվ հետո, Մամիկոնյան անձնավորությանը ի՞նչ պատճառաբանությամբ ոմանք, և այն էլ հենց այդ տան համար, կհամարեն «աւելորդ անոթ» (Փարպեցի, էջ 195): Մամիկոնյանը Մամիկոնյան տան մեջ «աւելորդ անոթ», և այդ այն դեպքում, երբ այդ «Մամիկոնյանը» մի հիանալի անձնավորություն է: Այնուհետև, մի՞թե Մամիկոնյանը Մամիկոնյանի կամ ընդհանրապես, ազնվականը ազնվականի առջև այն-

քան կստորանա, այնքան կնվաստանա, որ իրեն կհամարի «ամենեցուն կղկղանք» (Փարպեցի, էջ 187), ապա էլ ո՛ւր է մնում ազնվականի արժանապատվությունը... Բացի այդ, եթե Փարպեցին Մամիկոնյան լիներ, ապա անպայման կնշեր այդ փաստը: Պարագոտը նրան ազատություն է շնորհել և այդ նա նշում է հպարտությամբ, ապա ինչպիսի՞ հպարտությամբ կնշեր, եթե ի ձեռք Մամիկոնյան կամ ազնվական լիներ: Եվ վերջապես, ցույց տալու համար, որ Փարպեցին ո՛չ միայն չի ունեցել ազնվական ծագում, այլ, ընդհանրապես, հասարակ ծագում է ունեցել, մենք նորից ու նորից դիմում ենք իրեն՝ հեղինակին, որը միանգամայն պարզ կերպով իր ծագման մասին գրում է. «Եւ ես անպիտանս... առն եղեալ Երդի...» (Փարպեցի, էջ 187: Ընդգծումը մերն է—Ջ. Ն.): Բայց հետաքրքիրն այն է, որ Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանը հենց այդ բառերից զալիս է այն եզրակացություն, թե Փարպեցին ազնվական դասակարգից էր. «Բնիկ Արարատի Փարպի գիւղեն, առն եղեալ Երդի... որ է ըսել ազնվական դասակարգեն, և ինքզինքը միշտ Կամսարականներուն կենակից, և Վահանի ոչ օտար ո՞ք ցուցնելեն կհետեի թե, ազգականություն մրն այ ունեցած է Մամիկոնյանց և Կամսարականաց հետ»²⁰ (ընդգծումն իրենն է): Մամիկոնյանների կամ Կամսարականների հետ ազգակցություն ունենալու գրույթը հերքելիք, իսկ ինչ վերաբերում է «առն եղեալ Երդի» բառերի նշանակությունը որպես որևէ անձի ծագում ազնվական դասակարգից հայտարարելուն, զարմանք է պատճառում: Ո՞վ է ասել, թե սմարդու որդի լինելը՝ ազնվական լինելու հատկանիշ է: Զե՞ որ բոլորն էլ մարդիկ էին, միայն այն տարբերությամբ, որ ազնվականն ունեն իր տոհմանունը, իսկ հասարակ, ստորին ծագման անձը հետագայում որևէ միջոցով ազատվել էր իր սկզբնական դրությունից, իսկ եթե ոչ, ապա ռամիկ, շինական և նման տիտղոսներով. գոնե այդպես է մեր ողջ մատենագրության մեջ: Այս բանից հետո նորից ու նորից պնդում ենք, որ Ղ. Փարպեցու սոցիալական ծագումը զալիս է ոչ թե ինչ որ վերնախավային կամ ազատ դասակարգից, այլ՝ հասարակ, ստորին, աշխատավոր գյուղացիության դասակարգից: Նա ծնվել է աշխատավոր գյուղացու ընտանիքում:

²⁰ Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատմա», Ա, Կոստանդնուպոլիս, 1912 թ., էջ 483.



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Բ Ո Ւ Մ

Լ ՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Հակոբ Պարոնյանի ծննդյան 120-ամյակը— Ամբողջ Հայաստանով մեկ լայնորեն նշվեց ակա՛նավոր հայ գրող-երգիծաբան Հակոբ Պարոնյանի ծննդյան 120-ամյակը։ Կառավարական Բանդիսավոր Բոքեյանական նիստը տեղի ունեցավ մայիսի 25-ին, Երևանի օպերային թատրոնում, մասնակցությամբ կառավարության անդամների, պետական և հասարակական գործիչների, գրականության և արվեստի աշխատողների։ Հ. Պարոնյանի կյանքի և գրական գործունեության մասին պեկուցումով Բանդեսեկավ թատերագիր Գրիգոր Տեք-Գրիգորյանը։ Հանդիսավոր նիստից հետո Երևանի և Լենինականի դրամատիկ թատրոնների դերասանները կատարեցին հատվածներ Հ. Պարոնյանի ստեղծագործություններից։

Մեծանուն գրողի հոգեյանի առթիվ տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը, ուր մի շարք պեկուցումներ կարդացվեցին Հ. Պարոնյանի վերաբերյալ։ Հետաքրքրական էր գրականագետ Գ. Ստեփանյանի պեկուցումը Պարոնյանի մինչև այժմ անհայտ մնացած գործերի մասին։

Գրողի հիշատակը հարվածացնելու համար, Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնը անվանված է Հ. Պարոնյանի անունով։

Հայաստանում Պարոնյանի երկերը հրատարակվել են բազմիցս։ Լույս է ընծայվել նրա երկերի յոթվ ժողովրդածուն 11 հատորով։ Նախանցյալ տարի ակադեմիայի գրականության ինստիտուտը ձեռնամուխ եղավ Հ. Պարոնյանի ստեղծագործությունների գիտական հրատարակության 10 հատորով։ Արդեն լույս են տեսել 1-ին, 2-րդ և 3-րդ հատորները։

Հորեյանի արքին, Մոսկվայի Երմուկովայի անվան թատրոնում օուաբեն լեվով բեմադրվեց Հ. Պարոնյանի «Պաղտաար աղաբար» կատակերգությունը։ Ներկայացում

անցավ մեծ հաջողությամբ։ Գլխավոր դերերը կատարում էին թատրոնի լավագույն ուժերը՝ Ռուսաստանի ժողովրդական արտիստ Վ. Յակուտը (Պաղտաար), վաստակավոր դերասանուհի Լ. Օրդանսկայան (Անուշ), ժողովրդական դերասան Վ. Լեկարևը (Օգսեն) և ուրիշներ։ Ներկայացման բեմադրիչն է Ստեփանյանի անվան թատրոնի գլխավոր բեմադրիչ Վ. Աճեմյանը, նկարիչը՝ Ս. Ստեփանյանը, երաժշտական ձևավորումը կատարել է կոմպոզիտոր Գ. Եղիապարյանը։

«Պաղտաար աղաբար» համարվում է Երմուկովայի անվան թատրոնի լավագույն բեմադրությունը 1963—1964 թատերաշրջանում։ Այդ ներկայացումը թատրոնը մտցրել է ամառային շրջապտուկի խաղացանկի մեջ և ցուցադրելու է Ուրալի քաղաքներում։

Հայ արվեստի և գրականության շարաքը Էստոնիայում։— Մայիսի 30-ից մինչև հունիսի 7-ը Էստոնիայում տեղի ունեցավ հայ արվեստի և գրականության շարաք։ Այդ օրերին էստոնական քաղաքներում և գյուղերում կատարյալ տոն էր, համատարած խանդավառություն։ Էստոնացի ժողովուրդը բացառիկ ջերմ, եղբայրական ընդունելություն ցույց տվեց հայկական արվեստի և գրականության ներկայացուցիչներին։

Արվեստի և գրականության շարաքին մասնակցեցին Երևանի պետական օպերայի և Հայկական ֆիլհարմոնիայի լավագույն խմբերն ու մենակատարները, մի մեծ խումբ գրողներ, կոմպոզիտորներ, նկարիչներ, թվով շուրջ 300 մարդ։ Շարաքավ ընթացքում նրանք տվեցին շուրջ 40 համերգ, հանդես գալով Էստոնիայի քաղաքներում և գյուղերում։ Ամբողջ Էստոնիայով մեկ հնչում էր հայկական «Ժիծեհնա» երգը, որը մեծ ժողովրդականություն է վայելում երգաեք այս ժողովրդի կողմից և կատարվում է էստոնացիների կողմից խմբովին։

Այդ օրերին էստոնիայի մայրաքաղաք Տալլինում բացվեց Ռայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես, որին ներկայացվել էր շուրջ 150 կտավ։ Տալլինում և երկրի մյուս քաղաքներում կայացավ Ռայկական կինո-ժապավենների ֆեստիվալը։

Հայ գրողները և կոմպոզիտորները մի շարք Ռանդի-պուստեր ունեցան ժողովրդական լայն պանդածների Ռետ, Ռանդես զալով իրենց ստեղծագործությունների կատարմամբ։

Բացառիկ ջերմությամբ անցավ Ռայ արվեստի և գրականության վարպետների Ռանդիպուստ Տարտու քաղաքի աշխատավորների և հատկապես այդ քաղաքի Ռաչակավոր համալսարանի դասախոսական կապի և ուսանողության Ռետ։ Այս համալսարանում և սովորել մեր Արովյանը։ Եվ ոչ միայն Արովյանը։ Ինչպես պարզել են այս ռաու-նական հաստատության արխիվի աշխատողները, Տարտուի համալսարանում սովորել են շուրջ 200 հայեր, որոնց թվում Ստեփանոս Նալպարյանը, Ռաֆայել Պատկանյանը, Գևորգ Դոդոխյանը։ Հայ վարպետների այցելության առթիվ, համալսարանի աշխատողները պատրաստել էին խաչատուր Արովյանի և մյուս Ռայ գործիչների ուսանողական կյանքին վերաբերող արխիվային նյութերի ցուցահանդես։ Գուցահանդեսի դիտումից Ռետը, համալսարանի մեծ դահլիճում կայացավ Ռանդիսավոր ժողով։ Համալսարանի ժեկտորը ռոզմանց Ռայ Ռյուրերին և ջերմորեն դրվատեց Ռայ մշակույթը ու վեր հանեց իս. Արովյանի դերը Ռայ մշակույթի պարզացման գործում։ Նա հայտնեց, որ Տարտուի կենտրոնական փողոցները մեկը այսուհետև կոչվելու է խաչատուր Արովյանի անունով։

Հայ արվեստի վարպետները համալսարանին նվիրեցին Արովյանի մարմարակերտ կիսանդրին (գործ՝ քանդակագործ Ն. Նիկողոսյանի) և համալսարանի ժեկտոր Ֆ. Կլեմենտին ու էստոնիայի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Պ. Արիստին, Հայաստանի լուսավորության մինիստրության անունից, հանձնեցին իս. Արովյանի անվան կրթահանձնանք՝ Ռայ-էստոնական մշակութային կապերի և աջակցության ազդեցության ընագավառում մատուցած ծառայությունների համար։

Էստոնական կառավարության որոշմամբ, իս. Արովյանին վերաբերող թվոր արխիվային նյութերը, որոնք 130 տարի շարունակ պահվում էին Տարտուում, հանձնվեցին Հայաստանին իբր նվեր։ Մինչև այժմ Հայաստանում սյահվում էին այդ նյութերի ֆոտոպատճենները. այժմ ֆոտոպատճենները կուրարկվեն Տարտու, իսկ Երևանում կպահվեն բնագրերը։

Այդ օրը Ռայ արվեստի վարպետները երկու մեծ համերգ տվեցին Տարտուում՝ մեկը քաղաքում, մյուսը համալսարանում։

Առաջիկա աշնանը Երևանում տեղի ունենա էստոնական արվեստի և գրականության շաբաթ։

Հայ կոմպոզիտորներն արտասահմանյան երկրներում, — Հաճախակի են դարձել Ռայ կոմպոզիտորների շրջագայությունները և ելույթները արտասահմանյան տարրեր երկրներում։ Սա վկայում է նրանց համբավի և ստեղծագործության հաջողության մասին։

Հայ կոմպոզիտորների 5 հոգուց բաղկացած մի խումբ այս զարնան մասնակցեց Ֆլորենցիայում կայացած երաժշտական փառատոնին (ֆեստիվալ)։ Անցյալ տարի կոմիտասի անվան կվարտետի Ռետ ԱՄՆ-ում կատարած շրջագայությունից հետո, վերջերս Լոնդոն մեկնեց երիտասարդ տաղանդավոր կոմպոզիտոր Է. Միրզյանը։ Այնտեղ նա մասնակցեց այն համերգներին, որոնց ընթացքում կատարվեցին նրա հանրածանոթ «Լարային կվարտետ»-ը, որը հաջողությամբ կատարվում է նաև Նորվեգիայում, Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, ժապոնիայում, Գ.Գ.Ռ-ում։

Վերջերս Գ.Գ.Ռ-ից վերադարձավ կոմպոզիտոր Ավետ Տերտերյանը, որն այնտեղ աշխատում էր իր ապագա դպրալի վրա։ Օպերան գրվում է գերմանացի Ռեդիակ Բ. Բրեխտի «Կուրած մայրիկը» պիեսի թվահրակության համաձայն։ Մի քանի ամիս առաջ Ֆրանսիայի մի շարք քաղաքներում Ռայ արվեստի վարպետների կողմից տրված համերգներին իրենց մասնակցությունը բերին Արնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը և Ռաչիկ Ավետիսյանը։

Անցյալ զարնանը Ռայ կոմպոզիտորները համերգներով և առանձին ելույթներով հանդես են եկել Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում, Չեխոսլովակիայում և այլ երկրներում։

Լենինականի դրամատիկ թատրոնի 100-ամյակը. — Առաջիկա 1965 թվականի մայիսին լրանում է Լենինականի Ա. Մամյանի անվան պետական դրամատիկ թատրոնի 100-ամյակը։ Հայաստանի թատրոնային հասարակայնությունը պատրաստվում է լայնորեն նշելու այս տարեթիվը։ 99 տարի առաջ, տեղի թատերական ինքնագործ խումբը տվեց առաջին ներկայացումը Լենինականում (Ալեքսանդրոպոլում), խաղացվեց այն ժամանակ Ռայտի «Շուշանիկ» դրաման։

Հորեյանական տարեթվի առթիվ թատրոնը պատրաստելու է մի քանի նոր բեմադրություններ, որոնց թվում Գ. Սունդուկյանի «Պեպո»-ն, Շեքսպիրի «Վինտուրի կանայք» և տեղացի թատերագիր Լ. Միքայելյանի «Արտավազ Բ» ողբերգությունը։ Ծառերը ներկայացումներով հանդես կգա Երևանում։ Հորեյանի առթիվ լույս կտեսնի առանձին ժողովածու՝ «Լենինականի թատրոնի ուղին» խորագրով։

Երաժշտական դպրոցի 40 տարին. — Լրացավ Լենինականի Նիկողայոս Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի 40 տարին։ Դա հանրապետության հնագույն երաժշտական զբաղմունքից մեկն է, որն իր գոյության ընթացքում տվել է բազմաթիվ գործիչներ երաժշտական մշակույթի բնագավառում։

Նշանակալի տարեթվի առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ մասնակցությամբ Երևանի, Լենինականի, Կիրովականի և այլ վայրերի երաժշտասեր հասարակայնության ներկայացուցիչների։ Եղան բազմաթիվ ողջույներ դպրոցի մանկավարժական կապի անունով և պարգևատրումներ։ Երեկոն ավարտվեց դպրոցի մանկավարժների և բարձր դասարանների աշակերտների կողմից տրված համերգով։

Վիլյամ Ենքսպիրի երկերի նոր հրատարակությունը.— Հայաստանի պետական հրատարակչությունը ձեռնամուխ է եղել Վիլյամ Ենքսպիրի երկերի հրատարակությանը՝ երկրի սովորյալ հատորներով:

Արդեն յույս է տեսել առաջին հատորը, որի մեջ մտնում են Ռեդինակի Ռեռակալ աշխատությունները՝ «Համկետ», «Օթեչլո», «Մակրեթ», «Լիր արքա», «Ռոմեո և Ջուլիետ», «Վենետիկի վաճառականը»:

Ինչպես հայտնի է, Վ. Ենքսպիրի առաջին և տաղանդավոր թարգմանիչն է Տիգրան Խան-Մասեհյանը: Բոլոր այդ թարգմանությունները մտել են սույն հրատարակության մեջ: Ենքսպիրի որոշ աշխատություններ, որոնք տեղ են գտնվում սույն հրատարակության մեջ, թարգմանվել են անգլերենից խաչիկ Դաշտենցի: Գիրքը ձևավորված է գեղեցիկորեն, սկզբում պետեղված է Վ. Ենքսպիրի գրամատիկ նկարը:

Արժեքավոր պատմական աշխատություն.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել գիտության վաստակավոր գործիչ, Ռեադեո և պատմաբան Ն. Մ. Տոկարսկու մեկ նոր աշխատությունը, որը կոչվում է «Ջրվեժ և Ողջաբերդ»: Գրքում հանրագումարի են բերված Ռեդինակի բազմամյա հետազոտական պեղումների արդյունքները համանուն քնակավայրերում, որոնք գտնվում են Երևանից ոչ հեռու, նախկին Կոտայքի, ներկայիս Արվիկայի շրջանում:

Այդ պեղումների հին եկեղեցիների պեղումների հիման վրա, Ռեդինակը հանգում է այն եզրակացության, որ տեղացի ջինարար վարպետները իրենց ժամանակներին կարողացել են յուրովի կառուցողական քարո խնդիրներ և անշուշտ, խոշոր դեր են խաղացել Հայաստանի ճարտարապետության կարգաթման գործում:

Նոր ջրմուղ Երևանի համար.— Ինչպես հայտնի է, Երևան ունի մեկ ընդհանուր ջրմուղի ցանց, որը սնվում է բազմաթիվ տարբեր աղբյուրներից ստացվող ջրերով: Այդ ջրով մատակարարվում են թե՛ մայրաքաղաքի բնակչությունը և թե՛ արդյունաբերական ձեռնարկությունները: Այս անհարմարությունը հիմնական պատճառն է հանդիսանում ջրի այն սակավության, որն սկզբվում է մայրաքաղաքում հատկապես ամառն ջրաբանում: Ու թեև վերջին 15 տարում քաղաքին տրվող ջրի քանակը քառապատկվել է, այնուամենայնիվ ջրի մարքը մնում է յուրովի հարցերից մեկը:

Այս տարվանից սկսված է քաղաքի, այսպես կոչված, արդյունաբերական ջրմուղի կառուցումը, որն ամբողջովին ապահովելու է Երևանի գործարանների ջրի կարիքը: Այս ջրմուղի կառուցումից հետո, մայրաքաղաքի ջրամատակարարման գործը մեծ չափով կբարելավվի: Գործարանները կդադարեն աղբյուրի ջուր գործածելուց: Առաջիկա 1965 թվականին նոր ջրմուղի առաջին հերթը ձևանմանի ջառագործման:

Հայաստանի երկաթուղային ճանապարհների բարելավումը.— Դժվարանցանի են Հայաստանի ոչ միայն խճուղային, այլև երկաթուղային ճանապարհները: Նրանց անցումը 'ն անդնդախոր ձորերով, թե՛ սարալանջերով,

քաղաքներ և լեռնանցքներով: Այսպիսի տեղանքներով գնացքները արդյո՞ք և անխափան վարելու համար հարկավոր են հույր քաղիչներ: Խիստին, դրանցից ամենահպրող էլեկտրաքարշերն են, որոնք հետպահեռ փոխարինում են շոգեքարշերին և ջերմաքարշերին:

Մոտ երկու տարի առաջ ավարտվեց Լենինական—Թբիլիսի ուղեմասի էլեկտրիֆիկացումը, որով այժմ բոլոր գնացքները Լենինականից սկսած վարում են էլեկտրաքարշերը, մինչև Մոսկվա և Լենինգրադ:

Ներկայիս աշխատանք է տարվում էլեկտրիֆիկացնելու Երևան—Լենինական ուղեմասը: Արդեն ավարտված է Երևան—Մասիս (Ուլուխանլու) հատվածի էլեկտրիֆիկացումը: Մինչև 1965 թվականը էլեկտրաքարշերը կերթեն նաև դեպի Լենինական:

Բարեկարգվում և ընդարձակվում է Երևանի երկաթուղային կայարանը: Կառուցվում են նոր գծեր, որոնք կայարանը կապում են խոշոր գործարանների հետ: Երկաթուղայինների համար կառուցվում են նոր, հարմարավետ բնակելի շենքեր:

Արդեն մեկ տարուց ավելի է, ինչ էլեկտրական գնացք գնում է մինչև Սևան: Այժմ Սևանից սկսած այդ գիծը երկաթաճվում է մինչև Ծովագյուղ (Չիրուխու), որի ջրէակայքում գտնվում է տուրիստական կայանը:

Գազի գործածությունը Հայաստանում.— Դեռ չորս տարի չկա, ինչ Հայաստանը ստացավ Ղարադաղի (Աղբրեջան) գազը: Այդ ժամանակաշրջանում, Երևանից բացի, բնական գազ են ստանում նաև հանրապետության ևս 10 քաղաքներ: Գազից օգտվող քաղաքների, այդ թվում նաև Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների 80 տոկոսը իրեն վառելիք օգտագործում են միմիայն գազ: Ներկայիս չուրջ 100 000 բնակարաններ օգտվում են բնական գազից: Մինչև ընթացիկ տարվա վերջը գազը կտրվի նաև Ալավերդի, Ստեփանավան, Առաջատ քաղաքներին, իսկ եկող տարի գազ կունենան Էջմիածինն ու Հոկտեմբերյանը:

Նկատի ունենալով գազի հսկայական պահանջը որպես արդյունաբերական հումք, որոշված է Անդրկովկասյան հանրապետություններին բնական գազ մատակարարել նաև Ստալինոպոլի մարզից (Ռուսաստան), Կովկասյան չեռնաշղթայի վրայով: Այս խնդիրը անհրաժեշտ է դառնում վանական դեռ նկատի առնենք, որ Աղբրեջանը (Ղարադաղը) հետազային հնարավորություն չափի ունենա այդ պահանջը լրիվ բավարարելու: Արդեն կառուցված է և գործում է Ստալինոպոլ—Օրդոնիկիձե—Թբիլիսի գազամուղը: Թբիլիսին իր հերթին միացած է Երևանի և Ղարադաղի հետ (Ղազախի վրայով) գոյություն ունեցող գծով: 1965 թվականի ընթացքում Ալավերդուց գազամուղի գիծ է անընկալվելու դեպի Ղազախ (Աղբրեջան), որով Արվետական Հայաստան մտնող գազամուղը ջրուջանականի կդառնա:

Երևանի կոյուղու մաքրման կայանը.— Երևանի կոյուղին մինչև այժմ չունի կեղտաջրերի մաքրման քիչ թե՛ ջատ կանոնավոր կայան: Կառավարության որոշմամբ, այս տարվանից սկսվել է այդ կայանի կառուցումը, որի համար հատկացված է մոտ 10 000 000 ռուբլի:

Կալանը լինելու է յուրովի մի խոշոր ձեռնարկություն: Կոլուշու կեղտաքերը մաքրումից հետո կգործածվեն դաշտերի ռազմական համար: Բացի այդ, կստացվի Վզալի քանակությամբ պարարտանյութ, որը նույնպես կօգտագործվի գյուղատնտեսության կառիքների համար: Կալանն իր սեփական կարիքների համար գործածելու է իր իսկ «արտադրած» մեթան գազը:

Իր կառուցվածքով, ծավալով և կատարելությամբ կալանը լինելու է առաջինը Անդրկովկասում: Նրա նախագիծը կապմել են Երևաննախագծի մասնագետները, Սոսկվայի մասնագետների օգնությամբ:

Նոր արտադրանք.— Սևանի ափին գտնվող համանուն ավանը հետզհետե հարստանում է իր արդյունաբերական նոր ձեռնարկություններով: Վերջերս այստեղ սկսեց գոր-

ծել նորակառուց մի գործարան, որն արտադրում է ապակու հատկություններ ունեցող գործվածքեղեն և թուղթ:

Գործարանը դեռ գտնվում է փորձարկման քրջանում: Նրա աշխատողները տակավին ուջի-ուշով սովորում են տիրապետել արտադրության եղանակներին, մի արտադրություն, որը միանգամայն նորություն է Հայաստանի համար: Արտադրանքը ստացվում է քիմիական եղանակով, պանպան նյութերի խառնուրդից:

Ապակեման այդ գործվածքն ու թուղթը լայնորեն գործածվելու են էլեկտրական արդյունաբերության մեջ, որպես էլեկտրական հաստ լարերի մեկուսիչ նյութ: Բացի այդ, նույն այդ գործվածքը օգտագործվում է ջինարարության մեջ, որպես ջերմությունը և ծալնը մեկուսացնող խիստ արժեքավոր նյութ:

